Գուշկինը մանուկ հասակում
Ցե. Գեյսմանի գրավյուրայից (1823)

891.71-93
Պ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՀԵՔԻԱԹՆԵՐ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐ

A 11037

ՄԻՀԱՅՈՐՅԱԿ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ • 1937

Երեք աղջիկ, երեք քույրեր,
Մանում էին մինչ ուշ գիշեր։
— Թե թագուհի դառնամ հանկարծ,
Աղջիկներից մեկը ասաց—
— Ցես կսարքեմ վողջ աշխարհում
Ուրախ մի քեֆ, լավ կերուխում։
— Թե թագուհի դառնամ հանկարծ,
Մյուս քույրը նրա ասաց—
— Վողջ աշխարհի համար մենակ,
Ցես կըգործեմ քանքան բարակ։
— Թե թագուհի դառնամ հանկարծ,
Իսկ լերրորդն այսպես ասաց—
— Հայր արքայի համար մի որ
Ցես կըծնեմ հսկա հզոր։

Հենց իր խոսքը նա ավարտեց,
Դուռը կամաց ճռռաց, բացվեց,
Սենյակ մտավ արքան զորեղ,
Այն լերկրի տերը ահեղ։
Խոսակցության ժամանակ նա
Ցանկապատին մոտ եր կանգնած.

Յեվ խոսքերը այն վերջինիս
Նրա սրտին դուր են գալիս։
—Վողջո՛ւյն, — ասավ,—իմ սիրունի՛կ,
Յեկ, Թագուհի յեղիր, աղջի՛կ,
Յեվ ինձ համար ծնիր հսկա—
Սեպտեմբերի վերջը վոր գա։
Իսկ դուք, քույրեր, աղախինե՛ր,
Թողե՛ք հիմա սենյակը ձեր,
Յերկուսովըդ ինձ հետ յեկեք,
Յեվ ձեր քրոջը հետևեք։
Թող այս մեկը ջուլհակուհի,
Յեվ խոհարար մյուսը լինի։—
Յերեքն այսպես և հայր արքան
Դեպի պալատ ճամբա ընկան։
Արքան յերկար չպատրաստվեց,
Յերեկոյան դեմ պսակվեց.
Նստեց արքան ազնիվ քեֆին,
Հետն էլ ջահել իր Թագուհին։
Յեվ հյուրերն ազնիվ նրան
Մահճակալին փղոսկրյա
Պառկեցրին ջահելներին,
Հետո մենակ նրանց թողին։
Խոհարարը խոհանոցում,
Ջուլհակուհին լաց են լինում.
Կատաղում են և նախանձում
Թագավորի պերճ ամուսնուն։
Իսկ Թագուհին, ջահել հալով,
Իր խոստումը կատարելով,
Նույն գիշերն է հենց ծանրանում։

Պատերազմ եր այն կողմերում։
Սալթան արքան հրաժեշտ տվեց։
Ինչ նժույգին հետո նստեց,
Ցեվ պատվիրեց իր ամուսնուն,
Հանուն սիրո՝ լինել խոհուն։
Մինչդեռ արքան հեռուներում
Քաջ կռվում եր, պատերազմում,
Կինը ծնեց չքնաղ տղա,
Մի արշին եր բոլը նրա.
Իսկ թագուհին նրա կողքին,
Ալծվի պես, պաշտպան ձագին,
Նա կանչում է մի սուրհանդակ,
Հորը գրում ուրախ նամակ։
Ծոհարբերը, ջուլհակուհին,
Կինարմատը՝ կին-խնամին
Վնաս հասցնել վորոշեցին,
Սուրհանդակին բռնել տվին,
Մի ուրիշին ուղարկեցին,
Այսպես ասել պատվիրեցին.
— «Վոր ծնել է կինդ ահա,
Վոչ աղջիկ է, վոչ էլ տղա,
Վոչ էլ մի գորտ, կամ թե մկնիկ,
Մի անծանոթ գազան փոքրիկ»։

Ցերբ հալը արքան վողջը լսեց,
Սուրհանդակը ինչ հաղորդեց,
Ինստ զայրացավ, գոռաց ուժգին,
Ուզեց կախել սուրհանդակին,
Բայց այս մեկ անգամ իր մեջ վակվեց
Սուրհանդակին հրաման տվեց,—
«Սպասեցեք դուք իմ դարձին,—

Ճշմարտությամբ տրվող դատին»։
Սուբհանղակը ճամբա ընկավ,
Ցեվ վերջապես պալատ հասավ։
Խոհարարը, ջուլհակուհին,
կինարմատը՝ կին-խնամին
Թալանելու հրաման տվին
Նրան մի լավ հարբեցըրին.
Իսկ պարկի մեջ նրա դատարկ՝
Դրին ծածուկ ուրիշ նամակ։
Ցեվ նուէն որը հարբած ծառան
Մի ալպիսի բերեց հրամանդ.
—«Հրամայում են իշխաններին,
Վոր չուշացնեն, ժամանակին,
Ցեվ մանկանը, և թագուհուն —
Ծածուկ գցեն ծովը անհուն»։
Ցեվ լինչ արած... Ախտոսացին
Իշխանները թագավորին.
Ախտոսալով և թագուհուն՝
Ննջարան են խմբով մտնում,
Կամքը հայտնում թագավորի
Ցեվ վիճակը իր սոսկալի։
Հենց հրամանն ընթերցեցին,
Ցեվ թագուհուն, և տղային,
Տակառի մեջ նստեցրին,
Այն ձյութեցին, գլորեցին,
Մինչ Ովկիանը հասցրին անհատ,
Զե՝ Սալթանի հրամանն եր այդ։

Կապույտ լերկնքում աստղեր շողուն,
Կապույտ ծովում ջուրն և ծփում,
Ամպն և անցնում բիլ լերկնքում,

Ցեվ տակառն է ծովում լողում,
Մեջը, ինչպես ալրի մի կին,
Լաց է լինում խեղճ թագուհին,
Ուր մանուկն է իր մեծանում,
Ու ժամերով հասակ առնում։
Որն անցնում է, մայրը՝ վողբում,
Իսկ վորդին էլ չուրը ճողփում.—
—«Դու ալիք իմ, ժիր ալիք,
Դու ազատ ես մանդ գալի,
Ցեվ ճողփում ես դու անվերջ,
Քարն ես սրում ծովի մեջ,
Դու ափերը հեղեղող,
Նաճն ես փրկում խորտակվող,
Մի կործանի մեր հոգին,
Մեզ հասցրու ցամաքին։—
Ցեվ ալիքը հնազանդվեց,
Ափը խնկուն դուրս հանեց
Նա տակառը շատ թեթև,
Հետո կամաց փախավ լեռ։
Մայրը ու մանուկը փրկվեցին,
Հողի բուրմունքը զգացին։
Բայց տակառից ով կհաներ,
Պետք եր ասոծուն ապավինել,
Վոտքի կանգնեց փոքրիկ վորդին,
Գլխով հենվեց առաստաղին,
Իր ուժերը մի քիչ լարեց,
— Պատուհան է մեզ պետք,—ասեց,
Փայտե տակը փշրեց թեթև
Ցեվ դուրս լեկավ դեպի վերև։
Ցեվ աստված, մայրն ու տղան
Շուտով մի թումբ և դաշտ տեսան,

Շուրջը ծուխ եր բիլ անճանաչ,
Թմբի վրա կաղնի կանաչ։
Ցեվ մտածեց տղան,—հարմար
Մի ընթրիք ե պետք մեզ համար։—
կաղնուց մի ճյուղ պոկեց այնտեղ,
Ծռեց, շինեց նա պիրկ աղեղ,
Մետաքս լերից խաչից հանեց
Ցեվ աղեղի վրա լարեց.
Ցեղեգ կտրեց ձիգ ու լերկար,
Շինեց թեթև նետ սրածայր.
Գնաց հասավ հովտի ծայրին,
Վորս փնտռելու ծովի ափին։

Հենց վոր ծովին նա մոտեցավ,
Տնքոց լսեց մի սրտացավ,
Վատ եր գործը, թվաց նրան,
Անհանգիստ եր ծովի վրա,
Մի կարապ եր լողում ցածում,
Ցինը վրան պատւյտ գործում.
Ճողփում եր այն խեղճը ջրում
Շուրջը իրա վողջ պղտորում.
Ցին ճանկերն եր իր արձակել
Ցեվ կտուցն եր սրել, բացել։
Մեկ ել նետը լերգեց, անցավ,
Շաչեց, ցինի վզին պրծավ
Ջուրը ներկեց արնով կարմիր,
Տղան գցեց աղեղը իր.
Տեսավ, ցինը խեղդվում ե խեղճ,
Բայց չի տնքում ջրերի մեջ,
Ու կարապն ե մոտից լողում,
Ցինին կողքից կոցահարում,

Արագացնում վերջը նրա —
Ծովում սուզում Թևով իրա
Արքայորդուն դիմում խոսում
Յեվ մարդկային լեզվով ասում.—
— Արքայորդի, դու իմ փրկիչ,
Դու իմ զորեղ, քաջ ազատիչ,
Ո, մի տխրի այն պատճառով, վոր
Բան չես ուտի յերեք դու որ,
Վոր քո նետը ծովում մնաց,
Ցավալի յե, բայց ինչ արած.
Կվարձատրեմ բարությունով,
Ծառայությամբ յես շատ շուտով։
Դու, կարապ չեր, վոր փրկեցիր,
Մի աղջկա կյանք տվեցիր,
Սպանեցիր վոչ թե ցինի,
Այլ մի վհուկ չար կախարդի։
Չեմ մոռանա յես քեզ յերբեք,
Ինձ կըգտնես ամենուրեք.
Ել մի՛ տխրի դու, յետ դարձիր
Յեվ անուշիկ քուն վայելիր։

Թռավ գնաց կարապը այն.
Յեվ Թագուհին ու իր տղան
Վորոշեցին քաղցած պառկել,
Որն եր արդեն վաղուց անցել։
Արքայորդին զարթնեց քնից,
Յերազները քշեց գլխից,
Յեվ զարմացած տեսավ հանկարծ,
Հսկա քաղաք դեմը կանգնած,
Պարիսպներով ատամնավոր։
Փայլուն, շողուն գմբեթներով
Պատի յետև յեկեղեցի,

Ցեվ սուրբ վանքեր շատ դեղեցիկ։
Նա զարթեցրեց մորը քնից,
Ու ախ քաշեց.— Ինչ կլինի,—
Ասավ տղան,—տեսնում եմ լեռ,
Ձվարճանում և կարապը հեզ։—
Նրանք քաղաք վերադարձան,
Հենց պարսպի լեռև անցան,
Լավեց ականջ ծակող դողանջ,
Ամեն կողմից զանգ և շառաչ։
Ժողովուրդն և դեմից լենում,
Ցեվ աստծուն փառաբանում։
Բազմած վոսկե, պերճ կառքերում՝
Արքունիքն և դիմավորում,
Մեծարում են արքայորդուն,
Թագադրում, գլխին դնում,
Իշխանական գլխարիկ նրան,
Տեր ընդունում իրենց վրան։
Մալրաքաղաք մուած անձամբ,
Մալր-թագուհու թուլլտվութլամբ,
Նա սկսեց կառավարել,
Իշխան Գվիդոն անուն կրել։
Ըզբոսնում և քամին ծովում
Փշում նավակն հանդարտ հևում,
Ցեվ վազում և չրով լերթը,
Պարզած ճերմակ առագաստներ։
Նավորդները զարմանում են,
Նավակի շուրջ խմբվում,
Կղզու վրա իրենց ծանոթ
Հրաշք տեսնում մի անծանոթ,
Վոսկե գմբեթ-քաղաք մի նոր,
Նավահանգիստ մեծ, անսովոր.

Թնդանոթն է սկսել կրակել,
Հրամայում նավին կանգնել։
Ցեվ հյուրերը ահա կանգնած
Գվիդոնը կանչում, նրանց
Պատվիրում է հյուրասիրել,
Հետո իրեն պատասխանել.—
Ի՞նչ եք, հյուրեր իմ, դուք ծախում,
Դեպի ո՞ւր եք հիմա լողում։—
Նավորդները լի պատասխան.
— Մենք աշխարհը անցանք, տեսանք,
Ցեվ ծախեցինք սամուրենի,
Ցեվ սևագորշ մորթ աղվեսի.
Ժամանակը լրացավ մեր,
Դեպ արևելք կուզենք դիմել,
Կղզու մոտովը Բուլանի,
Մինչ լերկիրը քաջ Սալթանի։
Ու իշխանը ասաց. — հիմա,
Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
Ովկիանոսով, կապույտ ծովով,
Մինչ Սալթանը ձեր. փութալով.
Բարև տարեք ինձնից նրան։—
Ցերը հյուրերը ճամբա ընկան,
Քաջ Գվիդոնը կանգնած ափին,
Տխուր նայեց նրանց ճամբին։
Հանկարծ տեսավ, հոսող ջրում
Այն կարապն է ճերմակ լողում.
— Բարև՛, իշխան, չքնաղ, ջահել,
Ինչու՞ դեմքիդ ամպ է իջել,
Ցեվ ինչու՞ լես տխուր այդպես,—
Նա Գվիդոնին հարցրեց ալպես։
Իսկ իշխանը պատասխանեց.

— Սիրտս ցավ է կրծում մի մեծ,
Նա ճնշում է ինձ, չահեվին,
Կուզեմ տեսնել հորս անգին։ —
Իսկ կարապը — Ահա թե ինչ,
Թռիր ծովով խաղաղ և չինչ,
Դու այն նավին հասիր, նստիր,
Դե, իմ իշխան, մոծակ դարձիր. —
Ու թևերով թափահարեց,
Շուրջը չուրը նա շաղ տվեց,
Ցեվ իշխանին գլխից մինչ վոտ
Ծողեց թևով իրեն չրոտ։
Ինչպես մի կետ նա փոքրացավ
Ու իշխանը մոծակ դարձավ.
Ծովով թռավ ծվծվալով,
Նավին հասավ նա շատ շուտով,
Վրան իջավ և կամացուկ
Խոր թագնվեց ճեղքում ծածուկ։
Աղմկում է ուրախ քամին,
Ցեվ նավակն է վազում կրկին,
Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ցեվ լերկիրը այն լերազած՝
Հեռուներում պարզ լերևաց։
Ափը իջան հյուրերը այն,
Հրավիրում է նրանց արքան։
Մինչև պալատ նրանց հետքով
Մեր կտրիճն է թռչում ողով.
Տեսավ, զուգված վոսկով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Գահի վրա, թագը գլխին,
Տխուր մի միտք իր ճակատին.

Խոհարարն էլ, ջուլհակուհին,
Կինարմատը՝ կին-խնամին,
Թագավորի կողքին նստել,
Հայացքներն են նրան հառել։
Յեվ հյուրասեր Սալթան արքան
Հյուրերի հետ նստեց սեղան,
Հարցրեց.— Հյուրե՛ր, իմ պարոնայք,
Այդ վո՞րտեղից, ի՞նչպես յեկաք։
Ծովի այն կողմը լա՞վ է, թե վատ։
Յեվ ի՞նչ հրաշք տեսաք անհայտ։—
Նավորդները ի պատասխան.
— Մենք աշխարհի շուրջը անցանք,
Ծովի այն կողմ շատ բան տեսանք,
Իսկ աշխարհում նոր մի հրաշք՝
Կար գահավեժ կղզի ծովում,
Վոչինչ վրան չէր բնակվում,
Տափաստան էր նա ամայի,
Մենավոր մի կանաչ կաղնի.
Բայց կանգնած է հիմա այնտեղ
Նոր պալատով քաղաք ահեղ,
Վոսկեգմբեթ յեկեղեցի,
Յեվ այգիներ շատ գեղեցիկ,
Գվիդոնն է տերը ջահել,
Նա բարև է քեզ ուղարկել։
Սալթան արքան շատ զարմացավ,
— Թե կենդանի մնամ,— ասավ,
— Զքնաղ կղզին յես կայցելեմ
Յեվ Գվիդոնին հյուր կլինեմ։
Խոհարարը, ջուլհակուհին,
Կինարմատը՝ կին խնամին,
Չեն կամենում նրան թողնել

A 11037

Զքնաղ կղզին այն ալեկոծել։ —
— Ինչ հրաշք է դա վոր մի մեծ,
Խոհարարը ալսպես ասեց, —
Աչքով արեց նա խորամանկ.
— Ծովի ափին կանգնած քաղաք։
Գիտեք, ինչը դատարկ բան չի.
Մի անտառում կա լեղևնի,
Տակն սկլուռը լերդ է ասում,
Ցեվ կաղին է անվերջ կրծում։
Այդ կաղին է վոչ հասարակ,
Վողջ կճեպը՝ վոսկի բարակ,
Իսկ միջուկը զմրուխտ անգին
Ալ թե հրաշք կասեն ինչին։
Զարմանում է Սալթան արքան։
կատաղում է մոծակն այն,
Ցեվ մորաքրոջ նստում աչքին,
Ցեվ ալ աչքը խալթում կարգին։
Խոհարարը գուլնըն է գցում,
Ուշաթափվում և կուրանում.
Փուլը, խնամի և ծառաները
Մոծակին են ուզում բռնել.
— Ալ անբծված, անպերտք մժեղ,
Հասեք, բռնեք նրան ալստեղ։ —
Իսկ նա թռավ պատուհանից,
Իր յերկիրը հասավ նորից։
Ու իշխանը ծովի ափին
Ման է գալիս տխուր կրկին։
Հանկարծ տեսավ հոսող ջրում
Ալն կարապն է ճերմակ լողում։
— Բարև, իշխան, չքնաղ, չահել,
Դեմքիդ ինչու ամպ է իջել,

Ցեվ ինչո՞ւ լես տխուր այդպես, —
Գվիդոնին հարցրեց այսպես։
Ու իշխանը պատասխանեց.
— Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,
Այն հրաշքը զարմանալի
Ճես ունենալ կուզենալի.
Մի անտառում կա լեղևնի,
Սա հրաշք ե, դատարկ բան չի,
Սկյուռը տակին լերզ ե ասում,
Ցեվ կաղին ե անվերջ կրծում։
Այդ կաղին ե վոչ հասարակ,
Վողջ կճեպը — վոսկի բարակ,
Իսկ միջուկը — զմրուխտ անգին,
Գռւցե մարդիկ սուտ ասացին։ —
Ցեվ կարապն ե պատասխանում.
— Սկյուռի մասին միշտ են ասում,
Այդ հրաշքին ծանոթ եմ յես,
Բավ ե, իշխան, ինչքան տխրես,
Ցես պատրաստ եմ միշտ ծառայել,
Քեզ բարեկամ ընդմիշտ լինել։ —
Ու իշխանը քաջալերված,
Տուն ե դառնում ուրախացած։
Բակը մտնում իր ընդարձակ
Ու ինչ տեսնում։ — Ցեղևնու տակ
Մի սկյուռ ե նստել փոքրիկ
Ցեվ կաղին ե կրծում վոսկի,
Միջից անգին զմրուխտ հանում
Ցեվ կճեպը շուրջն հավաքում,
Կուտեր դարսում միատեսակ,
Շվշվոցով լերգում արագ,
Բոլոր ազնիվ մարդկանց առաջ.

— «Դու իմ այգի, այգի կանաչ»։
Քաջ Գվիդոնը շատ զարմացավ.
— Շնորհակալ եմ,— այսպես ասավ,
— Ալ թե կարապ, կուզեմ, վոր նա,
Ինձ պես մի լավ ուրախանա։—
Ցեվ իշխանը սկյուռի համար
Շինել տվեց տուն բյուրեղյա.
Մոտը պահակ նա կանգնեցրեց,
Ցեվ գրագրին նա պատվիրեց,
կաղիններըը հաշվել անթիվ,
Իրեն ոգուտ, սկյուռին պատիվ։

Ըզբոսնում ե քամին ծովում,
Ցեվ նավակն ե առաջ քշում,
Վոր վազում ե ջրով լերեր,
Բացած ճերմակ առագաստներ։
Անցնում կղզու ափից շատ մոտ,
Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
Թնդանոթն ե սկսել կրակել,
Հրամայում ե նավին կանգնել։
Ցեվ հյուրերը կանգ են առնում,
Գվիդոնը նրանց կանչում,
Պատվիրում ե հյուրասիրել,
Հետո իրեն պատասխանել։
—Ի՞նչ եք հյուրեր իմ, դուք ծախում,
Դեպի ու՞ր եք հիմա լողում։—
Նավորդները լի պատասխան.
— Մեծ աշխարհի շուրջը անցանք,
Ցեվ ծախեցինք մենք նժույգներ,
Դոնի ազնիվ ձի–մատակներ.
Ժամանակն ե մեր լրացել,
կուզենք հետու ճամբա ընկնել,

Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ու իշխանը ասաց,—հիմա,
Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
Ովկիանոսով, կապուտ ծովով,
Մինչ Սալթանը ձեր փառավոր.
Բեզ Գվիդոնը, ասեք ալսոր,
Բարևում է Սալթան հզոր։

Գլուխ տալով քաջ իշխանին,
Նրանք ճամբա ընկան կրկին,
Իսկ իշխանը ափին է վազում,
Ուր կարապն է արդեն լողում,
Ցեվ խնդրում է — հոգիս նորից
Դեպ հեռուն է ձգտում տնից։—
Ու կարապը նրան իսկույն
Ծովի ջրով ցողեց փայլուն։
Ցեվ իշխանը դարձավ մի ճանճ
Թռավ,գնաց ճամբով, ճանաչ,
Ծովով թռավ և լերկնքով,
Նավի ճեղքը մտավ շուտով։

Աղմկում է ուրախ քամին,
Ցեվ նավակն է վազում կրկին,
Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ցեվ լերկիրը այն լերազած՝
Հեռուներում պարզ լերևաց։
Ափը իջան հյուրերն այն,
Հրավիրում է նրանց արքան.
Մինչև պալատ նրանց հետքով
Մեր կարիճն է թռչում ոդով.

Տեսավ, դուզված վոսկով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Գահի վրա, թագը գլխին,
Տխուր մի միտք իր ճակատին։
Ջուլհակուհին, կին-խնամին,
Խոհարարը՝ մի աչքանին
Կողքին նստել թագավորի,
Նմանվում են դոդոշների։
Ցեվ հյուրասեր Սալթան արքան
Հյուրերի հետ նստեց սեղան,
Հարցրեց. — Հյուրե՛ր, իմ պարոնայք,
Այդ վիրտեղից, ինչպես լեկաք,
Ծովի այն կողմ լավ ե, թե վատ,
Ցեվ ինչ հրաշք տեսաք անհայտ։—
Նավորդները լ պատասխան.
— Մենք աշխարհի շուրջը անցանք,
Վատ չե, ծովի այն կողմ տեսանք,
Իսկ աշխարհում, նոր մի հրաշք,
Ծովում կղզի կա մեն-մենակ,
Կղզու վրա, մի մեծ քաղաք,
Վոսկեգմբեթ լեկեղեցի
Ցեվ ղղյակները շատ գեղեցիկ։
Պալատի դեմ — լեղևնու ծառ,
Տակը — բյուրեղ տնակ պայծառ,
Մեջը սկյուռ մի ընտանի
Ցեվ սրամիտ, և կենդանի։
Նա լերգեր ե սիրուն լերգում
Ցեվ կաղին ե անվերջ կրծում։
Այդ կաղինը չե հասարակ,
Վողջ կճեպը — վոսկե բարակ,
Իսկ միջուկը — զմրուխտ կանաչ,

Ցեվ ծառաները նրա առաջ,
Ծառայում են նրան վայելք։
Գրագրին են այնտեղ հանձնել,
կաղիններըը հաշվել անգին։
Մեծարում է զորքն սկզուռին.
կճեպներից դրամ են ձուլում,
վոր աշխարհն է շրջագայում.
Ցեվ զմրուխտն են ածում պահում,
Աղջիկները մառաններում։
Այնտեղ, հարուստ կղզու վրա
Պալատներ են, խրճիթ չկա,
Ուր Գվիդոնն է — տերը չահել,
Նա բարև է քեզ ուղարկել։ —
Սալթան արքան շատ զարմացավ.
— Թե վենդանի ինամ, — ասավ,
— Զքնաղ կղզին լես կայցելեմ,
Ցեվ Գվիդոնին հյուր կըլինեմ։ —
Խոհարարը, չուչհակուհին,
կինարմատը՝ կին-խնամին,
Չեն կամենում նրան թողնել,
Զքնաղ կղզին այն՝ այցելել։
Գաղտագողի ծիծաղելով,
Չուչհակուհին ասավ, — հրաշքով
Չես զարմացնի դու մեզ խակի,
Սկյուռը քար է կրծում վոսկի,
Թափում վոսկին այն շահաբեր,
Զմրուխտներից դիզում կույտեր,
Չես զարմացնի դրանով դու մեզ,
Ճշմարտությունն, թե ստում ասես։
Հրաշք կա ուրիշ, զարմանալի,
Ծովն է ուռչում փոթորկալի,

Ցեռ է գալիս, ուժեղ վոռնում,
Դատարկ ափի վրան լեղնում,
Տարածվում է շառաչելով,
Ցեվ ցնում են ափին շուտով,
Պատյաններով բոցավառվող,
Ցերեսուն լերեք կարիճ քայլող։
Դլուցպներ են վողջը սիրուն,
Հականներ են չահել, նախշուն,
Ընտիր հասակ, միատեսակ,
Ցեվ հետները քաջ, համարձակ,
Սևածովը — քեռին նրանց,
Ալ քեզ հրաշք, չտեսնված։—
Ցեվ հյուրերն են խելոք լռել,
Չեն ել ուզում հակառակել։
Զարմացել է Սալթան արքան,
կատաղում է Գվիդոնն այն,
Մորաքրոջն է հանում տզզում
Ցեվ ձախ աչքի վրա նստում։
Գուլնը կորցրեց չուչհակուհին,
Ցեվ կուրացավ նույն վայրկյանին։
Շուրջը աղմուկ,—բռնիր, բռնիր...
Դե շուտ ճխլիր, դրան սպանիր,
— Ալ թե չես քեզ, սպասիր...—Նորից
Քաջ իշխանը պատուհանից
Թռավ հասավ լերկիրը իր,
կապուտ ծովով անծայրածիր։
Ու իշխանը ծովի ափին
Ման է գալիս տխուր կրկին։
Հանկարծ տեսավ,հոսող ջրում,
Ալն կարապն է ճերմակ լողում։
— Բարև, իշխան, չքնաղ չահել,

Ինչո՞ւ դեմքիդ ամպ է իջել,
Ցեվ ինչո՞ւ ես տխուր այդպես.—
Նա Գյիդոնին հարցրեց ալսպես։
Ու իշխանը պատասխանեց.
— Սիրտս ցավ է կրծում մի մեծ,
Այն հրաշքը հիանալի
Իմ լերկրում կուզեմ լինել։
— Ի՞նչ հրաշք է՝ զարմանալի։
— Այն ուռչում է փոթորկալի
Ովկիանը, ուժեղ վոռնում,
Դատարկ ափի վրա լեղնում.
Տարածվում է շառաչելով,
Ցեվ ծնում են ափին շուտով,
Պատյաններով բոցավառվող,
Ցերեսուն լերեք կորիճ քալլող,
Դյուցազներ են վողջը սիրուն,
Հսկաներ են չահել, նախշուն։
Միահասակ,—նրանց կողքին,
Սնածովը՝ ծերուկ քեռին։
Ցեվ կարապն է պատասխանում.
— Ահա թե քեզ ինչն է հուզում.
Մի մտածի, դու իմ հոգյակ,
Այդ հրաշքին լես եմ տեղյակ.
Դյուցազները — ծովի ազատ,
Ցեղբայրներն են իմ հարազատ։
Գնա իշխան, ել մի տխրիր,
Ցեղբայրներիս քեզ մոտ ապասիր։

Ցեվ իշխանը հանդարտ քալլեց,
Աշտարակի գլխին նստեց,
Ծովին սկսեց նայել անվուլթ...

Ծփաց հանկարծ ծովը կապույտ,
Աղմկելով նա տարածվեց,
Հասավ ափին, վրան թողեց
Յերեսուն յերեք կտրիճ քայլող,
Պատյաններով բոցավառվող։
Հսկաներն են զույգ-զույգ քայլում.
Յեվ ալեզարդ մազով փայլուն
Ծեր քեռին է առաջնորդում,
Դեպի քաղաք նրանց տանում։
Քաջ Գվիդոնը իջավ, շտապեց,
Իր հյուրերին դիմավորեց։
Ժողովուրդն է նույնպես վազում
Իշխանին է քեռի ասում.
—Մեզ կարապն է այն ուղարկել,
Յեվ այսպես է խիստ հրամայել,—
Պերճ քաղաքը քո պահպանել,
Շրջագայել; մի լավ հսկել։
Այսուհետև մենք ամեն օր,
Միշտ միասին, ճամբով սովոր,
Պարսպի մոտ, ծովի միջից,
Դուրս ենք գալու մենք ջրերից։
Կըտեսնվենք մենք շատ շուտով,
Ժամն է ծովը իջնել խմբով.
Ծանր է օդը մեզ յերկրի...
Յեվ տուն դարձան նրանք կրկին։

Ըզբոսնում է քամին ծովում
Յեվ նավակն է առաջ քշում,
Նա վազում է ջրով յերեր,
Պարզած ճերմակ առագաստներ։
Անցնում կղզու ափից շատ մոտ,

Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
Թնդանոթն է սկսել կրակել,
Հրամայում նավին կանգնել։
Ցեվ Գվիդոնն է նրանց կանչում,
Պատվիրում է հյուրասիրել,
Հետո իրեն պատասխանել.
— Ի՞նչ եք, հյուրերը իմ, դուք ծախում,
Դեպի ու՞ր եք հիմա լողում։—
Նավորդները լ պատասխան.
— Մենք աշխարհ անցանք, տեսանք,
Ցեվ ծախեցինք վայլուն պողպատ,
Դեղին վոսկի, մաքուր արծաթ.
Ժամանակն է մեր լրացել,
Կուզենք հետու ճամբա ընկնել,
Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի յերկիրը Սալթանի։
Ու իշխանը ասաց — հիմա,
Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
Ովկիանով, կապույտ ծովով,
Մինչ Սալթանը ձեր վտառվոր։
— Բեզ, Գվիդոնը, ասեք նրան,
Բարևում է, զորեղ Սալթան...

Գլուխ տալով քաջ Գվիդոնին,
Նրանք ճամբա ընկան կրկին։
Իսկ իշխանը ափն է վազում,
Ուր կարապն է արդեն լողում,
Ցեվ խնդում է — հոգիս նրբից
Դեպի հետուն է ձգտում տնից։ —
Ու կարապը նրան իսկույն
Ծովի ջրով ցողեց վայլուն։

Այստեղ նորից նա վոքրացավ,
Իշամեղու հանկարծ դարձավ,
Հետո թռավ և տզտզաց,
Նավին հասավ, իջավ նա ցած,
Նավախեղի վրա նստեց
Ցեվ ծակի մեջ նա թաղնվեց։

Աղմկում է ուրախ քամին,
Ցեվ նավակն է վազում կըկին,
Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ցեվ լերկիրը, այն լերազած՝
Հեռուներում պարզ լերեվաց։
Ափը իջան հյուրերը այն,
Հրավիրում է նրանց արքան,
Մինչև պալատ նրանց հետքով,
Մեր կորիճն է թռչում ոդով։
Տեսավ, զուգված վոսկով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Գահի վրա թագը գլխին,
Տխուր մի միտք իր ճակատին։
Ծոհարբերը, չուլհակուհին,
Կինարմատը՝ կին-խնամին,
Թագավորի կողքին նստել,
Ցերեքովը չորս աչք ունեն։
Ցեվ հյուրասեր Սալթան արքան
Հյուրերի հետ նստեց սեղան։
Հարցրեց,— Հյուրեր, իմ պարոնայք,
Այդ վոր տեղից, ինչպես լեկաք,
Ծովի այն կողմը լավ է, թե վատ,
Ցեվ ինչ հրաշք տեսաք անհայտ։—

Նավորդները լ պատասխան.
— Մենք աշխարհի շուրջը անցանք,
Վատ չե ծովի ալն կողմ տեսանք,
Իսկ աշխարհում — նոր մի հրաշք,
Ծովում կղզի կա մեն-մենակ,
կղզու վրա մի մեծ քաղաք,
Այնտեղ հրաշք զարմանալի,
Ծոմն ե ուռչում փոթորկալի,
Ցեռ ե գալիս, ուժեղ վոռնում,
Դառարկ ափի վրա չեկնում,
Տարածվում ե շառաչելով,
Ցեվ ճուռմ են ափին շուտով
Ցերեսուն յերեք կտրիճ քայլող,
Պատյաններով վոսկի — վառվող.
Դյուցազներ են վողջը սիրուն,
Հսկաներ են չահել, նախշուն,
Միահասակ, — նրանց կողքին,
Սևածովը՝ ծերուկ քեռին
Դուրս ե գալիս ծովից յեռուն,
Նրանց զուլգ-զուլգ ֆին ե բերում,
Վոր պահպանեն նրանք կղզին
Ցեվ շուրջ բոլոր հսկեն կարգին։
Զկա ալդպես վստահելի,
Ֆաջ, չանսաեր զորք ավելի։
Անդ Գվիդոնն ե տերը չահել,
Նա բարև ե քեզ ուղարկել։—
Սալթան արքան շատ զարմացավ,
— Թե կենդանի ճնամ, — ասավ,
— Զքնաղ կղզին յես կայցելեմ,
Գվիդոնին հյուր կլինեմ։—
Ծոհարաբը, չուլհակուհին,

Վոչինչ չասին, — իսկ խնամին
Քնձիծաղով ասավ ալսպես.
— Ձեք զարմացնի դրանով մեզ,
Վոր մարդիկ են ծովից լեզնում
Ցեվ շուրջ բոլոր այնտեղ հակում։
Ճիշտ են ասում, թե սուտ խոսում,
Այստեղ հրաշք չես չեմ տեսնում։
Կա մի հրաշք մեր աշխարհում
Ճիշտ լուրեր են միշտ պատվում։
Ծովի այն կողմ կա դշխուհի,
Աչքդ իսկի չես հեռացնի,
Լուլսը որվա սևավորում
Ցեվ գիշերն ե լուսավորում։
Ծամի տակին վալլուն լուսնյակ,
Իսկ ճակատին աստղ-արեգակ։
Իրեն այնպես վեհ ե պահում,
Սիրամարգ ե կարծես քալլում։
Իսկ ինչպես ե ասում, խոսում,
Գետն ե կարծես մեղմիկ հոսում։
Կարելի չե ասել հրաշք,
Չտեսնված այդ ձեզ զարմանք։
Ցեվ հյուրերն են խելոք լռել,
Չեն ել ուզում հակաճառել։
Զարմանում ե արքան կրկին,
Կատաղում ե արքայորդին,
Բալց խղճալով իր տատիկին,
Ել չի նստում նրա աչքին,
Ալլ տզզում ե և պատվում,
Քթի վրա՝ ուղիղ նստում,
Քիքն ե խալթում։ — Մեկ ել ահա,
Մի մեծ բշտիկ քթի վրա։

Ցեվ գոռում են վողջ ահաբեկ.
— Ի սեր աստծո, շուտով ոգնեք
— Հէյ, պահակնե՛ր, բռնե՛ք շուտով,
Դե, ճխլեցե՛ք դրան վոտքով,
— Ալ քեզ, սպասի՛ր։ — Պատուհանիկ
Իշամեղուն թռավ նորից։
Իր լերկիրը հասավ շուտով,
Գնաց, անցավ կապուտ ծովով։
Ու իշխանը ծովի ափին
Ման ե գալիս տխուր կրկին։
Հանկարծ տեսավ, հոսող ջրում,
Ալն կարապն ե ճերմակ լողում։
— Բարև, իշխան, չքնաղ չահել,
Ինչո՞ւ դեմքիդ ամպ ե իջել,
Ցեվ ինչո՞ւ լես տխուր ալղպես,—
Գվիդոնին հարցրեց ալպես։
Ու իշխանը պատասխանեց.
— Սիրտս ցավ ե կրծում մի մեծ,
Վոր բոլորն են ամուսնանում,
Ցես եմ մենակ ալպես մնում։—
— Իսկ դու գո՞ւցե մեկին գիտես,—
— Աշխարհումս կա մի այնպես,
Արքայադուստր գեղեցկուհի,
Վոր աչքերդ չես հեռացնի,
Լուսան ե որվա սևավորում,
Ցեվ գիշերն ե լուսավորում։
Ծամի տակին փայլուն լուսնյակ,
Իսկ ճակատին աստղ-արեգակ։
Իրեն այնպես վեհ ե պահում,
Սիրամարգ ե կարծես քայլում։
Իսկ ինչպես ե ասում, խոսում,

Գետն է կարծես մեղմիկ հոսում։
Այդ բոլորը ճիշտ է ասա,—
Պատասխանին սպասում է նա։
Ցեվ կարապն է ճերմակ լռել,
Հետո սկսեց այսպես խոսել.
— Կա այդպիսի աղջիկ, իշխան,
Բայց ձեռնոց չի կինը՝ նրան
Ճերմակ ձեռքից դեն չես գցի,
Գուցե լեռև խո չես թագչնի։
Կծառայեմ քեզ խորհուրդով.
Լսիր, հասիր վողջին մտքով,
Լավ խելք արա, իշխան, կրկին,
Վոր չըզղջաս հետո խակի։—
Ցեվ իշխանը սկսեց լերդվել,
Վոր ուզում է նա պսակվել,
Վոր նա արդեն սրա մասին
Մտածել է ճանապարհին,
Վոր պատրաստ է նա մոլեգին,
Այն դշխուհու համար անգին,
Գնալ վոտքով, փնտռել հեռու,
Ցոթը սարերի լեռևներում։
Իսկ կարապը խոր ախ քաշեց.
— Ի՞նչու հեռու — նրան ասեց.
— Գիտցիր, մոտ է բաղդդ այդքան,
Այն դշխուհին լես եմ, իշխան։—
Նա թևերը թափահարեց,
Ալիքներին մոտով սահեց,
Ափը իջավ վերից ահա,
Թփերի մեջ մտավ անահ.
Թպրտալով թափահարեց,
Ցեվ դշխուհի դարձավ, փոխվեց.



Ծամի տակին փալլուն լուսնյակ,
Իսկ ճակատին աստղ-արեգակ։
Իրեն այնպես վեհ է պահում,
Սիրամարգ է կարծես քալլում։
Իսկ ինչպես է ասում, խոսում,
Գետն է կարծես մեղմիկ հոսում։
Ու իշխանն է նրան գրկում,
Ճերմակ կրծքին ամուր սեղմում.
Հետո ձեռքից նրան բռնում,
Իր մայրիկի մոտ է բերում,
Ցեվ վոտքերն է ընկնում խնդրում,
Աղաչելով, հեզ հնազանդ,
— Դու, տիրուհի, մայր հարազատ,
Կին եմ ընտրել յես ինձ համար,
Քեզ էլ աղջիկ լսող հարմար։
Մենք խնդրում ենք, վոր դու որհնես,
Ցերկուսիս էլ թուլլ տաս դու մեզ,
Ապրել սիրով և միասին,
— Դե մեզ որհնի,— նրան ասին։
Ցեվ հնազանդ գլխի վրա
Սրբապատկեր վերցրած ահա,
Մայրն է լալիս, ասում.— Վորդիք,
Աստված կյանքում կվարձատրի։—
Քաջ իշխանը էլ չսպասեց,
Նա դշխուհու հետ պսակվեց.
Ցեվ ապրեցին նրանք սիրով
Նորածնի սպասելով։

Ըզբոսնում է քամին ծովում,
Ցեվ նավակն է առաջ քշում,
Վոր վազում է ջրով յերեր,

Բացած ճերմակ առագաստներ։
Անցնում կղզու ափից շատ մոտ,
Մեծ քաղաքի կողքով ծանոթ.
Թնդանոթն է սկսել կրակել,
Հրամայում է նավին կանգնել։
Ցեվ հյուրերը կանգ են առնում,
Գվիդոնն է նրանց կանչում,
Պատվիրում է հյուրասիրել,
Հետո իրեն պատասխանել.
— Ինչ եք հյուրեր իմ, դուք ծախում,
Ցեվ դեպի ձեր հիմա լողում։
Նավորդները ի պատասխան.
— Մենք աշխարհը անցանք, տեսանք,
Ուր ծախեցինք ամեն տեսակ
Ցեվ անքանակ-անհայտ ապրանք։
Ժամանակն է մեր լրացել,
Կուզենք հեռու ճամբա ընկնել
Կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ու իշխանը ասաց.— Հիմա,
Ձեզ, պարոնայք, բարի ճամբա,
Ովկիանով, կապույտ ծովով,
Մինչ Սալթանը ձեր վառավոր։
Բայց հիշեցրեք նրան միայն,
Թագավորին ձեր աննման.
Ոստացել է մեզ այցելել,
Բայց մինչ այժմ նա չի լեկել։
Բարևեցեք ինձնից նրան։—
Ցեվ հյուրերին այս մեկ անգամ
Քաջ Գվիդոնը չհետևեց,
Իր կնոջից չբաժանվեց։

Աղմկում է ուրախ քամին
Ցեվ նավակն է վազում կրկին,
կղզու մոտով այն Բուլանի,
Դեպի լերկիրը Սալթանի։
Ցեվ լերկիրը այն լերազած՝
Հեռուներում պարզ լերևաց։
Ափը իջան հյուրերն այն,
Հրավիրում է նրանց արքան։
Տեսան, զուգված թագով փայլուն,
Սալթան արքան իր պալատում,
Ծոհարարն էլ, ջուլհակուհին,
կինարմատը՝ կին-խնամին,
Թագավորի կողքին նստել,
Ցերեքսվը չորս աչք ունեն,
Ցեվ հյուրասեր Սալթան արքան
Հյուրերի հետ նստեց սեղան։
Հարցրեց.— Հյուրեր, իմ պարոնայք,
Այդ վիրտեղից, ինչպես լեկաք.
Ծովի այն կողմ լմվ է, թե վատ,
Ցեվ ինչ հրաշք տեսաք անհայտ.—
Նավորդները ի պատասխան.
— Մենք աշխարհի շուրջը անցանք,
Վատ չե ծովի այն կողմ տեսանք,
Իսկ աշխարհում նոր մի հրաշք՝
Ծովում կղզի կա մեն-մենակ,
կղզու վրա մի մեծ քաղաք,
Վոսկեգմբեթ լեկեղեցի
Ցեվ ալգիներ շատ գեղեցիկ։
Պալատի դեմ լեղևնու ծառ,
Տակը բլուրեղ տնակ պայծառ,
Մեջը սկյուռ մի ընտանի,

Ցեվ սրամիտ և կենդանի։
Նա յերգեր է սիրուն ասում
Ցեվ կաղինն է անվերջ կրծում։
Իսկ կաղինը չե հասարակ,
Վողջ կճեպը՝ վոսկի բարակ,
Իսկ միջուկը — զմրուխտ կանաչ,
Ցեվ ծառանեը նրա առաջ։
Ուրիշ հրաշք զարմանալի.
Անդ ուռչում է փոքրկալի,
Ցեռ է գալիս ծովը, վոռնում,
Դատարկ ափի վրա յելնում,
Տարածվում է արագ վազքով,
Ցեվ ճնում են ափին շուտով,
Պատյաններով բոցավառվող,
Ցերեսուն յերեք կորիճ քայլող,
Դյուցազներ են նրանք սիրուն,
Հսկաներ են չահել, նախշուն,
Միահասակ, — նրանց կողքին
Սևածովը՝ ծերուկ քեռին։
Չկա այդպես վատահելի,
Քաջ, չանասեր զորք ավելի,
Իսկ իշխանը մի կին ունի,
Աչքդ իսկի չես հեռացնի։
Լուսը որվա սևավորում,
Ցեվ գիշերն է լուսավորում։
Ծամի տակին փայլուն լուսնյակ,
Իսկ ճակատին աստղ — արեգակ։
Անդ Գվիդոնն է տերը չահել.
Մեծարում են նրան վայել։
Ուղարկում է նա քեզ բարև,
Նախատում է նա քեզ թեթև,

— Խոստացել է մեզ ալցելել,
Բայց դեռ մեզ մոտ նա չի լեկել։—

Արքան ալտեղ չհամբերեց,
Նավատորմը իր պատրաստեց։
Խոհարարն էլ, Չուլհակուհին,
Կինարմատը՝ կին-խնամին
Չեն կամենում նրան թողնել,
Չքնաղ կղզին ալն ալցելել։
Սալթան արքան ուշք չի դարձնում
Ցեվ ալսպես է նրան դալում.
— Ցես արքա լեմ, թե լերեխա,—
Նա ասում է լուրջ ու վստահ.
— Ցես մեկնում եմ.—վոտքով դռփեց,
Ցեվ դուրս լեկավ, դուռը խփեց։

Քաջ Գվիդոնն է տանը նստել,
Ըսկսել է ծովին նալել,
Վոր հանդարտ է և չի հուզվում,
Թպրտում է, մեղմիկ ծփում։
Իսկ լազուրե հեռուներում
Մեծ նավատորմ է լերևում։
Ովկիանում նավերը քանի,
Նավատորմն է ալդ Սալթանի։
Ցեվ Գվիդոնը տեղից թռավ,
Բարձր ձալնով կանչեց ասավ.
— Մալր հարազատ, դու իմ ահեղ,
Իշխանուհի դու էլ չահել,
Շուտով նալեք, տեսեք ալնտեղ,
Իմ հալրիկն է գալիս ալտեղ։—
Նավատորմը մոտ է կղզուն

Նա դիտակով հորն է նայում։
Հայրն է կանգնել նավին ահա,
Ցեվ նայում է իրենց վրա.
Հետո են լեկել ջուլհակուհին,
Խոհարարը և խնամին։
Ցեվ բոլորն են շատ զարմանում,
Ցերբ յերկիրն են անհաց տեսնում։
Կրակում են թնդանոթից,
Ձիլ ղողանջներ զանգատունից։
Քաջ Գվիդոնը ափն է իջնում
Ցեվ արքային դիմավորում,
Հետը լեկած ջուլհակուհին,
Խոհարարին և խնամուն։
Քաղաք տարավ նա արքային
Ցեվ չխոսեց ամենևին։

Դեպ պալատ են նրանք դիմում։
Դարպասի մոտ զրահով փայլուն,
Արքայի դեմ, քաջ անվեհեր,
Ցերեսուն յերեք հրաշք դյուցազներ։
Կտրիճներ են վողջը սիրուն,
Հսկաներ են ջահել նախշուն,
Միահասակ.—նրանց կողքին
Սևածովը՝ ծերուկ քեռին։
Ցերբ լայն բակը արքան մտավ,
Մեծ լեղևնի այնտեղ տեսավ,
Տակը սկյուռն յերգ է ասում
Ցեվ կաղին է վոսկի կրծում.
Միջից կանաչ զմրուխտ հանում,
Պարկի մեջ է այն հավաքում։
Ցեվ շուրջ բոլոր այն մեծ բակում,

Թափած կճեպ վոսկի, փայլուն։
Մեկ էլ հանկարծ ուրիշ հրաշք,
Իշխանուհի խակ մի զարմանք,
Ծամի տակին փայլուն լուսնյակ,
Իսկ ճակատին աստղ — արեգակ։
Իրեն այնպես վեհ է պահում,
Սիրամարգ է կարծես քայլում.
Սկեսուրին է առաջնորդում,
Ձեռքից բռնած սենյակ բերում։
Ճանաչում է նրան արքան,
Բաբախում է սիրտն արագ,
— Ի՞նչ եմ տեսնում, այլ քեզ զարմանք.
— Ի՞նչպես,—շունչն է հազիվ պահում,
Լաց է լինում և արտասվում,
Թագուհուն է սեղմում կրծքին,
Վորդու հետ էլ չահել հարսին։
Ցերը նստեցին սեղան մեկ տեղ,
Սկսվեց մի քեֆ ուրախ այնտեղ։
Ծոհարարն էլ, չուլհակուհին,
Կինարմատը, կինս խնամին
Թագնվել են անկյուններում,
Հազիվ գտան նրանց մթնում։
Այստեղ նրանք բոլորն ասին
Ցեվ լաց լեղան, սեղանչեցին։
Բայց այս անգամ ուրախ արքան
Նրանց թողեց, վոր տուն դառնան։
Որը անցավ — և Սալթանին
Կիսահարբած քնացրեցին։
Այնտեղ լես էլ շատ խմեցի,
Միայն բերխս թաթախեցի։

1831

Տերտերն ու իր բալիկ ծառան



Ս

ի ժլատ տերտեր—
Հարուստ, տնատեր—
Վաղ գնաց շուկա,
Վոր գործը հոգա,
Հետ դառնա տուն գա։
Ետ տեր ժլատին
Պատահեց Բալդին,
Ասավ. «Ողջնիր, տեր,
Ի՞նչ կուզես, տերտեր»։
— Կուզեմ մի ծառա,
Շատ բան իմանա,
Ապրի չոր հացով,
Լինի խոհարար,
Ձիապահ, դուրգար.
Շատ եժան վարձով։
— «Ա՛ տեր, ինձ վարձիր,
Կուզես քար բարձիր.
Մի կլոր տարի
Ինձ տանդ պահի.
Թե ուտիս, թե պաս,

Տուր ինձ լոկ սպաս.
Ու տարվա վերջին
Քո տանը միջին
Թող միջամտով
Ցերեք հատ կըտտոց
Տամ քո ճակատով,
Ահա իմ վարձը —
Վերջացավ հարցը»։
Տերտերը խորհեց,
Ճակատը քորեց.
Կըտտոցները իրա մեջ
Բան չըհաշվեց, ասավ՝ հեչ
Կըտտոց էլ կա, կըտտոց էլ
Ցեվ մոռացվեն գուցե էլ։
Համաձայնեց պալմանին
Ցեվ տուն բերեց ծառային.

Ինչպես ցույց տվավ փորձը,
Բալդին գիտեր իր գործը.
Աըի յեր մարդը,
Վարում եր արտը,
Պահում եր նա ձին,
Հանում եր հնձին,
Նա քիչ եր քնում,
Շուտ եր վեր կենում,
Շուկա յեր գնում,
Տան պաշար առնում,
Տանը չուր կրում,
Ոչախը վառում,
Վրան ձու խաշում,
Ուտում ու կպճում,

Ցերեկը չեր վիճում։
Հիացել եր իրիցկինը.
Վրան ցավում եր աղջիկը.
«Հալրիկ» կանչում տան փոքրիկը,
Վոր նստում եր Բալդու գիրկը։
Տերտերը միայն
Չեր սիրում նրան.
Ցերեկ հիշում եր Բալդու մասը
Ճըքճըքում եր ծեր ճակատը։

Տարին անցնում է որերը,
Իսկ տերտերը, մտամոլոր,
Վի՛չ ուտում է, վի՛չ էլ խմում,
Տարվա վերջին է սպասում։
Ահա մի որ
Խեղճ ու մոլոր
Են քահանան
Իրիցկնկան
Խոստովանեց
Ամեն մի բան.
Իրիցկինը՝ — «լես թուլլ չեմ տա,
Մ՛ տեր, Բալդին ճակատիդ տա.
Ցեկ դիր նրան այնպես գործի
Վոր նա իրա ուժը փորձի,
Են գործն անել չկարենա
Ու ամոթով դատարկ գնա»։
Ուրախացավ են տերտերը.—
Իսկույն և եթ — հենց նույն որը
Ասավ. «Բալդի, սատանեքը
Դեռ չեն տվել տնորհնեքը,
Գնա — ուզիր ապառիկա,
Ցերեկ տարեն առնելիքս»։

Բալդին մի հեզ
Ծառալի պես
կեսը կամա,
կեսն ակամա,
Ցելավ գնաց ծովի քովը
Թոկին վոլորեց, կախեց ծովը.
Նխաս փոթորիկ ծովում հանեց,
Ափը ափին տվեց խառնեց.
Մի քիչ հետո հանկարծ — ահա,
Ծովից լելավ մի սատանա.
— Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեզնից,
Թոկդ քաշիր, հանի՛ր ծովից։
— Չե, ձեր ծովը չես կըխառնեմ
Ու բոլորիդ դուրս կըհանեմ,
Ձեր վրալի ապառիկը,
Իմ տերտերի առնելիքը
Եսպես լերկար լերեք տարի
Ի՞նչու համար դուք չեք բերի.
— Հերիք խառնես ծովը, Բալդի,
Ձեռքիդ Թոկը խնդրեմ վայր դի.
Շուտով կըտանք մենք քո հարկը
Ես ա կըգա իմ Թոռնիկը։
Գնաց պապը. լեկավ Թոռը,
Ցեկավ, տվավ գլխին զոռը.
Մլավելով ինչպես կատուն,
— Բարև քեզի, ասավ Բալդուն.
Ես ի՞նչ կարգ ե,
Ես ի՞նչ վարք ե,
Քո ուզածը
Ես ի՞նչ հարկ է.
Ես ի՞նչ լուր ե,

Մեզ չարեբիս
Ինչ տխուր ե,
Հեչ լսած կա գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, ինչ անենք, կուզես կըտանք
Բայց մի պալման չըմոռանանք.
Մինչև ժողվի պապս հարկը,
Բերի լցնի կաշե պարկը,
Արի վազենք մենք միասին
Ծովի շուրջը. ճամբի կիսին
Ով վոր հոգնի ու լետ ընկնի,
Թող նա վոսկու պարկը տանի։
Մի հոհոաց ետտեղ Բալդին
Ծաղրի տալով չարի ճուտին.
«Դուռ ով ես վոր, ալ անհեթեթ,
Բալդին վազի քեզպեսի հետ.
Քիչ սպասի թող լըղպորը,
Գնամ բերեմ իմ լեղբորը»։
Բալդին անտառ գնաց արագ,
Բռնեց լերկու հատ նապաստակ
Ցեվ գցելով նրանց պարկը,
Դարձավ լեկավ ծովի ափը.
Հանեց մեկին պարկի միջից
Ու բռնելով ջուխտ ականջից
Ասավ չարին. «Վախկոտ ճուտիկ,
Ծոսքիդ տերն ես, արի մոտիկ.
Առաջ վազիր դեռ լեղբորս հետ.
Ի՞նչ ես նայում վրան խեթ-խեթ.
Դեհ մեկ, լերկուս, լերեք՝ վազեք,
Դուք իրարի լավ կըսազեք»,
Ու վազեցին. նապաստակը

Փախավ անտառ, մտավ ծակը.
Իսկ սատանեն՝ տնկած դունչը՝
Շրջան տալով ծովի շուրջը
Ֆրռնաթաթախ և վազե վազ,
Շունչը կտրած և հազիվ հազ,
Ջարին տալով իր մի վոտը՝
Իրան գցեց Բալդու մոտը.
Ցեվ ինչ տեսավ են լդպորը—
Բալդին շոլում է լեղրորը.
«Ապրի, ապրի իմ մոր բալեն,
Խիստ հոգնել է զիլ վազելեն»։
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով լերկար տուտը,
Ասավ.— Գնամ բերեմ հարկը
Վոր լցրել է պապս պարկը։
Գնաց Թոռը պատմեց պապին,
Թե հաղթվեց ծովի ափին։

Բալդին նորից
Թոկն վոլորեց,
Կախեց ծովից,
Խիստ փոքրկից
Ձայները լեկան
Ծովի տակից։
Մի այլ հնարք գտավ պապը
Ցեվ ուղարկեց Թոռին ափը.
Թոռը լեկավ, ասավ Բալդուն.
— Հերիք խառնես մեր ծովը դուն,
Ես ինչ կարգ է,
Ես ինչ վարք է,
Քու ուզածը

ՖՈՒԴ ՄԵՆՑԻԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՆԹԻԼԻԱՍ

Ես ինչ հարկ ե.
Ես ինչ լուր ե,
Ինչ սխրուր ե,
Ինացած կա գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, վոր կուզես, մենք ել կըտանք
Բայց մի պայման չըմոռանանք։
Մեզնից հեռու—գետնի վրա,
Վ՛րտեղ կուզես, նշան արա.
Ձեռքիս փայտը ով մեզանից,
Դեն շպրտի են նշանից,
Թող նա տանի վոսկու պարկը—
Ցերեք տարեն ժողված հարկը։
Հը՛, լավեցար,
Տես վախեցար
Թևդ չարդի
Վախկոտ Բալղի։—
«Հա, վախեցա թևս չարդի.
Հլա լեզվին ես լակոտի,
Հլա մոխկ պուճուր շանը։
Ա՛յ, են ամպն ե իմ նշանը։
Փայտդ ենտեղ յես կընետեմ.—
Ա՛նուհետև յես ձեզ դիտեմ»...
Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը
Ցեվ յեղածը ծովի ափին
Նա կցկտուր պատմեց պապին։

Բալդին նորից
Թոկն վոլորեց
Կախեց ծովից,
Ինստ վոթորկից
Ձայները լեկան
Նոր հատակից։
Դարձյալ լեկավ են լղպորը.
— Մ՛է անիծվի ես մեր որը,
Բալդի, ունեմ և մի նոր բան...
«Ուս, կաթնակերը, չքոտ, անբան,
Հերթն իմն ե, ասավ Բալդին
Են աներես չարի ճուտին.
Տեսնում ես դու՝ են մատակ ձին
Ուրածում ե ջոկ, առանձին.
Ցեթե նրան բարձրացընես,
Ձեռքերովդ կես վերստ տանես,
Ձեզ կըբաշխեմ ես ձեր հարկը,
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»։
Մատանեն եր ես խոսքի հետ
Հասավ ձիուն, իսկույն և եթ
Առավ նրան իր ձեռներին.
Ջոռը տալով ջուխտ ծնկներին.
Բայց լերկու քայլ դեռ չըփոխած,
Փռվեց գետնին, սաստիկ դողաց.
«Ժուլիկ,մուլիկ չար սատանա.
Վրադ հոգոց ռվ կըկարդա,
Վեր կաց, վեր կաց, չարի ճուտիկ,
Աչքերդ բաց ու ձին մտիկ,
Դու չըտարար ինձ ձեռներով,
Ցես կըտանեմ ես վոտներով».
Ասավ Բալդին ու ձին հեծավ,

Վոտների մեջ նրան առավ,
Մի վերստ տեղը խուկուլն անցավ,
Փոշին լելավ, դուման դառավ․
Նոտեղ դարձյալ չարի ճուտը՝
Զրհասկանալով Բալդու սուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Ծունչը առավ պապի քովը,
Իր տեսածը ծովի ափին
Նա կըցկըտուր պատմեց պապին։

Բալդին նորից
Թոկն վոլորեց,
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Ջալներ լեկան
Խոր հատակից․
Հնարք չըկար․ սատանեքը
Հավաքեցին իրանց հարկը,
Շալկած բերին Բալդու մոտը
Մեղա գալով ընկան վոտը,
— Ա՛ռ ուզածդ, գնա, ասին,
Միայն հանգիստ տուր մեր դասին։

Բալդին լեկավ տնքտնքալով,
Վոսկին մեջքին գնգգնգալով։
Վա՜յ իմ որին՝ տերտերն ասավ,—
Թռավ տեղից, տեղ չըգտավ,
Կնկա փեշի տակը մտավ,
Բալդին նրան փեշի տակից
Քաշեց հանեց՝ բռնած միրքից․
Ասավ․ «Բերի լես քո գանձը։
Տարվա վերջն ե, տո՛ւր իմ վարձը»։

Ես տեր ժլատը
Բռնեց ճակատը
Բալդին մի հետ կըտտացրեց,
Նրան ոճորքը թռցրեց.
Մի անգամ էլ կըտտացրեց,
Լեզուն բերնում լռեցրեց.
Վերջն էլ վոր չըկտտացրեց,
Ինձ տերտերին գժվացրեց.
Ժլատ ծերուկ, ես քեզ մի դաս,
Եժանության էլ ման չըգաս.
Ասավ Բալդին ուրախ, ուրախ
Ցեխավ գնաց անվարձ, անհախ:

1891

ՎՈՍԿՒ ՁԿՆԻԿ



Ուր ծերուկ ձկնորս և իր պառավ կինն
Բնակում էին Մեծ ծովի ափին.
Ծերը գնում եր ձուկ բռնում ծովից,
Պառավն էլ տանը թել մանում բրդից.
Այսպես միասին՝ մի հին գետնատան,
Ցերեսուներեք տարի ապրեցան։

Ահա մեկ որ էլ ծերը գնաց ծով,
Վոր ձուկը վորսա իր մաշված ցանցով.
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձգեց,
Առաջին անգամ միայն տիղմ հանեց.
Ցերկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,
Ցանցը դուրս լեկավ ծովային խոտով.
Իսկ լերրորդ անգամ վոր ցանցը ձգեց,—
Ո՞վ կարե ասել, թե ինչ դուրս հանեց.—
Նա բերավ իր հետ մի վոսկի ձկնիկ՝
Ձկանց արքայի դուստրը գեղեցիկ.—
Ծերի ցանցն ընկավ, իբրև խեղճ գերի,
Վոսկի աղջիկը ձուկ թագավորի։

Ծեղճ վոսկի ձկնիկ. ինչպես և խնդրում,
Մարդկային լեզվով ծերին աղաչում.

«Թող ինձ, թող, ծերուկ, թող ինձ անվտանգ,
Քեզ կըվճարեմ թանկագին փրկանք.
Ինչ սիրտըդ ուզի, ինչ վոր կամենաս,
Ուղիղն եմ ասում, ինձնից կըստանաս»։
Վախեցավ ծերը. Ինաց զարմացած,
Նա այնքան տարի ձկնորս եր լեղած,
Բայց ձկան մասին լերբեք չեր լսել,
Թե նա մարդու պես կարող ե խոսել։
«Գնա տեր ընդ քեզ, ասաց ծերունին,
Ինձ հարկավոր չե փրկանք թանկագին.
Գնա քեզ համար դու ծիրանի ծով,
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»։

Այս դեպքից հետո ծերը տուն դարձավ,
Պատմեց պառավին՝ թե ինչ բան տեսավ.
«Այսոր լես ծովից, գիտես ինչ, ա կնիկ,
Բռնեցի հանկարծ մի վոսկի ձկնիկ.
Վոսկի լեմ ասում և վոչ քո գիտցած,
Այսպիսի հրաշք վոչով չի տեսած։
Նա խոսել գիտեր ուղիղ մեր լեզվով,
Աղաչանք արավ, վոր հետ ձգեմ ծով.
«Թող, ասաց, խնդրեմ, թող ինձ անվտանգ,
Քեզ կըվճարեմ թանկագին փրկանք».
Բայց լես վոչ մի բան չըպահանջեցի,
Վոչինչ չեմ ուզում, գնա, ասացի,
Գնա քեզ համար դու ծիրանի ծով,
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...
Պառավը լերբ վոր այս բանը լսեց,
Ծեղճ ալևորին շատ հանդիմանեց,
Թե ինչու՛ ձկնից փրկանք չի ուզել,
Ու այնպես ձրի հետ ծովն ե ձգել։

«Ա՛յ հիմար անմիտ, հայհոյեց ծերին,
Գոնե կասեիր դու վոսկի ձկկին՝
Մի նոր տաշտակ տուր տանեմ իմ կնկան,
Մերը կոտրած է, էլ չէ պետքականը»...
Դարձավ ծերունին ծովի ափ գնաց.
(Տեսավ նա ծովը մեղմիկ ծածանված).
Կսկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ջուկը լողալով՝ մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինես, Թագուհի-Ձկնիկ,
Ինձ նախատում է իմ պառավ կնիկ,
Հանգիստ չի թողնում խեղճ ալևորիս,
Վըրաս վըրթմըրթում, ուշունց է տալիս,
Մի նոր տաշտակ է հարկավոր իրան,
Մերը կոտրած է, էլ չէ պետքականը»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, տեր ընդ քեզ, մի՛ տխրիլ, ասաց.
Թող քու պառավը շատ չընեղանա,
Այսոր նա մի նոր տաշտակ կունենա»...

Հետ դարձավ ծերը դեպի յուր տնակ,
Տեսավ կնկա մոտ մի սիրուն տաշտակ.
Բայց կինը գոհ չեր. նա այս անգամ էլ
Կսկսեց ծերին սաստիկ նախատել.
«Գնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
Ի՞նչու մի ուրիշ բան չըխնդրեցիր.
Էլ մի ուշանար, շուտով հետ դարձիր,
Ցեվ վոսկի ձկնից մի լավ տուն ուզիր»։
Ծերունին դարձավ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը պղտորված)
Կսկսեց կանչել վոսկի ձկնիկին.

Ձուկը լողալով՝ մոտեցավ Ծերին.
«Ի՞նչ ես կամենում, Ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Ինձ շատ նախատեց իմ պառավ կնիկ.
Գնացիր՝ ասում է՝ տաշտակ ուզեցիր,
Ի՞նչու մեկ սիրուն տուն չընդունեցիր»։
Ոսկի ձկնիկը Ծերունուն խղճաց.
«Գնա, տեր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց...
Թող լինի այնպես՝ ինչպես կամենաք,
Ամեն նա մեկ լավ տուն էլ կունենա»...
Ծերը հետ դարձավ կրկին դեպի տուն՝
Էլ նա չըգտավ իր հին գետնատուն.
Մի նոր տուն տեսավ լուսամուտներով,
Կըտուրից հանած ծխահաններով,
Պատ ու վառարան մաքուր սրվաղած,
Կրով ու կավճով սիպտակացրած—
Վարպետի տաշած, կաղնի տախտակից,
Մեծ դուռն էր կախած լալն բակի կողմից։
Պատուհանի տակ կինն ուռած նստել,
Իր չարությունից ուզում է տրաքել։
Ի՞նչ անեծք ասես աշխարհքիս տակին՝
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գլխին.
Վերջը՝ լերը փոքր ինչ բարկությունն իջավ,
Մուրթը կախած՝ Ծերունուն դարձավ.
«Անշնորհք Ծերուկ, տնաշեն ուզեցիր,
Ցերևի քո մեջ մեծ բան կարծեցիր.
Հետ դարձիր, անխելք, հետ դարձիր գնա,
Ոսկի ձկնիկին իմ կողմից ասա,
Որ էլ չեմ ուզում ինալ գեղջկուհի,
Ուզում եմ լինել մեծ իշխանուհի»...

Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
(Այս անգամ տեսավ ծովը վրդովված).
Ըսկսեց կանչել վոսկի ձկնիկին.
Ջուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Հանգիստ չի տալիս ինձ իմ չար կնիկ,
Ել չի կամենում ճնալ գեղջկուհի,
Ուզում է լինել մեծ իշխանուհի
Ձրգիտեմ գլուխն ինչ քամի մտավ,
Վոր գեղջկությունից հանկարծ ձանձրացավ»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, տեր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց.
Թող քո պառավը հենց այս որվանից
Ազատ համարվի իր գեղջկությունից»...
Հետ դարձավ ծերը, և ինչ է տեսնում.
(Կարծեց ցնորք է աչքին յերևում).
Մի տուն հոյակապ. վերնասրահում
Պառավն է կանգնած ինչպես նոր խանում.
Հագին սամուրե բաճկոնակ սիրուն,
Գլխին դիպակե չարղաթ գույնզգույն
Վիզը զարդարած մարգարիտներով,
Մատներին մատնիք անգին քարերով,
Մաշիկներն ինչպես կաս-կարմիր վորդան,
Մյուս հագուստներն ել մետաքս պատվական:
Ծառաներ ունի մի քանի տասնյակ,
Բոլորն ել իրան հրլու հպատակ:
Մարդին վոր տեսավ՝ պառավը կատղեց.
Խեղճ ծառաներին ծեծել ըսկսեց.
(Կարծում եր խեղճը, վոր իշխանուհին

Պետք է վոր ծեծե իր ծառաներին)
Հալհոյանք թափեց ամենքի վերա,
Տեղի անտեղի քոթկեց անխնա.
Մեկի մազերից բռնեց քաշքշեց,
Մյուսին էլ մի լավ ապտակներ զարկեց։
Մերը մոտեցավ դող-դող քայլերով
Ասաց պառավին՝ խոր գլուխ տալով,—
«Բարով գերազնիվ խանում-խաթունիս,
Հիմա խոմ գոհ ես, հանգիստ կըլինես»...
Պառավ տիկինը այնպես բղավեց,
Վոր խեղճ ծերունու լեղին պատռեց.
Նորան հրամայեց, վոր խնկուշն գնա
Գոմն ավլե, քերե, ու այնտեղ ճնա։

Մեկ-յերկու շաբաթ հազիվ անցկացավ,
Պառավ խանումը նորից կատղեցավ.
«Շուտ կանես կերթաս, ասում է մարդին,
Ու իմ կողմանե կասես ձկնիկին,
Վոր էլ չեմ ուզում տիկնությունն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...
Այս խոսքի վերա ծերունին սոսկաց,
Ցեվ աղաչելով պառավին ասաց.
«Գժվել ես, ա կնիկ, չես չեմ հասկանում,
Արդյոք դու գիտես ինչ ես ցանկանում։
Մեկ նայիր վերադ, շենք ու շնորհքիդ,
Լըբլըբան լեզվիդ, ծուռումուռ քայլքիդ,
Ախըր ինչ ունես թագուհու վայել,
Վոր խելքիդ այդպես քամի է փչել.
Արի լսիր ինձ, մի՛ անիլ այդպես,
Ամբողջ աշխարհքին կըծիծաղեցնես»...

Ել չըհամբերեց մեր պառավ տատը,
Որ վերջացներ մարդն իր խրատը,
Նա այնպես գոռաց, այնպես վորոտաց,
Որ ամբողջ տունը հիմնովին թնդաց.
«Ինչպես թե այդպես, հանդուգն ըստահակ»,
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ,
«Համարձակվում ես, գռեհիկ անգետ,
Վիճել վեհազն իշխանուհուս հետ.
Քեզ հրամայում են պատվավոր խոսքով,
Որ խակուչն գնաս քու հոժար կամքով,
Ցեքեք վոչ՝ ահա ժողովված կշտիդ,
Սրանք կըտանեն՝ խփելով վզիդ»։
Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց.
(Ախ անգամ տեսավ ծովը սևացած).
Ըսկսեց կանչել վոսկի ձկնիկին,
Ձուկը լողալով մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, Թագուհի-Ձկնիկ,
Ելի լե կռվում իմ պառավ կնիկ.
Ներիր ինձ, խնդրեմ, լեռ ամաչում եմ,
Որ չար պառավիս նոր ուզածն ասեմ.
Բայց վոր ջուրն ընկնիմ, հանգիստ չի թողնում,
Կրակն է դցել, այրում, խորովում.
Գնա, ասում ե,— ախ, նզովյալ կին—
Շուտ գնա ասա վոսկի ձկնիկին,
Որ ել չեմ ուզում տիկնուքյուն անել,
Ուզում եմ ազատ Թագուհի լինել»...
Վոսկի ձկնիկը ծերունուն խղճաց.
«Գնա, տեր ընդ քեզ, մի տխրիլ, ասաց,

Թող քո պառավի ուղածը լինի,
Թող գնա դառնա ազատ թագուհի»։

Ո՛վ կարե պատմել, թե ծերն ինչ տեսավ,
Ցերբ ձկան մոտից տուն վերադարձավ.
Ել ինչ տուն, ինչ բան, դու արքայական
Ապարանք ասա, կամ հսկայական
Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած՝
Բարձր բուրգերով չորս կողմը պատած,
Շքեղ դահլիճներ, անթիվ սենյակներ,
Մարդ կըշըշկլվեր, լեթե մեջն ընկներ։
Ծերը բարձրացավ մարմար սանդուղքով,
Մի դահլիճ մտավ խիստ պատկառանքով
Առջևը բացվեց մի նոր տեսարան,
Ցերբ աչնտեղ գտավ իր պառավ կնկան.
Նա հիմա ազատ թագուհի դառած՝
Ոտք ու փառք ճաշի լեն նստած.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բեկեր,
Վոտի լեն կանգնած վորպես ծառաներ,
Թագուհու համար գինի լեն ածում
Ցեվ ահուդողով աչք-ունքին նայում.
Շեմքում կանգնել են ահեղ զինվորներ,
Ուսերին բռնած կացնաձև սրեր.
Մենակ պառավը եր սեղանին բազմել,
Ո՛վ կըհանդգներ նրա հետ նստել.
Բայց կերակուրներն աչնքան շատ եյին,
Վոր հարյուր հոգի կըկշտացնեյին.
Ցեվ քանի՜ տեսակ անծանոթ բաներ,
Ի՜նչ անուշեղեն, ինչ տապակներ...
Պառավը ուտում եր մեծ ախորժակով,
Ու գինին դարտկում լիքը բաժակով.

Վերջն էլ մեղրահաց կերավ բավական,
Որ քաղցրացնեք իր շրթունք ու բերան։
Ծերն այս տեսնելով՝ ճնաց շփոթված,
Ընկավ պառավի ոտքերն ու ասաց.
«Բարով քեզ, բարով, ահեղ Թագուհի,
Քո մեծությունը հավիտյան լինի»։
Այս խոսքից հետո կամաց շընչեց
Ու փսփսալով պառավին հարցրեց.
«Հիմա որ բախտի վերին ծայրումն ես,
Ծոմ բավականն ես, ա կնիկ, ինչ կասես...
Թագուհի դառած պառավն այս անգամ
Մարդի լերեսին չընայեց անգամ.
Հրաման մոմոաց նա քթի տակին,
Որ դուրս վռնդեն մեր անկոչ հյուրին։
Հենց որ լավեցավ Թագուհու հրաման,
Հնազանդ լերևալ ամենքն ուզեցան.
Մեծ մեծ իշխաններ, խաներ ու բեկեր,
Ինչպես որսորդի արնախում շներ,
Ոտիերով ծերի շրընքակոթին՝
Շքեղ դահլիճից դուրս վռնդեցին.
Շեմքումը կանգնած պահապաններն էլ
Իրանց կացիններն ելին պատրաստել,
Վրա վազեցին ամենքը մեկեն,
Ու քիչ ճնաց որ՝ խեղճին խողխողեն։
Ինչպես որ լեղավ, մի կերպ դուրս պրծավ,
Դուրան էլ ամբոխի ծաղրի տակն ընկավ,
Որ կարծես նրան լիներ սպասում
Անձրևի տակին՝ ցեխոտ փողոցում.
—«Ա՜յ թե լավ արին, ծերուկ դու անգետ,
Ո՞ւմ հետ ես մեկնում անճոռնի վոտներդ,

Թող այդ քեզ համար լինի լավ խրատ,
Վոր եվ չըցանես մանդը կտավհատ»...

Այս դեպքից հետո շատ որեր չանցան,
Պառավի այծերն եվի մոտ յեկան.
Ուղարկում է նա իր իշխաններին,
Վոր գտնեն բերեն արտաքսած ծերին՝
Ցեկավ ծերունին։ Պառավն սկսեց.
«Դու պետք է գնաս ձկան մոտ, ասեց.
Կերթաս խոր գլուխ կըտաս դու նրան
Ու իմ փափագը կըհայտնես իրան.
Կասես՝ չեմ ուզում ինալ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի.
Ուզում եմ Ովկիան ծովումը կենալ,
Վոսկի ձկնիկին ծառա ունենալ,
Վոր իմ հրամանին միշտ պատրաստ լինի,
Ցեվ ինչ ուզենամ, իսկույն կատարի»...
Պառավին լսեց ծերը լուռ ու մունջ,
Առանց հայտնելու վորևե տրտունջ։
Ծերունին դարձյալ ծովի ափ գնաց,
(Այս անգամ ծովը խիստ եր փոթորկված,
Փրփրած ալիքներ սարեր դառնալով՝
Իրար են զարկվում ահեղ գոռալով).
Վողբաձայն կանչեց վոսկի ձկնիկին,
Ջուկը լողալով՝ մոտեցավ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ», հարցրեց.
Ծերը գլուխ տվավ ու պատասխանեց.
«Վողորմած լինիս, թագուհի-Ձկնիկ,
Իսպառ գժվել է իմ պառավ կնիկ.
Ի՞նչ անեմ արդյոք այդ նզովյալին,
Մինչև լերը տանջվեմ քավթառի ձեռին.



Ել չի կամենում թագուհի լինել,
Այլ տես անիծածն ինչ է միտք արել՝
Իշխել է ուզում բոլոր ջրերին
Ու իշխանուհի դառնալ ծովալին.
Ուզում է Ովկիան ծովումը կենալ,
Վոսկի ձկանըդ ծառա ունենալ,
Վոր իր հրամանին միշտ պատրաստ կենաս,
Ու ինչ ուզենա, շուտ կատարում տաս»...
Վոսկի ձկնիկը լուռ ու մունջ լսեց,
Բայց եվ ծերունուն չըպատասխանեց.
Ջրի յերեսին շըրմփեց պոչով
Ու անցավ, գնաց դեպի խորին ծով...
Շատ ճնաց ծերը և շատ նայեցավ,
Բայց վոսկի ձկնիկն եվ չերևեցավ.
Դարձավ դլխակոր վոր հայտնե կնկան,
Թե ինչ փորձանքի մեջ գցեց իրան...
Ցեվ գնաց, տեսավ... (բայց ինչ տեսնի լավ,
Վոր արդար լինի և վոչ անիրավ).
Հին խուղի շեմքում պատռավը նստած,
Կոտրած տաշտակը առջևն ընկած...

1833

Քնած դշխուհին յեվ յոթ քաջերը



Նաս բարով ասելով
Թագավորը Թագուհուն՝
Գնաց. չեկավ մի տարով,
Թագուհին եր, որն ի բուն,
Առավոտից իրիկուն,
Առագաստում կենտ նստած՝
Լուսամուտին աչքն հառած՝
Ընպասում եր, սպասում
Ցեվ աչքերը վընասում։
Աչքերն ենքան նայեցին,
Վոր նայելուց ցավեցին։
Ձկա՜, չկա՜ հոգյակը,
Սիրտն ե այրում փափագը։
Միայն բուքն ե խիստ հուզվում,
Ձյունն ե գալիս ու դիզվում.
Ինն ամիսն ե հա անցնում,
Առագաստում Թագուհին
Ջրորհնեքի սուրբ տոնին
Պառկում բերում մի աղջիկ,
Ինչպես վարդի մի փնջիկ։

Առավոտուն, լուս ու մութ,
Արքան լեկավ, ինչ ոգուտ.
Վրան նայեց թագուհին,
Ծանը-ծանր հառաչեց
Ու հուզմունքից խստագին
Ճաշին ընդմիշտ նա ննջեց։

Արքան մընաց սգավոր.
Նա էլ մարդ եր մեղավոր.
Տարին անցավ վոնց լերազ
Նա կին առավ դեռահաս.
Բարձր, սիրուն, նազելի,
Բայց բնուլթը զըզվելի,
Զար ու հպարտ, կըտըրտան.
Կասկածոտ ու մըրթմըրթան։
Ոժիտ ուներ լի ու լի,
Հետն էլ մի հատ հայելի,
Պետք է ասեմ ավելին,
Խոսել գիտեր հայելին.
Հետը ուրախ խոսում եր
Ու զուռվելով ասում եր.
— Ասա դու ինձ, հայելի,
Ո՞վ կա ինձնից ավելի
Արմաղ-շարմաղ, սիրելի։
Հայելին իսկույն և եթ
Խոսում եր թագուհու հետ.
«Չկա քեզնից ավելի
Արմաղ-շարմաղ, սիրելի»
Ու թագուհին հրոհռում,
Զուլգ ուսերը ծըռմռում,
Քթի տակը մըռմռում,

Աչքերը ճը՜տ-ճտտացնում,
Մատներով չը՜տ-չտտացնում,
Ձեռքը մեջքին կանթ արած՝
Կանգնում հայելու դիմաց։

Արքազնուհի աղջիկը,
Հոտով վարդի փնջիկը,
Հետզհետե ծաղկելով՝
Մեծանում էր օրերով։
Աչք ու ունքը սև սաթ էր,
Լույսը դեմքից կըկաթեր.
Դարձավ սիրունի փեսեն
Իշխանազուն Ցեղիսեն.
Հոր մոտ ղրկեց նա պատգամ.
Արքան ասավ. «Հա՛ կտամ»—
Յոթը քաղաք, շատ դղյակ—
Տվեց օժիտի տեղակ։
Թագուհին առագաստում
Իրա՜ն զուգում, պատրաստում
Ու հայելուն նա ելի.
— Ասա՛ դու ինձ, հայելի,
Ո՞վ է ինձնից ավելի
Արմաղ-շարմաղ, սիրելի։
Հայելին թե, Թագուհի,
Լսիր, քեզնից ավելի
Խորթ աղջիկդ է սիրելի։
Թագուհին է վեր թռչում,
Խփում նրան ու ճչում.
— Ա՜յ դու անպետք ապակի,
Քո սրտիկը թող ճաքի.
Դու ուղիղը չես ասում.

Վրդովել ես ինձ ուզում։
Ա՛յ թե ինչպես աճեց նա.
Հարկե, սպիտակ կերևա.
Հղի մայրը մեն-մենակ
Լուսամուտից շարունակ
Ձյունին էնքան է նայել,
Որ աղջիկն է սպիտակել.
Բայց ինձ ասա դու էլի,
Իմ աննման հայելի.
Մի՞թե յես չեմ դշխունը,
Աշխարհի մեջ նշխունը։
Պատասխանեց հայելին.
«Խորթ աղջիկդ է սիրելին»։
Վոնց թե կծած սև ոձից,
Զար թագուհին նախանձից
Էն հայելուն մի բրթեց,
Բռնեց մի կողմ շպրտեց.
Ճչաց, կանչեց նաժիշտին,
Կանչեց բերեց իր կշտին.
Ասավ. «աղջի, քեզ հետ եմ,
Թե չէ մազդ կըփետեմ.
Խորթ աղջկաս հետդ առ,
Իսկույն և եթ տար անտառ.
Կապի՛ր նրան ծառերին,
Բաժին դառնա գայլերին»։

Աստված պահի կնոջ հերսից,
Սատանան էր խոսում ներսից.
Հետը վիճել չէր կարելի,
Մի կրակ էր անմարելի։
Նաժիշտն առավ վարդ դշխուհուն,
Տարավ անտառ, այնպես հեռուն,

Վոր աղջիկը ընկավ գլխի,
Արցունք թափեց ալի-լեղի
Ու աղաչեց. «Հույսըս, լույսըս.
Ի՞նչ եմ արել անմեղ կույսըս.
Դու ինձ խղճա, ինձ խնայի,
Յերբ վոր դառնամ յես թագուհի,
Կըկատարեմ քո բաղձանքը».
Նա ել լսեց աղաչանքը,
Վոչ սպանեց և վոչ կապեց,
Տեղը թողեց տուն ըշտապեց։
— Ի՞նչ, հարցրեց չար թագուհին,
Վո՞րտեղ մնաց քո դշխուհին։
— «Խոր անտառում, ասեմ ճիշտը,
Պատասխանեց սև նաժիշտը.
Յես կապեցի զույգ արմունկից,
Ել չի պրծնի գայլի ճանկից.
Լափե ել են ե չըտանջըվի,
Խոր անտառում թող ջընջըվի»։
Լուրը հասավ վողջ աշխարհին,
Թե կորել ե արքազնուհին։
Թագավորը մնաց՝ լալեն,
Լալեն, լալեն, մղկտալեն.
Ու պատանի անբախտ փեսեն,
Իշխանազուն են Յեղիսեն,
Սիրող սիրտը հա տանջելով.
Ով տեր աստված հա կանչելով
Գնաց գտնի նշանածին։
Հիմի գնանք մենք կորածին.
Մաղիկ, մաղիկ մղկտալեն,
Ես կողմ, են կողմ վեր, վար տալեն,
Մութ անտառը տվեց անցավ,

Մի դղյակի նա մոտեցավ.
Շունն հաջելով վրա վազեց,
Մոտը գալով վոտը լիզեց.
Թափառական հյուրը չքնաղ
Սրահ մտավ լուռ ու խաղաղ.
Պատշգամբը լեզավ վախով,
Դուռը բացեց լերկաթ ախով.
Մտավ սենյակ և վոչ մի շունչ,
Զորս պատերը կանգնած են մունջ.
Բալց տախտերին խալ—խալիչա
Ցեվ հատակին նախշուն քեչա.
Մի անկյունում վալտե սեղան,
Մի անկյունում մեծ վառարան.
Տեսավ կուլյը դատարկ տեղ չի,
Բարի մարդկանց մոտ չի կորչի.
Ու սենյակից դես-դեն մտավ,
Ցաք ու ցրիվ ինչ վոր գտավ,
Սրբեց, մաքրեց ու վեր քաղեց,
Ընկած բանը տեղից կախեց,
Ու սենյակի դուռը ախեց.
Սրբի առաջ վառեց կանթեղ,
Գնաց մտավ մի ծածուկ տեղ։

Ճաշի ժամին, մին էլ ահա,
Բակը լցվան լոքն ածդահա,
Ցոքով մտան սենյակը ալն.
Մեծը ասավ. «Ես ինչ նոր բան.
Ամեն ինչը արգի-կարգի.
Ո՞վ է բերել տունը սարքի։
Ո՞վ ես, ձվ չես, առաջ արի.
Տեսնենք չար ես դու թե բարի.
Թե մի մարդ ես դու ալևոր —

Մեր բիձեն ես դու պատվավոր.
Թե պատանի — Ջիվան-Ջահել —
Մեր ախպերն ես ախպոր վալեր.
Թե ծեր կին ես-մայր լեղիր մեզ,
Մեզ ել վորդի արա դու քեզ.
Թե աղջիկ ես հուբիկ-բուբիկ —
Ցեղիր դու մեզ անուշ քուբիկդ։

Ցել `դշխուհին լերևաց,
Մինչև գոտին խոնարհվեց,
Տան տերերին բարևեց.
վարդի նըման կարմըրեց.
Ներողություն նա խնդրեց,
Վոր անկոչ ու անծանոթ
Հյուր ե լեկել իրանց մոտ։
Իսկույն խոսքից իմացան —
Դշխուհի լե աղջիկն ալն.
Գորգի վրա նստացրին
Գաթա, գինի հրամցրին.
Թողեց գինին գավաթով
Ու գաթիցը, ամոթով,
Կարեց կերավ մի պատառ.
Հանգստանալու համար
Ցոթն ախպորից հյուրընկալ
Խնդրեց նա մի մահճակալ։
Ցոթն ախպորով միասին
Սենյակ տարան հյուր կույսին.
Թողին նրան մեն-մենակ
Ինի իրանց թևի տակ։

Որերն անցնում են կամաց,
Բայց դշխուհին նշանած

Ցոքն ախպորանց դղյակում
Համ ծլում ե, համ ծաղկում,
Ցեղբայրները խմբովի
Լուսաբացին՝ մի քովի
Գնում են միշտ մեն գալու,
Վայրի բաղեր զարկելու,
Կամ թե թուրք-մուրք փնտրելու
Ցեվ գլուխը կտրելու.
Հալածելու միասին
Պլատիգորսկի չերքեզին։
Ցեվ դղյակի տիրուհին
Ինքն ե վոր կա դղնուհին.
Վառում, լեփում, պատրաստում.
Ցոքի հետ սեղան նստում
Ու հակառակ չի խոսում,
Ջան ե ասում, ջան լսում,
Որերն եղպես են հոսում,
Հնգլաքն եսպես ե ասում։
Ցոքն ախպորով վարդ կուլսին
Սիրեցին. բարելուսին
Սենյակ մտան միասին.
Մեծը ասավ. վարդի բույը,
Անվանել ենք մենք քեզ քույը.
Բայց սիրել ենք քեզ յոթով,
Մեզ մի անի ամոթով,
Դու մի թուլլ տա, վոր կռվենք,
Պատճառ դառնաս, մենք ցրվենք։
Ցեղիը մեզնից մեկին կին,
Մյուսներիս քույը անգին.
Գլուխդ ինչ ես դու շարժում,
Մինե ինձ ես դու մերժում,

Ընտրի՛ր վո՞րս է քեզ արժան։
— Ո՛, դուք քաջեր պատվարժան,
Իմ յեղբայրներ սիրասուն.
Ճիշտն եմ, ճիշտը ձեզ ասում.
Աստված պատժի թե ստեմ,
Տեղիս մեջ վողջ չընստեմ.
Յես աղջիկ եմ հարսնացու,
Ունիմ յես ինձ փեսացու։
Դուք շատ քաջ եք ու խելոք,
Ձեզ սիրում եմ յես ջոկ-ջոկ,
Յեղբայրներս եք հարազատ.
Թողեք խոսեմ յես ազատ.
Նշանածս է, ձեզ ասեմ,
Իշխանազուն Յեղիսեն։

Յեղբայրները խորհեցին,
Ծոծրակները քորեցին.
— Վոր եդպես է, մեզ ներիր,
Քրոջ նման մեզ սիրիր.
Յես այդ մասին, ասեմ ճիշտ,
Էլ չեմ խոսի չեմ, ընդ միշտ, —
Գլուխ տալով մեծն ասավ.
Կույսը տեղի մեջ խոսավ.
«Հա. չես ուզում, ախպեր ջան,
Քույրըդ լինի դավաճան»։

Յոթն ախպերը փեսացու
Թողին աղջիկն հարսնացու.
Ուսիկ, փուսիկ գնացին
Յեվ խոսքի տեր մնացին։
Բայց նենգամիտ Թագուհին
Ձեր մոռացել ցավը հին.

Նա չէր ներում դշխուհուն,
Վրեն իրանից նա սիրուն։
Բայց թե են և ցավալին,
Գնաց գտավ հայելին.
Դրավ առջևն ու նստեց.
Իրան զուգեց, պատրաստեց.
Ծպտաց, ասավ. «հայելի,
Ասա, ասա ինձ եղի,
Ո՛վ է ինձնից ավելի
Արմատ-շարմատ, սիրելի»։

— Գեղեցիկ ես, խոսք չկա,
Բայց անտառում մինը կա,
Ցոթ ախպրանց դղյակում
Անհայտ ծլում ու ծաղկում.
Նա յէ քեզնից ավելի
Արմատ-շարմատ, սիրելի։
Ու թագուհին վեր թռավ,
Իր նաժիշտին ձեռք առավ.
«Վստահացիր ինձ խաբել,
Ցոթը աղջկաս չըկապել»։
Նա էլ պատմեց յեղածը.
Թագուհին թե՝ «չեղածը
Քո գլուխը կըբերեմ.
Քանի վողջ ե դշխուհին,
Վայը կըտամ քո որին»։

Մատաղ կուլսը մի ջերմ որ,
Ըսպասելով յոթն ախպոր,
Պատուհանում մանում եր.
Են ինչ դռան մեծ շունն եր,

Սաստիկ հաչեց ու կուչսը,
Տեսավ՝ ուզվորը դուրսը,
Պաշտպանվելով շընիցը,
Ներս է մտնում դըռնիցը։
— Ալ շուն, հանգիստ, ինչ է, ինչ.
Սպասիր դու, տատի, քիչ.
Կը լռեցնեմ յես գժին
Ու կըբերեմ քեզ բաժին,
Գոչեց վերից են կուչսը։
— Իմ զավակս, իմ լուչսը,
Շունդ ինչքան կատաղած է,
Աղքատ կուզե, վոր կըծե.
Ցեկ ինձ մոտ. — կուչսն ուզում է
Հաց բերի. շունն հուզվում է.
Պատշգամբին կպչելով,
Վոտներն ընկած հաչելով,
Թուլլ չի տալիս աղչկան
Մոտենալու են կնկան.
Հենց պառավը դեպ նրան,
Հարձակվում է հա վրան
Ինչպես կատղած, գազազած.
— Ես ինչ հրաշք, կուչսն ասաց,
Ես որ շունը ինչ վատ է,
Կարելի չե քնատ է։
Բերեց հացը ցած նետեց,
Շանը մի կերպ խաբտեց.
Պառավն առավ ու ասաց.
«Աղջիկ, որինի քեզ աստված,
Շունը վերև չի թողնի,
Ես խնձորը դու բռնի».
Ու մի խնձոր մեղրածոր,

Վոսկեզոծած, կարմրավուն,
Վեր է գցում դշխուհուն։
Շունը վերևն է գլում,
Կուլսը խնձորն է խլում։
«Շան հալոցը քեզ ինչ փուլթ,
Աղայնյակս, անձանձրուլթ,
Եղ խնձորը կարմրախետ
Անուշ կանես ճաշից լետ».
Պառավն ասաց, հեռացավ,
Շունը նորից չարացավ,
Նա վազում է, վազվզում,
Կոնծկոնծում է, մըզմըզում.
Մին չոքում է, մին պառկում
Ցեվ սրտիցը խոր տնքում.
Ասել կուզե դշխուհուն
«Դեն շպրտիր»։— Ալ իմ շունն,
Եսոր քեզ ինչ պատահեց,
Ասավ շանը ու շոյեց։
Հետո մոտավ սենյակը,
Դրեց, փակեց դռնակը
Ու սկսեց նա բանել,
Պատուհանում կազ մանել,
Ապրեշումից թել հանել,
Ախպրանց ճամբեն հա պահել.
Ալ խնձորին ծուռ նայել.
Խնձոր, խնձոր, ինչ խնձոր,
Կոտո, հյութոտ, մեղրածոր,
Հոտոտ-մոտոտ թարմ ու նոր,
Կարմրաթուշիկ, վոսկեհատ,
Կուտ ու կոըիզ նոան հատ
Ցերևում են կեղևից,
Նոր է քաղած տերևից։

Կուլսը լելավ սրտամաշ,
Զըհամբերեց մինչև ճաշ.
Խնձորն առավ նա ձեռքին.
Մոտեցրեց շրթունքին.
Մի քիչ կծեց ատամով
Ու կուլ տվեց խիստ համով.
Մին էլ հանկարծ իմ կուլսը,
Իմ հոգյակը, իմ լուլսը,
Անձեն, անձուն, անբարբառ
Փռվեց տեղը շնչասպառ։
Դալար կոներ թափվեցան,
Պալծառ աչքեր փակվեցան,
Վոսկի խնձոր գլորավ,
Նախշուն հասակ ճլորավ.
Ընկավ կուլսը նշանած,
Վո՛չ կենդանի, վո՛չ մեռած։

Ցեղբայրները անտեղյակ
Գալիս էլին դեպ դղյակ
Որվա հաջող թալանից.
Մին էլ շունը տան կողմից
Վրա պրծավ հաջելով.
Ու նորից տուն փախչելով
Կուզեր ասել՝ շուտ հասեք.
Ել մի, էլ մի սպասեք.
Են քաջերը վատ նշան
Հաշվելով հաջոցը շան,
Ըլացան, սենյակ լցվան,
«Ա՛խ, վախ»։ Շունը բարձրաձայն
Վրա պրծավ, չարացավ,
Խնձորը կերավ չորացավ.

Ել հետ չըգա եդ որը,
Թունավոր եր խնձորը։
Ցոթ աղբերը ամենքով,
Հոգու սաստիկ հուզմունքով,
Ջրով առաջ գլխակախ
Կանգնած եյին մտազբաղ.
Ու սրբազան աղոթքով
Բարձրացրին խնամքով,
Խաս-խաս շորեր հագցրին,
Հագցրին ու կապցրին,
Աղի արցունք մաղեցին,
Նրան թաղել ուզեցին.
Բայց մտքերը փոխեցին։
Խորը քնի թևի տակ,
Ինչպես քնած հրեշտակ,
Կուլսը անուշ եր ննջում,
Միայն, միայն չեր շնչում։
Ցեղբայրները չերեք որ
Սուգ նստեցին-սգավոր.
Բայց դշխուհին նախ-նախշուն
Խոպոպները աբրեշում,
Իր խոր քնից չըսթափվեց.
Ցերեք որը թամամվեց,
Դրին դագաղ բլուրեղյա
Ու կարդալով «տեր-ուղղյա»,
Տարան նրան թափուր սար,
Սարի տակին մի խոր ալը.
Շղթաներով կախեցին,
Ցոթը սլունից մեխեցին,
Շուրջը ճալեր տնկեցին,
Ջրով առաջ չոքեցին,

Ծունը դրին լերկրալին.
Խորհրդավոր եղ պահին
Մեծը ասավ.— ալ չքնաղ,
Ջահել մտար դու դագաղ.
Ջոհ գնացիր նախանձին.
Գեղեցկուքիւնդ առանձին,
Ցօթն ախպօրով սիրեցինք.
Բալց քեզ փեսիդ պահեցինք.
Հիմի դու կաց այս վալրում,
Մութ ու մթին այս ալրում։

Ցեվ թագուհին նախանձոտ
Թե կլսի մահվան բոթ,
Նորից առավ հայելին
Իրա միակ սիրելին.
Ասավ.— ասա, հայելի,
Բոլորիցը ավելի
Մ'իթե լես չեմ սիրելի։
Հայելին թե՝ հա ելի,
Զըկա քեզնից ավելի
Արմաղ-շարմաղ սիրելի։

Նշանածին են փեսեն,
Իշխանազուն Ցեղիսեն,
Վողջ աշխարհն է ման գալիս,
Ման է գալիս ու լալիս.
Պատահողին հարց տալիս.
Ասէք, ո՞ւր է դշխուհիս,
Ասէք, ո՞ւր է նշխուհիս։
Ով լսում է, զարմանում,
Վորը հայտնի ծիծաղում,
Վորը գլուխը կախում.

Ու արևին լուլս լերես
Դիմեց փեսեն վերջապես։
Արև, արև, արեգակ,
Աշխարհն առած թևիդ տակ,
Կլոր տարին շարունակ
Ման ես գալիս լերկնքով.
Բա չի՞ ընկել քո աչքով
Իմ դշխուհին նորահաս,
Ճես փեսեն եմ անմուրազ։
— Վոչ, չեմ տեսել, պատանի,
Ինձնից կարծիք մի տանի,
Գուցե նա չի կենդանի,
Գուցե մի տեղ լուսնյակը
Տեսել է քո հոգյակը։
Ճեղիսեն իր հուշերով
Դիմեց լուսնուն գիշերով.
— Լուսին, լուսին, լուլս լերես,
Դու վոսկեզոծ լեղջյուր ես.
Աչըդ խաժուժ, լուսաեջ,
Դու ծագում ես մթի մեջ,
Քեզ աստղերը սիրելով
Հա ճոում են նայելով,
Մթթե խնդիրս ես մերժում։
Մի տեղ ես լեն աշխարհում
Ջեռ տեսել իմ դշխուհուն,
Նա իմ հարսն է, լես փեսաս։
Լուսին, լուսին, ղեհ, ասա։
Լուսինն ասավ.— Պատանի,
Ինձնից կարծիք մի տանի,
Գիշերները մութ-մթին,
Ճես ծագում եմ իմ հերթին.

Յես չեմ տեսել դշխուհուն,
Գնա՛, դիմիր դու քամուն.
Գուցե նա քեզ ճար անի,
Գնաս բարով, մի կանգնի։
Քամուն դիմեց Յելիսեն.
— Կանգնի՛, քամի՛, քեզ ասեմ,
Քամի, քամի, կորովի.
Հալածում ես խմբովի.
Էն յերկնքի ամպերը,
Հուզում, դիզում ծովերը
Ու քո անուշ հովերը
Տարածում ես անսահման.
Դու հզոր ես անպայման.
Դու չես վախում վոչվոքից,
Բացի, բացի Ե՛ն Մեկից։
Մի՞թե խնդիրս ես մերժում,
Մի տեղ ես լեն աշխարհում
Չե՞ս տեսել իմ դշխուհուն,
Նա իմ հարսն է, յես փեսա։
Քամին ասավ.— Յես տեսա.
Գետից վերև կա մի սար,
Էն սարումը մի խոր այր,
Էն այրումը — խավարում,
Բյուրեղ դագաղ որորվում.
Շղթաներով է կախած,
Յոթը սյունից է մեխած։

Քամին բացեց իր թևը.
Տղան առավ սուգ-սևը.
Լալով գնաց հեռացավ,
Թափուր սարին մոտեցավ.

Սարի շուրջը դաստարկ վալը,
Սարի տակը մի խոր ալը։
Գնաց, գնաց մութ անցքով,
Գնաց տխուր հայացքով.
Գնաց գտավ մի դագաղ
Շղթաներով վերից կախ
Ցեվ դագաղում — հա անշունչ
Իր դշխուհին վարդի փունջ.
Վալը տալով իր գլխին,
Վազեց կպավ դագաղին.
Ցեվ դագաղը բյուրեղից
Հա փշրվեց իր տեղից.
Կուլսը զարթնեց զարմացած,
Շուրջը նայեց ու ասաց.
— Ա՜խ, ևսքան ել մարդ քնի,
Իր գլուխը վեր դնի...
Վեր բարձրացավ դագաղից
Ցեվ ինչ տեսավ ենտեղից.
Վալ, լերազ ե, մուրազ ե,
Ու լաց լեղան լերկուսով.
Ալրից լելան ու լուսով
Հեռու ծալրից աշխարհքի,
Ուրախ, գվարթ, ձեռք-ձեռքի,
Սարեր, ձորեր շրջելով,
Անուշ, անուշ զրցելով,
Ինչպես լերկու աղունիկ,
Ցեկան հասան արքունիք.
Լուրը հասավ աշխարհին—
Կենդանի լե դշխուհին։

Հենց են պահին թագուհին
Ելի առած հալելին,

Հետը անուշ խոսում եր,
Ծռմռվելով ասում եր.
Ո՞վ կա ինձնից ավելի
Արմաղ-շարմաղ, սիրելի։
— Դու չքնաղ ես, խոսք չկա.
Յորթ աղջիկդ, են ինչ կա,
Նա լե քեզնից ավելի
Արմաղ-շարմաղ, սիրելի։

Նորից հուզվեց Թագուհին,
Տվեց փշրեց հալելին.
Դռնից ուղիղ դուրս թռավ
Յորթ աղջկան պատահավ
Սիրտը ճաքեց ու մեռավ։
Հենց վոր նրան հողեցին,
Յորը, խրրը թաղեցին,
Ըսկսեցին հարսանիք.
Ցերկու չահել Չան-Չանիկ
Պսակվեցին մուրազով.
Դեռ աշխարհը լերազով
Չեր տեսել եղպես խնջույք.
Ցես ել առավ մեծ հաճույք.
Ենքան գինի կոնծեցին,
Լոկ բեխերս թրջեցի։

ՀԵՔԻԱԹ ՎՈՍԿՈՒ ԱՔԼՈՐԻԿՈՒ ՄԱՍԻՆ



Ընտեղ անհայտ մի աշխարհում,
Ցոթը սարից այն կողմ, հեռվում,
Կար Դադոնը՝ մի թագավոր —
Մանկութ ուրախ ու փառավոր։
Հարևանին իր շատ հաճախ
Նեղացնում եր քաջն այդ անվախ,
Բայց Ծերուքյան իր որերին
Վերջ տալ ուզեց նա մարտերին,
Ապրել ուզեց խաղաղ կյանքով.
Բայց հենց այստեղ դրացիք խռով
Շատ նեղեցին թագավորին,
Նրան սաստիկ ջնաս բերին։
Սահմանները իր տերուքյան
Ուզեց պահել միշտ անսասան,
Դրա համար նրան այստեղ
Պետք եր մի մեծ բանակ ահեղ։
Զորավարները կային անքուն,
Բայց թշնամուն չէլին հանուն։
Սպասելին թե հարավից,
Զորք եր թափվում արևելքից.
Վերջ կտար և նրան այնժամ,—

Ծովից լեկավ հյուրը դաժան։
Քիչ եր ճուռա նա լաց լիներ,
Աչքերից քունը կորցներ։
Ել ինչ կլանք կար նրա համար,
Ցեվ ոգնության համար ահա
Նա դիմում ե իր իմաստուն
Աստղագուշակ ծեր ներքինուն։
Սուրհանդակն ե նրան կանչում
Դադոնի մոտ։ Ցեվ իմաստուն
Ծերն ե գալիս ու միջից պարկի
Մի աքաղաղ հանում վոսկի։
— Դու նստացրու այս թռչունին,—
Դիմեց այսպես նա արքային,
Ձողի վրա և կդառնա,
Նա քեզ համար պահակ անահ։
Թե վոր շուրջը խաղաղ լինի՝
Սա ել հանգիստ, լուռ կընստի,
Բայց թե դրսի կողմից լեկած՝
Քո դեմ կռիվ լինի հանկարծ,
Կամ ռազմական ուժ հարձակվի,
Կամ մի ուրիշ փորձանք լինի՝
Իմ աքլորը այն վայրկյանին
Իր կատարը կբարձրացնի,
Ձիլ կը կանչի, կթփրտա,
Ու նույն կողմը նա շուռ կգա։—
Շնորհակալ լեղավ արքան,
Ցեվ խոստացավ վոսկի նրան։
— Ցես փոխարեն այս լավությյան,—
Գոչեց արքան գոհ, բարձրաձայն,
— Քո առաջին կամքը — հրամեն
Կրկատարեմ իմի նման։

Ցեվ աքլորը նստած ձողին
Հսկեց լերկրի սահմաններին։
Թե սպառնար վտանգ հանկարծ,
Հավատարիմ պահակ դառած,
Նա կըշարժվեր, կթփրտար,
Հենց այն կողմը նա շուռ կգար,
Ցեվ կը գոռար — կիր-կիռ-կռռ,
Դե՛հ, վայելիր հանգիստ դու քունն։
Դրացիները հանգիստ են,
Չեն հարձակվում նրանք արդեն։
Դադոն արքան ահ ներշնչեց,
Անեն կողմից նրանց ճնշեց։
Տարիք անցան խաղաղ, անպարտ,
Ցեվ աքլորն ե նստած հանդարտ։
Մի որ հանկարծ ահեղ ձայնից
Դադոն արքան զարթնեց քնից։
— Ժողովրդի հայր — թագավոր,
Զորավարը գոչեց հզոր.
— Տեր, արթնացիր, աղետ ե մեծ.
— Ի՞մ պարոնայքդ ինչ պատահեց։—
Հարցրեց արքան հորանջելով.
— Ե՞լ ինչ լեղավ, եղ ոմ ե, ոմ։
— Աքաղաղը նորից կանչեց,—
Զորավարը պատասխանեց.
Վողջ քաղաքում աղմուկ և ահ.
Արքան տեսավ — ձողի վրա
Իր աքլորն ե հա թփրտում,
Դեպ արևելք անվերջ նայում։
— Ուշացնելու կարիք չկա,
— Հե՛յ, ժողովո՛ւրդ, ձիերնց վրա...
Նա արևելք զորք ուղարկեց,

Ավազ վորդին առաջնորդեց։
Ցեվ աքլորը հանգստացավ,
Արքան նորից խոր քուն մտավ։

Ուխ որ անցավ, իսկ այն զորքից
Լուր չեր գալիս վոչ մի կողմից,
Կռվում են կամ, թե չեն կռվում,
Մեր Դադոնին լուր չի տրվում։
Ցեվ աքլորը նորից կանչեց.
Արքան ելի զորք հավաքեց.
Ցեվ այս անգամ կրտսեր վորդին
Ուղարկվում է փրկել մեծին։
Աքաղաղը լռեց նորից,
Բայց լուր չկա վոչ մի կողմից։
Անցավ գնաց ուխ որ կրկին,
Վախը պատեց մարդկանց հոգին։
Աքաղաղը նորից կանչեց.
Ցերրորդ անգամ զորք հավաքեց,
Դեպ արևելք արքան նրանց
Ինքը տարավ տարակուսած։

Գնում է զորքն որ ու գիշեր,
Վոչ վոք իր մեջ ել ուժ չուներ։
Վոչ դաշտի, վոչ իջևանի,
Վոչ բարձրացող գերեզմանի —
Դադոն արքան չհանդիպեց։
— Ա՛լ քեզ հրաշք, — նա մտածեց։
Ցերրբ ուխերորդ որը անցավ,
Բարձր սարեր արքան տեսավ,
Իսկ արանքում փայլուն ու վառ
Մի մեռաքսե մեծ տաղավար։

Ցեվ սքանչելի ալնտեղ անդորը...
Իսկ նեղ կիրճում և շուրջ բոլոր
Ձորք եր չարդված, թափված ձնում,
Դեպ վրանն ե արքան դիմում.
Ինչ սոսկալի, գաշըշ տեսարան...
Նրա առաջ — լերկու տղան,
Անսաղավարտ և անզրահ,
Լուռ՝ ընկել են ահա մեռած,
Սրերն իրար սրտում խրած,
Իսկ ձիերը, մարդում անսանձ,
Թափառում են վոտնահարված
Խոտի վրա արյունամած։
— Ո՜հ, վորդինեբ, — գոչեց արքան,
— Ավաղ, ավաղ, ցանցը ընկան
Իմ բազեներն արագաթև,
Ավաղ, մոտ ե մահը իմ սև...
Ցեվ բոլորը լացին մեկտեղ,
Ցեվ դղրդաց, տնքաց ահեղ
Ձորի խորքը, սիրտը սարի,
Բացվեց փեշը տպաղավարի,
Շեմքին աղջիկ՝ մի դիցուհի,
Շամախանի պերճ թագուհին.
Արշալույսի նման փայլեց,
Ցեվ արքային լուռ վողջունեց։
Արևի դեմ — ինչպես մի բու,
Լռեց արքան արյունարբու,
Նայեց նրան և մոռացավ
Մահը վորդոց և ամեն ցավ։
Իսկ նա ժպտաց ծեր Դադոնին,
Մեջքը ծռեց մինչև գետին։
Ձեռքը հետո զգուշ բռնեց,

Իր վրանը նրան բերեց։
Հյուրասիրեց նրան սիրով
Ամեն տեսակ բարիքներով.
Ցեվ քնացրեց նա արքային,
Տակը փռեց խաս անկողին։
Ամբողջ լոթ որ անցավ գնաց,
Նստած խոնարհ նրա դիմաց,
Դադոն արքան քեֆ եր անում,
Ցեվ կախարդված նրան նայում։

Վերադարձի ճամբեն արքան
Իր վողջ ուժի հետ մարտական.
Ցեվ աղջկա հետ ալն չահել,
Նա վաղուց եր արդեն բռնել...
Նրա առաջ լուրն եր վազում,
Ցեղած, չեղած բաներ պատմում.
Ցեվ քաղաքի դարբասներում
Ժողովուրդն ե դիմավորում,
Հետևելով ձիակառքին,
Պերճ Թագուհուն և Դադոնին։
Վողջունում ե արքան նրանց,
Ու նրանց մեջ տեսնում հանկարծ,
Սարակինյան գլխարկ հագած,
Կարապի պես վողջ ճերմակած,
Հին բարեկամ իր Ներքինուն։
— Միշտ վողջ լեղիր, հալը խմաստուն, —
Դիմեց արքան, — ասա, խոսիր,
Մոտ արի և հրամալիր։
— Արքա, — ասավ ծեր Ներքինին,
— Ժամն ե մաքրել հաշիվը հին,
Հիշիր, խոսք ես տվել ինձ դու՝

Լավութիւնս վարձատրելու,
Ցեվ առաջին կամքս — հրամանդ
Կատարելու քոնի նման.
Ինձ նվիրիր այդ դիցուհուն՝
Շամախանի պերճ թագուհուն։
Թագավորը շատ զարմացավ,
— Քեզ ինչ լեղավ, — նրան ասավ,
— Թե սատանա մեջդ մտավ,
Կամ թե խելքդ գուցե թռավ։
Ցեվ ինչ մտքիր գլուխդ այդպես.
Աստացել եմ, ճիշտ է, լես. քեզ,
Այնն ինչին չե, սահման կա։
Դու պետք չունես այս աղջկա,
Ցեվ լավ գիտես, թե ով եմ լես,
Ինդրիր ինձնից ինչ վոր ուզես,
Իշխանութիւն, կամ գանձ և փող,
Իմ ախոռից ձի արշավող,
Կեսը խնդրի իմ լերկրի...
— Վոչինչ քեզնից լես չեմ ուզի,
Ինձ նվիրիր այդ դիցուհուն՝
Շամախանի պերճ թագուհուն։
Ասաց ծերը ի պատասխան.
Թքեց արքան.— տեսնք սրան,
Ինձնից վոչինչ չես ստանա,
Քանի վողջ ես, կորի, գնա,
Ջուր մի տանջի դու քո հոգին,
Դե, հեռացրեք այս ծերուկին։
Ծերը ուզեց ասել, վիճել,
Արքայի հետ կռվել — լավ չե։
Գավազանով արքան խփեց
Լայն ճակատին. ծերը փուվեց,

Փչեց շունչը՝ — ծնցվեց մոլոր
Վողջ քաղաքը՝ — աղջիկն եր վոր,
Մեկ — հի, հի, հի, մեկ — հա, հա, հա,
Մեղքից կարծես չեր վախում նա՝
Թեպետ արքան շատ եր հուզված,
Բայց աղջկան նա մեղմ ժպտաց.
Քաղաք մտավ զորքի հետ հոծ,
Մեկ ել լսվեց թեթև զնգոց,
Վողջ քաղաքը հանկարծ տեսավ,
Վոր աքլորը ձողից թռավ,
Ձիակառքին հասավ, թառեց,
Յեվ արքայի գլխին նստեց,
կոցահարեց, խփեց գլխին,
Ու վեր ճախրեց... Նուրն վայրկյանին
Դաղոն արքան կառքից ընկավ,
Ոոր ախ քաշեց, հետո հանգավ՝
Թագուհին ել կորավ հանկարծ,
Կարծես վոչինչ չեր պատահած...
Հեքյաթը սուտ, բայց ակնարկող,
Ջահելներին լավ դաս տվող՝

1834

Բանաստեղծություններ



ՉԱԱԴԱՅԵՎԻՆ

Շուտ անցան, ընկեր, պատրանքներն անուշ
Սիրո, հուսերի և հըպարտ փառքի.
Որպես ծուխ, որպես վաղորդյան մըշուշ,
Զըքացան խաղերն մեր ծաղիկ կյանքի։
Բայց դեռ լեռում են մեր մեջ վառ իղձեր.
Ցեվ կանգնած ճընշող ուժի առաջին,
Մենք ունկնդիր ենք անհագ, անհամբեր,
Հայրենի յերկրի սըրբազան կոչին։
Մենք սպասում ենք անձուկ, հուսավառ,
Վոգեշունչ ժամին սուրբ ազատության,
Սպասում, որպես նատաղ սիրահար,
Թովիչ րոպեին ջերմ տեսակցության։
Քանի ապրում ենք, քանի վառվում ենք
Մենք ազատության և պատվի սիրով,
Ընկե՛ր, հայրենի յերկրին նվիրենք
Մեր սիրտն ու հոգին վեհ ձըգտումներով.
Հավատա՝ կըգա, կըգա, անկասկած,
Շողալու այգը բախտաբեր գարնան.
Ցեվ Ռուսաստանը քընից սթափված,
Ինքնակալ ուժի բեկորների վրան
Կըդրոշմե, ընկեր,
Անուններըմեր։

1818

ԳՅՈՒՂ

Վողջո՜ւյն, վողջո՜ւյն, ով հանգրվան խաղաղավետ ու
անճառ,
Ապաստան դու աշխատանքի, վոգեշնչման, հանգստի,
Ուր հեղվում են իմ որերի կոհակները աննշմար,
Լույս լեզերքում մոռացութեան ու բաղդի։
Ցես քոնն եմ լոկ. լես վոխել եմ ցերցեկների ախտավոր
Արքունիքը, քեֆերն արբշիռ, մոլութեյունները խռով—
Մեղմ շրշյունով կաղնուտների, դաշտերով լայն, անժխոր,
Ընկերներով իմ խոհերի,—ազատութեյան ժամերով։
Ցես քոնն եմ լոկ. սիրում եմ այս ալգին մութ,
Հովի շնչով ու ծաղկունքով իր պայծառ,
Այս մարգերը՝ բարդոցներով անուշաբույր, շարիշար,
Ուր թփերում կարկաչում են առվակները հոսանուտ։
Իմ դեմ ահա հոգեպարար տեսարաններ ամենուր,
Այստեղ լերկու լճակների հարթութեյունները լազուր,
Ուր լերբեմն ձկնորսական առագաստն է ճերմակում։
Այնտեղ — արտեր շերտածավալ, բլուրների շարաններ,
Հեռու-հեռում ցրիվ փռված խրճիթներ,
Ծխատճամուկ լերամակներ խոնավ, տամուկ ափերում,
Թեվատարած աղորիքներ, խրճանոցներ մշուշած,
Աշխատանքի առատ հետքեր ամենուրեք տարածված։
Ցեվ այստեղ լես, ունայնութեյան շղթաներից զերծ խպաո,
Ուսանում եմ ճշմարտի մեջ լերանութեյուն վայելել,

Ազատ հոգով աստվածացնել այստեղ որենքն անկաշառ,
Անլուսավոր ամբոխներին տրտունջները չլսել,
կարեկցանքով պատասխանել աղերսանքին ամոթխած
Ցեվ նայել միշտ անտարբեր ու աննախանձ՝
Զարադործի կամ հիմարի մեծությանը անարդար։
Զեզ եմ կանչում, ով դարերի պատգամախոս վոգիներ,
Մենաստանում իմ հիասքանչ ու պայծառ
Ե՛լ ավելի բարձր ե հնչում ձայնը ձեր։
Նա վանում ե մոտալ նիրհը ծուլությանն,
Աշխատանքի հուր ե իմ մեջ բորբոքում,
Ցեվ ձեր խոհերն ստեղծարար, դյուրթական
Բողբոջում են, հասունանում իմ հոգում։
Սակայն մի միտք ահասարսուռ սթափնում ե իմ հոգին
Ալս արուեստում ու լեռներում ծաղկառատ,
Ուր մարդկության բարեկամը նկատում ե տխրագին
Անենուրեք տգիտության կործանարար մի արատ։
Արցունքների, հառաչանքի խուլ վկա,
Բախտի խաղով լեղերական դարձած մարդոց կործանիչ.
Աղյուրյունն այստեղ վայրի, անորեն ու անըզգա
Բիրտ բռնության գավազանով լուրացրել ե ամեն ինչ —
Ցե՛վ ժամանակն լերկրագործի, լեվ վաստակն ու
գուլքը վողջ։
Մեջքը ծռած ուսար մաճին ու մտրակին միշտ խոնարհ,
Այստեղ անճար ճորտությունը քարշ ե գալիս անդադար
Ակոսներում անագորույն իր տիրոջ։
Անենքն այստեղ ծանր լուծը մինչեվ շիրիմ են տանում.
Առանց անգամ հանդգնելու փայփայել հույս ու փափագ.
Այստեղ մատաղ աղջիկներն են վառ ծաղկում,
Զոհ լինելու չարագործին քմահաճ ու անառակ։
Հալից ընկնող, ձեր հայրերի սիրած միակ ապավեն,
Մատաղահաս վորդիները — աշխատանքի ոգնական,

Թողած հյուղը հայրենական, գնում են, վոր բազմացնեն
Աղալատան բազմաչարչար ամբոխները ճորտական։
Ո, թե ձայնս կարողանար ցնցել սրտերը մարդկան։
Իմ կրծքի մեջ բորբոքվում և հուրն ապարդյուն ու
անզոր,
Ցավ չի՞ տված ինձ պերճ խոսքի ճարտարությունն
ահավոր։
Բարեկամներ, պիտի տեսնեմ յես ժողովուրդն չճնշված
Ցավ արքայի հրամանով ճորտությունը տապալված։
Ցավ արդյոք իմ հայրենիքում պիտի բացվի վերջապես
Լուսապայծառ աղատության արշալույսը վոսկեգես։

1819

Պուշկինի պապը
Իբրահիմ Հաննիբալ



Պուշկինի մայրը
Նադեժդա Ոսիպովնա

Պուշկինի հայրը
Սերգեյ Լվովիչ

ՈԼԵԳԻ ՅԵՐԳԸ

Յ եղնում է ահա հըզոր Ոլեգը
Ութնթ խազարներից վըրեժ առնելու,
Նըրանց համարձակ հարձակման համար
Գյուղերը սըրի-հըրի մատնելու։
Ցեվ իր համհարզով, հագած կուռ զրահ,
Գընում է նա սեգ նըժույգի վըրա։

Մըթին անտառից նրա հանդիման
Գալիս է ահա վըհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հըմաո,
կյանքում հընազանդ միայն Պերունին,
Աղոթք ու հմայքով իր դարն անցկացրած,
Ցեվ Ոլեգ ծերին ընդառաջ գընաց։

— Ասա ինձ, դուշակ, ծերդ անմահների,
կյանքիս մեջ ինձ հետ ինչ է լինելու,
Ցեվ, ի խընդութլուն չար վոսոխների
Շուտով եմ արդյոք շիրիմ իջնելու։
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշվես,
Վարձըդ՝ քու սիրած ձին կըտամ չես քեզ։

— Չեն վախում գետերն լերկրի մեծերից,
Ցեվ պետք չի նըրանց պարգևն իշխանի,
Նըրանց իմաստուն լեզուն վերևից

Աղվաձ՝ խոսում ե կամքը յերկընքի.—
Անհայտ են դալոց տարիքն ու մըթին,
Բայց կարդում եմ գիրդ յես քու ճակատին։

Դե՛ միտքըդ պահիր իմ խոսքն ալսորից։
Փառքն ե կյանքի մեջ խընդում հերոսին.
Հաղթությյան փառքով հրուչակված ես դու,
Վահանդ Բյուզանդիո բարձրը դարպասին։
Հընազանդ են քեզ և՛ ցամաքն, և՛ ծով,
Նայում են վոսոխըդ բախտիդ նախանձով։

Ցե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,
Ահեղ վոլթորկի ժամին կատաղի,
Ցե՛վ նետ, և՛ պարսեր, և՛ նենգող դաշույն,
Խընայում են միշտ կյանքը հաղթողի։
Վերք չես առնիլ դու քո կուռ զըրահում,
Հրդոցին անտես վոգի յե պահում։

Վոչ մի վըտանգից չի վախում քու ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում ե դա,
Մերթ կանգնում ե հեզ նետերի տակին,
Մերթ թըռչում ռազմի դաշտերի վըրա.
Ցեվ ցուրտ, և՛ կրակի վոչինչ են դըրան,
Բայց... դա կըլինի պատճառ քու մահվան։

Ոլեգը խնդաց, և սակայն մըթնեց,
Մըռայլեց հանկարծ չարագույժ մըտքից.
Լուռ ու մտախոհ թամբիցը բըռնեց,
Ներքև ե իջնում սիրած նըժույգից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում ե վըզին։

— Դե՛հ, մընաս բարլավ, վաղեմի ընկեր.
Ժամանակն լեկավ մեր բաժանվելու.
Հանգիստ կաց հիմա, ել վոտըս բընավ
Քու ասպանդակի մեջ չեմ դընելու։
Դե՛հ, գնա, բայց միշտ հիշիր Ոլեգին։
Ե՛լ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին։

— Ծածկեցե՛ք սըրան թավարծի գորգով,
Սանձիցը բըռնած մարգերըս տարեք,
Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,
Աղբյուրի վըճիտ ջըրով ջըրեցեք։
Ցեվ մանկլավիկներն իսկույն ձին տարան,
Մի ուրիշ նոր ջի մոտ բերին նըրան։

Ցընծում է խմբով անմահ Ոլեգը
Զըվարթ ձայներով լիք բաժակներին,
Ճերմակ է նըրանց գըլխի ալիքը,
Ինչպես վաղորդյան ձյունը լեռներին...
Հիշում են նըրանք որերն անցկացրած,
Ցեվ կըռիվները միասին խարած։

— Բայց իմ ընկերը, գոչեց Ոլեգը.
Ո՞ւր է, ինձ ասեք, սիգապանծ իմ ձին.
Առողջ է արդյոք, ալնպես սըրնթաց,
Ալնպես կըրակոտ, աշխույժ տակավին...
Ցեվ լըսում է, վոր սեպ բըլրի վըրա
Մահու սև քընով վաղ է քնել նա։

Ծոնարհեց գըլուխն Ոլեգը հըզոր,
Ցեվ միտք է անում. — Ի՞նչ լեղավ հըման.
Սըտախոս կախա՛րդ, անխելք ալևոր,
Թե չելի լսել լես քու սըտուքյան,

Կարելի մինչ որս իմ ձին լես հեծնել։
Ցեվ ձիու վոսկերքն ուզում ե տեսնել։

Գընում ե Ոլեգն ահա պալատից,
Նըրա հետ Իգորն և հյուրերը հին.
Տեսնում են ձիու վոսկերքը թափված
Բըլուրի վըրա, Դընեպրի ափին։
Փոշին ծածկում ե, անձրևն վողողում,
Ու սեզը վըրեն քամին որորում։

Վոտն զգուշ դըրավ իշխանը գանգին
Ու կանչեց.— Ջընիր, միայնակ ընկեր,
Ջեզնից շատ ապրեց քու տերն ալևոր.
Թարմ շիրմիս վըրա դու չես սահաբեր
Տպասրի տակին սեզը ներկելու,
Քու տաք արյունով ածյունս հարգելու...

— Ահա թե ուր եր որհասըս պահված.
Ալս չոր վոսկորն եր ինձ մահ սպառնում։
Այն ինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ
Ծըշշալով սողաց մի ոձ չարաթույն,
Սև թոկի նըման փաթաթվեց վոտքին,
Իշխանն ոձահար գոռաց ցավագին։

—

Փըրփրուն թասերը շըրջան են առնում
Ոլեգի մահվան տըխուր հարգինքին,
Իգորն ու Ոլգան բըլուրի վըրա,
Նըստած ե խումբը Դընեպրի ափին—
Հիշում են քաջերն որերն անցկացրած
Ցեվ կռիվները միասին վարած։

1822

ԹՈՉՆԻԿ

Պահպանելով սրբությամբ մեր
Ավանդությունը հայրենի,
Ես — թուչնիկին արձակում եմ,
Որ գարնան մեջ ուրախ ճախրի։
Նորն հրճվանք է պատում հոգիս՝
Ինչու համար էլ տրտնջալ,
Թանի որ ես — մի էլակի
Կարողացա ազատ կյանք տալ։

1823

ԶՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեզով լերկինքն առնում,
Գալարում ե բուքը ձյան,
Մին մանկան պես լաց ե լինում,
Մին վոռնում ե զերթ գազան.
Մին վալբենի սուլում պեսպես,
Աղմըկում ե տանիքում,
Մին՝ ուշացած ճամբորդ, ասես՝
Լուսամուտն ե նա թակում։

Մեր խըրճիթը, աղքատ ու հին,
Ցեխվ մըթին ե, և՛ տխուր.
—Ինչ ես նըստել պատի տակին,
Իմ պառավըս, եդպես լուռ։
Հոգնել ես դու փոթորըկի
Վոռնոցներից խելագար,
Թե նիրհում ես քո իլիկի
Բզզոցի տակ մխալար։

Աըի խըմճիթք, բարի ընկեր,
Իմ սև, չահել որբերի,
Խըմճիթք դարդից, բաժակըդ բեր,
Մըտներըս բաց կը լինի։
Ցերգիր, վրնց եր ապրում խաղաղ

Հավքը ծովի են ափին,
Ցերգիր, վշնց եր աղջիկը վաղ
Ջուրը գնում մինչ արփին։

Հողմը մեգով լերկինքն առնում,
Գալարում ե բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց ե լինում,
Մին՝ վոռնում ե գերթ գազան։
—Արի խըմենք, բարի ընկեր,
Իմ սև՝, չահել որերի,
Խըմենք դարդից, բաժակըդ բեր,
Սիրտներըս բաց կը լինի։

1825

ՁՄՌԱՆ ՃԱՄԲԱ

Ալեծածան շարժուն մեգում
Լուսինն անցնում է կամաց
Եվ տրտմաշուք բացատներում
Լույս է սփռում տխրամած։

Ձմեռային տաղտուկ ճամբով
Սլանում է սահնակը,
Միահնչյուն հոգնած կանչով
Զրնգում է զանգակը։

Ինչ վոր բան կա ինձ հարազատ
Կառապանի ձիգ յերգում —
Մեկ ցոփություն որի, ազատ,
Մեկ վիշտ սրտի մորմոքուն։

Վոչ կրակ կա, վոչ սև տնակ...
Խուլ տեղ ու ձյուն... և, անցվոր,
Հանդիպում են ինձ շարունակ
Լուռ վերստերը շերտավոր։

Ձանձրալի յե ու տխրագին...
Վաղը, Նինա, դառնամ տուն,
Բուխարու մոտ իմ սիրածին
Պիտի նայեմ անկշտում։

Հնչյուն սլաքն այդ ժամերին
Իր շրջանը կավարտի
Ցեվ, ցրելով ուշ հյուրերին,
Գիշերը մեզ չի զատի։

Տխուր է, Նինա... ճամբին թախծոտ
Ձրնգում է զանգակը,
Կառապանը լռեց քնկոտ,
Միգապատ է լուսնյակը։

1826

„ՅԵՎԳԵՆԻ ՈՆԵԳԻՆ“-ԻՑ

Յերկինքն արդեն աշուն եր շնչում,
Արևն արդեն սակավ եր փայլում.
Ցերեկն սկսից արդեն կարճանալ,
Մութ անտառների շվաքն անփայլ
Բացվեց, մերկացավ տխուր աղմուկով։
Ցեվ մեգն եր իջնում դաշտերի վրա,
Ճչան սագերի լերանից ահա
Զգվել եր հարավ։ Գալու լեր շուտով
Տխուր լեղանակ, ձանձրալի, ամպոտ,
Նոյեմբերն եր այդ, կանգնած դռան մոտ։
Արշալույսն ե ցուրտ սշուշում բացվում,
Արտերում հնձի աղմուկն ե լռում,
Ընկերուհու հետ քաղցած, ցրտահար,
Գալլն ե դուրս գալիս կածանի վրա։
Նրան տեսնելով, ձին ե խրխնջում,
Ճամբորդն էլ զգուշ առաջ ե թռչում,
Սարն ի վեր արագ հասնում մի շնչում։
Ցեվ ալգաբացին հովիվն ե լռում,
Կովերին գոմից էլ դուրս չի քշում,
Ցեվ միջօրեկին, կազմած շրջանակ
Նրանց չի կանչում փողով իր բարակ։
Ձրճիթում նստած աղջիկն ե լերգում,
Ցեվ հետն էլ մանում. գիշերվա ընկեր,

Ճրագն է ճթթում, վառվում է յերեր։
Ճայթում են արդեն բուք, սառնամանիք
Աղծաթով պատում դաշտերն ամայի։
Ցեվ տղաների ժողովուրդն ուրախ,
Սառուցյն է կտրում սահոնով անվախ։
Կարմիր թաթերով, գերացած մի սագ
Ջրերում ուզեց նորից լողանալ,
Սայթաքեց, ընկավ։—Թռչում է արագ,
Փայլում, պտտվում ձյունը առաջին,
Աստղերի նման թափվում է ափին։

1826

„ՅԵՎԳԵՆԻ ՈՆԵԳԻՆ“-ԻՑ

Չմեռ... գյուղացին ուրախությամբ
Նորոգել է իր սահնակը հին.
Ցեվ փխրուն ձյան մեջ, զգոնությամբ,
Առաջ է թռչում ճեպընթաց ձին.
Ցեվ փափուկ սանձերը անարգել
Տանում են սահնակն ահեղ ցրտին—
Սահնակավարն մուշտակ հագել,
Մեջքին կապել կարմիր գոտի.
Ահա մի մանուկ, բակի մի ջինն,
Իր շնիկովը սահնականիստ,
Ջի~ձի չե խաղում չարաճճի,
Ցեվ թաթիկները սառցրել խիստ.
Իսկ պատուհանից մայրը անհուն
Սիրով նայում է և սպառնում...

1826

„ՅԵՎԳԵՆԻ ՈՆԵԳԻՆ“-ԻՑ

I

Հալածված գարնան ճաճանչներից —
Օարբերը ծածկող ձյունն հալվելով
Պղտոր առվակներ դարձավ նորից
Ու վազեց — դաշտը հեղեղելով։
Բնությունը՝ պարզ ժպիտով և
Ընդունում տարվա առավոտին.
Փայլում է լերկնի անհուն մովը,
Թափանցիկ անտառն արդեն ցրտին
Ծածկվում է կանաչ աղվամազով։
Ծիր մեղուն մոմե իր փեթակից
Թռչում է հեռու դաշտերում զով.
Հովիտներն ահա չոր են կրկին,
Հոտն աղմըկում է. սոխակն լերգում —
Մութ գիշերների — անլուռ — խորքում։

II

Ինձ համար — վիշտ է գալուստը քո,
Ո, գարուն, սիրո դու ժամ անշեջ՝
Ալնպիսի դառն, խոր հուզմունք կա
Իմ հոգնած հոգում, իմ արյան մեջ։
Վորպիսի ծանրը գորովանքով,
Ուրախությամբ եմ շնչում կրկին

Այս գարնան շունչը — անհագ հոգով,
Լուսթյան ծոցում մեր գյուղակին։
Թե հաճույքները ոտար են ինձ, —
Ամենը ինչ վոր ապրում, խնդում,
Ամենը ինչ վոր փայլում անբիծ,
Ու դառնում թախիծ ու հոգնությունն։ —
Ցեվ, վաղուց մեռած հոգուս համար՝
Դրանք՝ միշտ պիտի թվան խավար։

III

Կամ թե չենք հրճվում վերադարձով
Աղնանը թափվող տերևների.
Ցեվ հիշում ենք այն՝ դառն թախծով՝
Լսելով նոր ձայնն անտառների.
Կամ թե բնության ստեղծագործ
Զարթոնքին խառով ենք մոտենում,
Թե մեր տարիքն ե թոշնել, վորոնց
Ել վերադարձի հույս չի մնում։
Կարող ե լինել, վոր մոքով մեր,
Բանաստեղծական լերազում լուռ,
Անցնի մի ուրիշ գարնան պատկեր —
Ցեվ բերի սրտին քաղցր սարսուռ,
Ցեվ տենչանք — հեռու լերկրի վաղվա —
Ցեվ լուսնի մասին և գիշերվա։

1827

ԱՔՍՈՐՅԱԼ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻՆ

Հպարտ ապրեցեք, ով աքսորյալներ,
Ծավար հանքերում հեռու Սիբիրի.
Չի կորչի իզուր աշխատանքը ձեր
Ու ձգտումները ձեր վեհ մտքերի։

Հույսը — վշտերի քուրըն հավատարիմ
Մութ անկյուններում գետնախորշերի՝
Ձեզ կպահպանի առույգ ու զվարթ,
Ցավ անշուշտ կգա որը բաղձալի։

Մեր անկեղծ սերը կգա ղեպի ձեզ,
Կհասնի մռայլ փականքի միջով՝
Ինչպես աքսորի ձեր խշտիններին
Հասնում է ձայնս լերգիս ղողանջով։

Ցավ կընկնեն մի որ շղթաները ձեր,
Բանտը կղառնա խղճուկ ավերակ,
Ազատությունը ղեմ կվազի ձեզ,
Ու ընկերներից սրեր կստանաք։

1827

ՋՐԱՀԵՂՁԸ

Ներս վազեցին մանուկները
Ու կանչում են հորն ըշտապ,
— Ա՛պի, ա՛պի, յե՛կ, մեր Թոռը
Մեռել հանեց գետի ափ։
— Սուտ եք ասում, շա՛ն լակոտներ, —
Գոռաց հայրը անհաբեկ.
Ըսպասեցեք դուք հալա դեռ,
Մեռելն հետո կտեսնեք։

— Դիվան կգա — պատասխան տո՛ւր.
Ցավի միջում կըմընամ.—
Հընար չկա, բե՛ր, ա՛յ կընիկ,
Շորերս տուր, մի գընամ։
— Ո՞ւր է մեռելն.— Ա՛յ, ա՛պի, ա՛յ։
Ճիշտ վոր գետի յեզերքին,
Թաց Թոռի մոտ, գետնի վըրա
Տարածված էր մի մարմին։

Զարհուրելի դիակն ուռել,
Կապըտել էր այլանդակ։
Արդյոք տանջված մի թշվա՞ռ էր
Հանգիստ գըտած ջըրի տակ,
Մի գետակուր ձըկնորս էր էն,
Թե՞ գինեմոլ մի ջահել,

Թե անըզգուշ վաճառական
Հարամու լեր պատահել...

Ընչքին և պետք։ Աչք ածելով
Ըշտապում և գյուղացին,
Վոտից բըռնած, յետ քարշ տալով
Ջուրն և տանում խեղդածին։
Ու թիակով գետի լեզրից
Ջուրը հըրեց նա ընըրան,
Ու դիակը գընաց՝ նորից
Փընտրի խաչ ու գերեզման։

Մեռելն լերկար ջըրի միջին
Ցած եր իջնում ճոճելով,
Աչքով ճամբեց ներ գյուղացին
Ու տուն դարձավ կանչելով.
— Դեսը կորիք, ալ լակոտներ,
Ցեկիք, բան տամ ձեզ — տանեմ,
Ամա թե վոր ձեն եք հանել
Հոգինըրըդ կըհանեմ։

Գիշերն ուժգին բուք վերկացավ,
Գետն լեղնում և, վորոտում...
Մարխը արդեն երվեց, հանգավ,
Լուռ ու ծըխոտ խըրճիթում։
Վողջ քընած են։ Անքուն պառկած
Միտք և անում գյուղացին...
Բուքն վոռնում և... մին էլ հանկարծ
Լուսամուտը բախեցին...

— Ո՞վ ես։ — Ներս թող, ալ տանտեր, ներս...
— Ա՛յ, ներս ու քեզ չոռ ու ցավ.
Ի՞նչ ես շըրջում կալենի պես,

Վիճը սատանեն քեզ բերավ։
Ի՞նչ անեմ քեզ, ասա, հիմի.
Ցեղըս նեղ է, տունը մութ։
Ու ծուլլ ձեռքով, տըրտընջալով՝
Բաց է անում լուսամուտ։

Ծոլում է լույսն ամպի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է հոսում նրա միրքից,
Բաց են աչքերն ու անթարթ։
Կախ են ընկած բազուկները,
Վողջ կարկամած սոսկալի,
Ուռած մարմնին քառչանգները
Կպած՝ սևին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հյուրին նա հանկարծ.
Փեղկը խփեց ու դողալով՝
— Ալ դու ճաքիս, քըրթմընջաց։
Ամբոխվեցին մտքերը մութ.
Մինչև լույսը նպ դողում,
Մինչև լույսը լուսամուտը
Բախում եւ՛ին ու բախում...

Ամբոխն ահեղ զրույց ունի,
Թե ալս դեպքից գյուղացին
Ըսպասում է ամեն տարի
Միշտ նույն որը խեղդվածին։
Ծառնվում է որն առավոտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդվածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ։

1828

„ՌՈՒՍԼԱՆ ՅԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ“-Ի8

Ծովածոցին կաղնին կանաչ,
Կաղնու վրա վոսկի շղթա.
Են շղթայով լետ ու առաջ
Որ ու գիշեր կըգա, կերթա,
Կերթա, կըգա կատուն ուլալ։
Ալ գնալիս՝ լերգ սկսում.
Ձախ գնալիս՝ հյուսում-ասում,
Ասում-հյուսում հեքյաթ-մասալ
Ամենեղ հրաշք... ալքեր շըրջիկ...
Ճյուղքին փերի՝ ծովի աղջիկ.
Անհայտ ճամբեք և ալյացեղ
Գազաններիի հետքեր այնտեղ։
Հավի վոտներ. խրճիթ վրան.
Խրճիթն անդուռ, անպատուհան։
Անտառ, հովիտ տեսիլքով լիք,
Ծեգին ջրերն ալիք, ալիք,
Զարկվում են դատարկ ափին։
Դուրս են գալիս հերթով մին, մին
Թե գեղեցիկ և թե հասուն
Դյուցազուններ՝ շուրջ յերեսուն։
Հետներն իրենց ջրապապն ահա՝
Մի ծովալին մեծ աժդահա։
Դշխուհին և բանտում սգում,

Նրան գալլն ե ըսպասարկում։
Այնտեղ լեղա լես իմ վոտով,
Լավ խմեցի համով-հոտով
Մեղրագինի,
Զըխմածս անուշ լինի։
Աչքով տեսա կաղնին կանաչ,
Տակին նստա։ Ցետ ու առաջ
Են սիրալիր կատուն-ուսլալ
Պատմեց ինձ շատ հեքյաթ-մասալ։
Մինն հիշում եմ, հեքյաթն ալդ հին
Հիմա պատմեմ լես աշխարհին։

1828

Զ Ի

Զ ի իմ մատղաշ, ձի իմ ջահել,
Փառք կովկասյան խարտանի,
Ա՛հա հասավ և՛ քո պահն ել,
Ի՛նչ ես թռչում վոնց քամի։

Մի նալիր խեթ, յերկչոտ աչքով,
Վոտքդ մի նետիր ողում,
Ել լայնարձակ ու հարթ մարգով
Ջնահան մի թողիր դու։

Սպասիր քիչ, կատիպեի քեզ
Դեռ խոնարհվել իմ կամքին,
Ու պիրկ ձգված սանձով դեռ յես
Ընթացք կտամ քո վազքին։

1828



Պատանի Պուշկինը լիցեյում կարդում է իր բանաստեղծությունները. (Լուսանկար Ի. Ցեւ. Ռեպինի յուգանկարից)

ԴԵԼԻԲԱՇ

Կրակում են բլուրներից
Ճամբարները բարձրադիր.
Մոտեցել է կազակներին՝
Դելիբաշը ալ-կարմիր։

Դելիբաշ, մի անցնի իրար,
Ձեռք մի քաշի քո կյանքից.
Հանկարծ կընկնես խարդախաբար
Կազակական նիզակից։

Ե՛լ, կազակ, մի տարվի կռվով,
Դելիբաշը անդադրում
Արշավում է և ալ-սրով
Բազ գլուխներ է կտրում։

Ցեվ զարկվում են աղմըկաձայն,
Ցեվ ընչ թռիչք, փոշեծուխ.
Դելիբաշը կտրեց, անցավ,
Մնաց կազակն անգլուխ։

1829

ԿՈՎԿԱՍ

Ահա Կովկասն իմ վոտքի տակ։ Ցես մեն-մենակ վերևում
Սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.
Ինձ պես բարձր, արծիվն հեռվում, դեպի լեթեր վերացած՝
Ողում հանգիստ սավառնում է՝ թևերն հզո՜ր տարածած.
Ցեվ տեսնում եմ ցես ալստեղից հեղեղատներ փըրփրալից
Ինչպես ծընվում, ինչպես ձյունի հյուսեր փլչում սարերից։
Ալստեղ ահա շաղ-շաղ ամպեր մեղմ սահում են իմ դիմաց,
Գոռ ջրվեժներ նոցա ճեղքում ու սլանում դեպի ցած.
Ցեվ աղմուկով դիպչում ալնտեղ լերկ ժայռերի կուլտերին,
Իսկ քիչ ներքև— չոր մացառ ե, մամուռ՝ կըպած քարերին,
Քիչ ել ալն կողմ ցես տեսնում եմ կանաչ, թավուտ
անտառներ,
Ուր վըխտում են լեղջերուներ և ծըլվըլում թըռչուններ։
Ալնտեղ արդեն և՛ մարդիկը բուն են դըրած սարերում,
Ցեվ խաշները մեղմ մալում են դալարախիտ վայրերում.
Ցեվ խաշնարածն իջնում ե ցած — դեպի ուրախ հովիտներ,
Դեպի խաղուն Արագվայի կանաչագեղ, զով ափեր.
Ցեվ չքավոր ասպատակն ե դարան մտնում կիրճի մեջ,
Ուր Թերեքի կատաղալից, զվարճ խաղին չըկա վերջ։
Խաղում ե նա ու մռնչում, վորպես վայրագ մի կորյուն,
Վոր վանդակից վորս ե տեսել, աչքը կոխել սև արյուն.
Ցեվ խըփվում ե նա ափերին, և՛ ապարդյուն կռիվ տալիս,

Ցեվ իր քաղցած ալիքներով ժայռեր լիզում ու լալիս...
Սակայն է գո՛ւր։ Նորա համար չըկա ուրախ վո՛չ մի որ.
Նորան ճընշում ու խեղդում են լուռ քարափներն
անհավոր[1]։—

1829

---

[1] *Այնպես, ինչպես բիրտ ուժերը ազատությունն է ճնշում,*
Այնպես, ինչպես լծի ներքո թախծում են ցեղերը վայրի,
Այնպես, ինչպես Կովկասն է վրդովում այդ անմռունչ,
Այնպես, ինչպես նրա վրա ուժն է չոքել օտարի։

«Կովկաս» բանաստեղծության ինքնագիրը վերջանում է այս քառատողով, որ հայերեն թարգմանվում է առաջին անգամ։
Ծ. Խ.

Դ Ո Ն

Դ աշտերով լայն, հանդիսավոր
Դոն, հոսում ես պարպաջուն,
Վորդիներից քո հեռավոր
Ձես բերել եմ քեզ վողջույն։

Ինչպես փառապանծ լեղբոր,
Քեզ գետերն են ճանաչում,
Արաքսից ու Եփրատից հորդ
Ձես բերել եմ քեզ վողջույն։

Հեռու հետապնդումից չար,
Զգալով հողն հայրենի,
Արփաչալի ջուրը սառ
Խմում են ձիերը Դոնի։

Պատրաստիր դեհ, Դոն պապտեղի,
Քաջ հեծյալներիդ համար,
Քո ալգինների խաղողի
Հյութը հրկեզ, կենարար։

ՍԱՏԱՆԱՆԵՐ

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը ցուրտ.
Զլուսնը թռչում, պեծ և տալիս,
Պղտոր լերկինք, պղտոր մութ։
Կառքը — դաշտով տանում և լինձ,
Ցեվ զանգակն և զնգզնգում.
Դաժան ահը, — ակամալից,
Մայր և առնում իմ հոգում։

— «Ե՛յ, կառապան, քշիր, ուշ է»։
— «Ձիերն, ագա, ուժ չունին,
Բուքն աչքերս կուրացնում է,
Փակ են ճամբեքը չորսդին,
Հետք չեն գտնի՝ թե՝ սպանես,
Մոլորվել ենք, ինչ անել.
Մեզ — չորս կողմից, ալ, տեսնում ես,
Սատանեքն են շուրջկալել։

Նալիր, նալիր տես, խազում են,
Փչում, թքում անամոթ.
Ձորակի մեջ խռնըվում են
Խելագարված ձիու մոտ։
Այնտեղ, հեռում, մութ, անսահման,

Դեմքս ցցվում են անվերջ,
Փալլում փոքրիկ պեծի նման,
Նորից կորչում մեզի մեջ»։

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը ցուրտ,
Ձյունը թռչում, պեծ և տալիս,
Պղտոր լերկինք, պղտոր մութ։
Ել ուժ չկա գնալ առաջ,
Հանկարծ զանգակն և լռում.
Դաշտում ձիերը կանգ առան,—
— «Գայլ, թե՞ կոճղ և լերևում»։

Բուքն վոռնում և, բուքը լալիս,
Փնչում ձիերըն զգոն։
Ցերեկվուքքը ծառս և գալիս,
Աչքերը՝ հուր կրակով։
Փախցընում են ձիերը մեզ,
Ցեվ զանգակն և զնգզնգում.
Վոգինները, տեսնում եմ լես
Կիավում են բաց տեղանքում։

Ալլանդակ ու անհատնելի,
Ձերմակ դաշտում անսահման,
Մեզ շուրջկալել, պար են գալիս
Տերևների պես աշնան։
Ո՞վ և նրանց առաջ մղում.
Ի՞նչ ձայներ են մորմոքի,
Հարազատի դի՞ լեն թաղում,
Թե՞ պսակ և վհուկի։

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը ցուրտ.
Ձյունը թռչում, պես է տալիս,
Պղտոր լերկինք, պղտոր մութ
Ցեվ խումբ առ խումբ, իմ առաջով,
Սատանաներն են սուրում,
Զար վոռնոցով ու տրտունջով
Իմ խեղճ սիրտը գալարում։

1880

ՆԺՈՒՅԳԸ

Խրխնջում ես աշխույժ ձի
Ինչու այդպես գլխիկոր,
Եվ չես շարժում բաշդ ձիգ,
Եվ չես կրծում սանձը քո։
Թե՞ քեզ վատ եմ խնամում,
Կամ վարսակ եմ խնայում...
Թե՞ սիրուն չի սարքը քո՝
Սանձափուկդ մետաքսե,
Կամ պայտերդ արծաթե,
Ասպանդակդ վոսկեզոծ։
Պատասխանեց ձին տրտում.
— Նրա համար եմ յես տխուր,
Վոր լսում եմ հեռվում,
Ուժեղ դոփյուն, փողի կանչ,
Նետի յերգեր և շառաչ։
Խրխնջում եմ նրա համար,
Վոր այս դաշտում ել յերկար
Յես չեմ շրջի խնամված,
Փայլփլուն սարքով զարդարված։
Վոր թշնամին գազազած
Կտիրանա իմ սարքին,
Յեվ պայտերս արծաթած
Իմ վոտքերից կպոկի։
Հոգիս տնքում ե խռով,
Վոր կողերս քրտնաթոր,
Թամբածածկի տեղ շուտով,
Նա կծածկի քո կաշվով։

1832

Ա Մ Ո

Անցած փոթորկի դու վերջին ևս ամպ,
Դու լես միմիայն լողում լեթերում,
Դու լես ուրախ որն լեցնում տխրությամբ,
Դու լես լերկիրը սևով ստվերում։

Ցեվ սևով պատած լերկնի շուրջ բոլոր,
Ցեվ մեջքիդ կապած — կայծակն ահալի,
Եվ վորոտմունքը քո խորհրդավոր՝
Անձրև եր թափում հողին ծարավի։

Հերիք ե, ծածկվիր։ Քո ժամը անցել,
Ծպտում ե ահա հողը զովաշունչ.
Քամին — սաղարթն ե շոշում քնքշաձեռ
Ցեվ քեզ — հանդարտված — լերկնքից քշում։

1835

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

Նստած ճաղերից ներս բանտի մեջ իմ թաց,
Տեսնում եմ արծիվ մի գերի մեծացած,
Տխուր իմ ընկերը թևերը ցնցում,
Ցածում արյունոտ նա իր կերն է կտցում։

Կտցում է, դցում նա, նայում դեպի վեր,
Կարծես թե նա ինձ հետ նույն բանը խորհեր,
Կանչում հայացքով իր կանչով արծվային,
Ասել է ուզում նա՝ «Թռչենք միասին։

Ազատ թռչուններ ենք, արդ ժամ է, ընկեր,
Այնտեղ, ուր ամպից դեն ճերմակ են սարեր,
Այնտեղ, ուր կապտում է ծովեզերը այնպես,
Այնտեղ, ուր շրջում է լոկ հողմը... և չես...»

ԴԱՅԱԿԻՆ

Ընկերուհի իմ դաժան օրերի,
Արդեն զառամած իմ աղավնյակ,
Խորքում սոճենու թավ անտառների,
Վաղուց սպասում ես ինձ մենակ։

Պատուհանի տակ դու քո սենյակի,
Տխրում ես ամեն ժամի վրա,
Եվ դանդաղում են կնճռոտ քո ձեռքին
Րոպե առ րոպե ճաղերն ահա։

Եվ դարպասին ես նայում մոռացված,
Դեպի հեռավոր ու սև ճամբան.
Նախազգացում, հոգս, թախիծ լցված
Ճնշում են կուրծքըդ ամեն մի պահ...

ՀՈՒՇԱՐՁԱՆ

Բարձրացրի անձեռակերտ լես հուշարձանն իմ վեհ,
Չի մոմոտի դեպ այն տանող՝ ժողովրդի ճամբան,
Անհրնազանդ գլխով նա խոյացավ ավելի վեր
Հուշասյունից Ալեքսանդրյան։

Վա՛յ, անվախճան եմ լես—հոգիս նվիրական լերգով
Իմ աճյունից լերկար կապրի և կըմընա՛ անեղծ—
Ցեվ իմ հուշակը չի հանգչի, վորքան լուսնի ներքո
Կապրի թեկուզ մի բանաստեղծ։

Համբաձիլ իմ Ռուսիայում անծալրածիր՝ կտարածվի,
Ինձ կհիշի լուրքանչյուր լեզու այնտեղ ապրող,
Սլավոնի թոռը սեգ ու ֆինննը, դեռ ալսոր վայրի
Տունդուզը և կալմիկն ստեպ սիրող։

Ցեվ լես լերկար կապրեմ սիրով ժողովրդի սրտում,
Քանի վոր քնարն իմ արթնացրել է զգացմունքները բարի,
Ցեվ իմ դաժան դարում լերգել եմ լես ազատությունն
Ցեվ գութ հանուն ընկածների։

Դու լերկնքի հրամանին լըսիր, ո իմ Muse,
Ցեվ մի սարսի հալածանքից և մի ձգտի փառքի,
Դու անտարբեր լըսիր զրպարտությունն և գովասանք,
Ցեվ հիմարին մի առարկի։

1836


Цгацц ьдьг

ՄԻ ՀԱՏՎԱԾ «ՁԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՁՐՈՒՄ» ԳՐՔԻՑ

Ա. <ալեվսկուց> նամակ ստացա։ Նա ինձ գրում եր, վոր յես շտապեմ դեպի Կարս, վորովհետև մի քանի որից զորքը պիտի առաջ շարժվեր։ Յես հենց հետևյալ որը ճանապարհ ընկա։

Յես գնում եյի ձիով, փոխելով ձիերը կոզակների պոստերում։ Շուրջս գետինը խանձված եր տոթից։ Վրացական գյուղերը հեռվից ինձ գեղեցիկ այգիներ եյին թվում, իսկ մոտենալով նրանց, յես տեսնում եյի մի քանի աղքատ խրճիթներ ծածկված փոշոտ բարդիների հովանու տակ։ Արևը մայր մտավ, բայց ողը դեռ խեղդող եր.—

Գիշերներ տոթ,
Ասղեր nsuր...

Լուսինը փայլում եր. ամեն ինչ խաղաղ եր։ Միմիայն ձիուս դոփյունն եր լսվում գիշերային լուռթյան մեջ։ Յես լերկար գնում եյի, չհանդիպելով բնակութեյան նշույլներին։ Վերջապես տեսա առանձնացած մի խրճիթ։ Սկսեցի բաղխել դուռը։ Դուրս յեկավ տերը։ Յես ջուր խընդրեցի, նախ ուսերեն, ապա Թուրքերեն։ Նա ինձ չհաս-

կացավ։ Զարմանալի անհոգությունª Թիֆլիսից յերեսուն վերստի վրա, Պարսկաստանի և Թուրքիայի ճանապարհին, նա վոչ մի խոսք չգիտեր վոչ ռուսերեն, վոչ ել թուրքերեն։

Գիշերն անցկացնելով կոզակների պոստում, յես լուսաբացին շարունակեցի ճանապարհս։ Ճանապարհս անցնում եր սարերով և անտառով։ Յես հանդիպեցի ճանապարհորդ թյուրքերի. նրանց մեջ կային մի քանի կանայք։ Նրանք նստած եյին ձիերի վրա, փաթաթված չադրայով. միայն յերևում եյին նրանց աչքերն ու կրունկները։

Յես սկսեցի բարձրանալ Բզովդալը, այն սարը, վորը բաժանում ե Վրաստանը հին Հայաստանից։ Ծառերով հովանավորված լայն ճանապարհը վոլորապտույտ անցնում ե սարի մոտով։ Բզովդալի գագաթին յես անցա մի փոքր կիրճով, վորը, կարծեմ, Գայլի դուռ ե կոչվում և արդեն գտնվում եյի Վրաստանի բնական սահմանի մոտ։ Իմ առաջ բացվեցին նոր սարեր, նոր հորիզոն. վոտներիս տակ փռված եյին բուսավետ, կանաչ արտեր։ Յես մի անգամ ել նայեցի արևից խանձված Վրաստանի վրա և սկսեցի վայր իջնել սարի թեթև զառիվայր լանջով դեպի Հայաստանի թարմ դաշտավայրերը։ Աննկարագրելի հաճույքով յես նկատեցի, վոր տոթը հանկարծ մեղմացավ. կլիման արդեն ուրիշ եր։

Ծառաս բեռնակիր ձիերի հետ ինձնից յետ մնաց։ Յես գնում եյի մենակ ծաղկափթիթ անապատով, վոր հեռվից շրջապատված եր սարերով։ Ցրվածությանս պատճառով յես այն պոստի մոտովն անցա, ուր պետք ե ձիերը փոխեյի։ Անցավ ավելի քան վեց ժամ և յես սկսեցի զարմանալ, թե ինչու յերկարեց ճանապարհը։ Յես տեսա մի կողմում քարակույտեր, վորոնք նման եյին հյուղերի և գնացի նրանց մոտ։ Պարզվեց, վոր իսկապես յես յեկել եյի մի հայկական գյուղ։

Մի քանի կին, խալտաբղետ ցնցոտիներ հագներին նստած ելին դեռնափոր խրճիթի տափակ կտրին։ Ցես մի կերպ բացատրվեցի։ Ներանցից մեկն իջավ խրճիթը և բերից ինձ համար պանիր ու կաթ։ Մի քանի րոպե հանդըստանալով, ցես առաջ գնացի և դիմացս, գետի բարձր ափին տեսա Գյառգյառ բերդը։ Ցերեք վտակ աղմուկով ու փրփրած վայր ելին թափվում բարձր ափից։ Ցես անցա դեռը։ Ցերկու լեզ սալին լծած բարձրանում ելին դառիթափ ճանապարհով։ Մի քանի վրացի ուղեկցում ելին սալը։ Վորտեղից եք գալիս դուք, հարցրի ցես ներանց։— Թեհրանից։— Ի՞նչ եք տանում։— Գրիբոյեդովի մարմինն եր, վոր փոխադրում ելին Թիֆլիս։

Ցես չելի կարծում, թե լերբևիցե կհանդիպեմ մեր Գրիբոյեդովին։ Ցես բաժանվեցի ներանից անցյալ տարի, Պետերբուրգում, նրա Պարսկաստան գնալուց առաջ։ Նա տխուր եր և տարորինակ նախազգացումներ ուներ։ Ցես սկսեցի նրան հանգստացնել. նա ինձ ասաց.— Vous ne connaissez pas ces gens-là, vous verrez qu'il faudra jouer des couteaux[1]։ Նա կարծում եր, թե արյունահեղության պատճառը կլինի շահ-մահը և նրա յոթանասուն վորդիների միջև ծագած լերկպառակությունը։ Սակայն գառամած շահը դեռ կենդանի լե, իսկ Գրիբոյեդովի մարգարեական խոսքերը իրականացան։ Նա ընկավ պարսիկների դաշույններից, վորպես տգիտության և նենգության զոհ։ Ներա այլանդակված դիակը, վոր լերեք որ Թեհրանի ամբոխի խաղալիքն և լեղել, կարելի լեր լեղել ճանաչել միայն ձեռքից, վորը մի ժամանակ ծակված և լեղել ատրճանակի գնդակով։

[1] <Դուք դեռ չգիտեք այդ մարդկանց,— դուք կտեսնեք, վոր բանը կհասնի դանակների>։

Ցես Գրիբոյեդովի հետ ծանոթացա 1817 թվին։ Նրա մելանխոլիկ բնավորությունը, նրա զայրացած խելքը, նրա բարեհոգությունը, բոլոր նրա թուլություններն ու արատները, որոնք մարդկության անխուսափելի ուղեկիցներն են,—ամեն ինչ նրա մեջ արտասովոր գրավչություն ուներ։ Ի ծնե ունենալով փառասիրություն, որ համապատասխանում էր իր ձիրքերին, նա յերկար ժամանակ ծնացել էր մանր կարիքների և անհաջողության ցանցերով պատած։ Պետական մարդու ընդունակությունները ծնացել էին առանց գործադրության։ Բանաստեղծական տաղանդը ճանաչված չէր. մինչև իսկ նրա սառն ու փայլուն քաջությունը վորոշ ժամանակ ծնացել էր կասկածանքի տակ։ Մի քանի բարեկամներ միայն գիտեյին նրա գինը և տեսել էյին անվստահության այն ժպիտը, այն հիմար, անտանելի ժպիտը,—յերբ նրանք առիթ էյին ունեցել խոսելու նրա մասին, վորպես մի արտակարգ մարդու մասին։ Մարդիկ հավատում են միայն փառքին և չեն հասկանում, վոր իրանց մեջ կարող է գտնվել մի վորևե Նապոլեոն, վոր չի առաջնորդել և վոչ մի յեգերական վաշտ, կամ մի այլ Դեկարտ, վոր չի տպագրել վոչ մի տող Մոսկովսկի Տելեգրաֆում։ Սակայն դեպի փառքը տածած մեր հարգանքը ծագում է դուցե ինքնասիրությունից.— Փառքի կազմի մեջ չե՞ վոր մտնում է և մեր ձայնը։

Գրիբոյեդովի կյանքը մթագնած էր վորոշ ամպերով.— հետևանք՝ բորբոք կրքերի և հզոր հանգամանքների։ Նա անհրաժեշտություն զգաց մի անգամ ընդմիշտ հաշիվ տեսնել իր յերիտասարդության հետ և կտրուկ շուռ տալ իր կյանքը։ Նա հրաժեշտ տվեց Պետերբուրգին և անհոգ ցրվածությանը, գնաց Վրաստան, ուր ծնաց ութ տարի, նվիրված իր մեկուսացած անխոնջ պարապմունքներին։ Նրա Մոսկվա վերադառնալը 1824 թվին հեղաշրջում էր

նրա վիճակի մեջ և սկիզբ անընդհատ հաջողություններին։ Նրա «Մեկլքից պատուհաս» ձեռագիրը կոմեդիան աննկարագրելի ազդեցություն գործեց և մի անգամից նրան դասեց մեր առաջնակարգ բանաստեղծների շարքը։ Մի վորոշ ժամանակ անց, նրա կատարելագես ծանոթ լինելն այն լերկրին, վորտեղ սկսվում եր պատերազմը, նոր աստպարեզ բացեց նրա առաջ։ Նա նշանակված եր դեսպան։ Գալով Վրաստան, նա ամուսնացավ նրա հետ, վորին սիրում եր... յես չգիտեմ ավելի նախանձելի մի բան, քան նրա փոթորկալից կյանքի վերջին տարիները։ Նույնիսկ խիղախ անհավասար կռվում վրա հասած մահը, Գրիբոյեդովի համար չեր յեղել սարսափելի ու տանջալի մի բան։ Այն վայրկենական և յեղել և սքանչելի։

Վորքան ցավալի յե, վոր Գրիբոյեդովը չի թողել իր հուշատրերը։ Նրա կենսագրությունը գրելը նրա բարեկամների գործը պետք և լինի։ Սակայն նշանավոր մարդիկ մեզ մոտ անհետանում են, հետք չթողնելով իրենցից հետո։ Մենք ծուլ ենք և չհետաքրքրվող։

Գյուղպատում յես հանդիպեցի Բ<ուտուրլինին>, վորը, ինչպես և յես, գնում եր բանակը։ Բ<ուտուրլինը> ճանապարհորդում եր բազմապիսի հարմարություններով։ Յես ճաշեցի նրա մոտ կարծես Պետերբուրգում։ Մենք վճռեցինք ճանապարհորդել միասին, սակայն անհամբերությանը դեվը նորից տիրեց ինձ։ Ծառաս ինձնից թուլլտվություն խնդրեց հանգստանալու։ Յես ուղեվորվեցի մենակ, նույնիսկ առանց ուղեկցողի։ Ճանապարհը միշտ նույնն եր և միանգամայն անվտանգ։ Անցնելով վոչ բարձր մի սար և իջնելով ծառերով ծածկված հովիտը, յես տեսա մի հանքային աղբյուր, վոր հոսում եր ճանապարհի լայնքով։ Այստեղ յես հանդիպեցի մի հայ տերտերի, վորը գնում եր Յերևանից Ախալցխա։ Ի՞նչ նոր բան կա Յերե-

վանում,—հարցրի յես նրանից։ — Ցերեկում ժանտախտ է, — պատասխանեց նա։ — Իսկ ինչ լուր կա Ախալցխայի մասին։— Ախալցխայում ժանտախտ է, պատասխանեցի յես նրան։ Փոխանակելով սույն հաճելի լուրերը, մենք բաժանվեցինք։

Ցես գնում եյի բերրի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով։ Հունձը ծորում եր, սպասելով մանգաղի։ Ցես հիանում եյի այս սքանչելի հողով, վորի բերրիությունը արեվելքում առած է դարձել։ Իրիկնադեմին յես հասա Պարնիքլոյ։ Այստեղ կոզակների պոստ կար։ Ուրյադնիկը փոքրորիկ եր նախագուշակում և ինձ խորհուրդ եր տալիս մնալ գիշերելու։ Բայց յես ուզում եյի անպատճառ նույն որը հասնել Գումրի։

Ցես պետք է անցնելի վոչ բարձր սարերով, վորոնք Կարսի Փաշալիկի բնական սահմանն եյին կազմում։ Ցերկինքը ծածկված եր ամպերով, յես հույս ունեյի, վոր ժամեժամ ուժեղացող քամին նրանց կցրի։ Բայց անձրևն սկսեց կաթկաթել և դնալով ավելի խոշորեց ու խտացավ։ Պարնիքլոյից մինչև Գումրի 27 վերստ են հաշվում։ Ցես ամրացրի յափունջուս փոկերը, հագա բաշլուղս գըլխարկիս վրայից և ինձ հանձնեցի նախախնամությանը։

Անցավ ավելի քան յերկու ժամ։ Անձրևը չեր դադարում։ Ջուրը շուռալով թափվում եր ծանրացած յափունջուս և անձրևից հագեցած բաշլուղիս վրայից։ Վերջապես սառը շիթն սկսեց թափանցել փողպատիս տակով և շուտով անձրևը թրջեց ինձ մինչև վերջին թելը։ Գիշերը մութն եր. կոզակը գնում եր առաջիցս, ցույց տալով ճանապարհը։ Մենք սկսեցինք բարձրանալ դեպի սարերը։ Այդ միջոցին անձրևը դադարեց և ամպերը ցրվեցին։ Մինչև Գումրի մնում եր մոտ տաս վերստ։ Քամին իրեն ազատ զգալով, այնքան ուժեղ եր փչում,

վոր քառորդ ժամում ինձ բոլորովին չորացրեց։ Ցես չելի կարծում, թե կխուսափեմ ջերմախտից։

Վերջապես մոտ կես գիշերին հասա Գումրի։ Կոզակն ուղղակի ինձ բերեց պոստը։ Մենք կանգ առանք վրանի մոտ, ուր շտապում էլի լես մտնել։ Այստեղ լես գտա տաններկու կոզակ, կողք կողքի քնած։ Ինձ տեղ տվին։ Ցես հոգնածությունից ինքս ինձ կորցրած ընկա յափունջուս վրա։ Այդ որը լես անցել էլի 76 վերստ։ Ցես քնեցի մեռածի պես։

Կոզակները ինձ զարթեցրին արշալույսին։ Իմ առաջին միտքն եր.—արդյոք ջերմով չեմ բռնված։ Սակայն զգացի, վոր փառք աստծո, զվարթ եմ, առողջ. վոչ միայն հիվանդությյան, այլև հոգնածությյան հետք չկար։ Ցես դուրս լեկա վրանից՝ առավոտյան թարմ ոդ ծծելու։ Արևը ծագում եր։ Պարզ լերկնքի վրա սպիտակին եր տալիս ձյունապատ, լերկգլխանի մի սար։ Ի՞նչ սար ե,—հարցրի լես ճլնկոտալով և լսեցի պատասխան,—դա Արարատն ե։ Վորքան զորավոր ե հնչյուններն ներգործությունը։ Ագահաբար նայում էլի լես բիբլիական սարին, տեսնում էլի տապանը, վոր կանգ եր առել նրա գագաթին Նոյոմանն և կյանքի հուսով—և դուրս թռչող ագռավն ու աղավնին, պատժի և հաշտության սիմվոլներին...

Ձիս պատրաստ եր։ Ճանապարհ ընկանք ուղեկցողիս հետ։ Առավոտը հիանալի լեր։ Արևը փայլում եր։ Մենք գնում էլինք լայն մարգագետինով, ցողով ու լերեկվա անձրևի կաթիլներով վոռոգված խիտ կանաչ խոտի վրայով։ Մեր առաջ փայլում եր մի գետակ, վորը մենք պետք ե անցնեինք։ Ահա և Արփաչայը,—ասաց ինձ կոզակը։ Արփաչայը, մեր սահմա՛նը։ Դա արժեր Արարատին։ Ցես սուրացի դեպի գետը մի անմեկնելի զգացմունքով։ Դեռ լերբեք ոտար լերկիր լես չելի տեսել։

Սահմանն ինձ համար ինչ վոր խորհրդավոր բան եր։ Դեռ մանկության որերից ճանապարհորդությունն իմ սիրած լերազանքն ե լեղել։ Հետագայում լես լերկար ժամանակ աստանդական կյանք եմ վարել, թափառե ո մերթ Հարավում, մերթ Հյուսիսում, և դեռ լերբեք անծայրածիր Ռուսաստանի սահմաններից դուրս չեյի լեկել։ Ցես ուրախությամբ մտա նվիրական գետը և լավ ձիս դուրս հանեց ինձ Թուրքական ափը։ Սակայն այդ ափն արդեն նվաճված եր.—լես դարձյալ գտնվում եյի Ռուսաստանում։

Մինչև կարս ինձ Ճում եր ևս 76 վերստ։ Իրիկնադեմին լես հույս ունեյի տեսնելու մեր ճամբարը։ Ցես վոչ մի տեղ կանգ չեյի առնում։ կես ճանապարհին, սարերի մեջ, գետակի ափին շինած մի հայկական գյուղում ճաշի փոխարեն կերա լես անիծյալ չյուրեկը՝ այն բլիթանման մոխրի հետ կիսախառն թխած հայկական հացը, վորին այնքան կարոտում եյին Թուրք գերինները Դարիալի կիրճում։ Մեծ գին կտալի լես մի կտոր ռուսական սև հացի համար, վորը նրանց այնքան անախորժ եր։ Ինձ ուղեկցում եր մի լերիտասարդ Թուրք, վոր սարսափելի շատախոս եր։ Նա ամբողջ ճանապարհը շատախոսում եր Թուրքերեն, չհոգալով այն մասին, Թե արդյոք հասկանում եմ լես նրան Թե վոչ։ Ցես լարում եյի ուշադրությունս ու աշխատում եյի հասկանալ նրան։ Թվում եր, Թե նա մի Թեթև հայհոյում եր ռուսներին, սովոր լինելով նրանց բոլորին տեսնել համազգեստո ինձ իմ հագուստիս պատճառով ոտարերկրացու տեղ եր ընդունում։ Մենք հանդիպեցինք մի ռուս սպայի։ Նա գալիս եր մեր ճամբարից և ինձ հայտնեց, վոր բանակն արդեն կարսից առաջ է շարժվել։ Ջեմ կարող նկարագրել իմ հուսահատությունը. այն միտքը, վոր լես ստիպ-

ված պիտի լինեմ վերադառնալ Թիֆլիս, ամայի Հայաստանում զուր տեղը չարչարվելուց հետո, բոլորովին ապանում եր ինձ։ Սպան գնաց իր ճանապարհով։ Թուրքը նորից սկսեց իր մենախոսութիւնը, բայց ես արդեն ականջ չեյի դնում նրան։ Ցես ձիուս յորդան փոխեցի խոշոր վարդի և յերեկոյան հասա մի թուրքական գյուղ, վորը գտնվում եր Կարսից 20 վերստ հեռավորութեյան վրա։

Վալը ցատկելով ձիուց, ես ուզում եյի մտնել հենց առաջին խրճիթը, բայց դռանը յերևաց տերը և հայհոյանքով ետ հրեց ինձ։ Ցես նրա վողջույնին պատասխանեցի մարակով։ Թուրքը սկսեց գոռգոռալ, մարդիկ հավաքվեցին։ Իմ ուղեկցողը, կարծեմ, ինձ պաշտպան կանգնեց։ Ինձ ցույց տվին քարվանսարան. ես ներս մտա մի մեծ դամանման խրճիթ. տեղ չկար, վոր յափընջիս կարողանայի փռել։ Ցես սկսեցի ձի պահանջել։ Մոտս յեկավ թուրք տանուտերը։ Նրա բոլոր անհասկանալի խոսքերին, ես մի բան եյի պատասխանում.—վեր բաճա ար (տուր ինձ ձի)։ Թուրքերը չեյին համաձայնում։ Վերջապես դլխի ընկա նրանց փող ցույց տալու (դրանից եյ հարկավոր եր սկսել)։ Ջին խմկուշն բերին և ինձ տվին ուղեկցող։

Ցես գնացի լայն հովիտով, վորը շրջապատված եր սարերով։ Շուտով ես տեսա Կարսը, վորը սպիտակին եր տալիս սարերից մեկի վրա։ Իմ թուրքը ցույց եր տալիս ինձ այն, կրկնելով՝ Կարս, Կարս և չափ եր գցում իր ձին։ Ցես հետևում եյի նրան, տանջվելով անհանգստութեյունից.—վիճակս պետք է վորոշվեր Կարսում։ Այստեղ ես պիտի իմանայի, թե վորտեղ է գտնվում մեր ճամբարը, և թե հնարավորութեյուն կունենամ արդյոք հասնելու բանակին։ Այդ միջոցին յերկինքը ծածկվեց ամպերով

և նորից տեղաց անձրև, բայց չես այդ մասին այլևս չելի հոգում։

Մենք մտանք կարս։ Պարսպի դռանը մոտենալիս, չես լսեցի ռուսական թմբուկի ձայնը—զարկում էլին այ-գանվաղ։ Պահակն ընդունեց ինձնից իմ տոմսը և գնաց պարետի մոտ։ Ցես անձրևի տակ կանգնած ճնացի մոտ կես ժամ։ Վերջապես ինձ ներս թողին։ Ցես պատվիրեցի ուղեկցողիս, որ ուղիղ ինձ բաղանիք տանի։ Մենք գնացինք ծուռ, զառիթափ փողոցներով. ձիերը սալթաքում էլին թուրքական վատ մալթի վրա։ Կանգ առանք մի բավականին վատ տեսք ունեցող տան առաջ։ Այդ բաղանիքն էր։ Թուրքը իջավ ձիուց և սկսեց բախել դուռը։ Վոչ վոք չէր պատասխանում։ Անձրևը շաղաղով թափվում էր վրաս։ Վերջապես մոտիկ տնից դուրս լեկավ մի յերիտասարդ հայ և բանակցելով թուրքիս հետ, կանչեց ինձ իր մոտ, խոսելով բավական մաքուր ռուսերեն։ Նա ինձ նեղ սանդուխքով տարավ իր տան յերկրորդ մասը։ Ցածը բազկաթոռներով և հին գորգերով կահավորված սենյակում նըստած էր մի պառավ կին, նրա մայրը։ Նա մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռը։ Վորդին պատվիրեց նրան կրակ անել ու ինձ համար ընթրիք պատրաստել։ Ցես հանվեցի ու նստեցի կրակի մոտ։ Ներս մտավ տանտիրոջ փոքր յեղբայրը, մոտ տասնյոթ տարեկան տղա։ Ցերկու յեղբայրն էլ յեղել էլին Թիֆլիս և այնտեղ ապրել մի քանի ամիս։ Նրանք ինձ ասացին, վոր մեր զորքերը առաջ են շարժվել նախընթաց որը և վոր մեր ճամբարը դտնվում է Կարսից 25 վերստ հեռու։ Ցես բոլորովին հանգստացա։ Շուտով պառավը ինձ համար պատրաստեց վոչխարի միս սոխով, վորն ինձ խոհարարական արվեստի գագաթնակետը թվաց։ Մենք բոլորս պառկեցինք միևնույն սենյակում։ Ցես պառկեցի մարվող բուխարու դիմաց և քնեցի այն հաճելի

հուլսով, վոր մյուս որը պիտի տեսնեմ կոմս Պասկևիչի ճամբարը։

Առավոտյան գնացի քաղաքը դիտելու։ Տաճառերեըցս փոքրը հանձն առավ իմ չիչերոնը լինելու։ Դիտելով ամրութիւններն ու միջնաբերդը, վոր շինված է անմատչելի ժայռի վրա, լես չեյի հասկանում, թե ինչպես ենք մենք կարողացել տիրանալ Կարսին։ Իմ հալը բացատրում եր ինձ, ինչպես կարողանում եր, ռազմական գործողութիւնները, վորոնց նա ականատես եր լեղել։ Նկատելով նրա ձգտումը դեպի պատերազմը, լես առաջարկեցի նրան գնալ ինձ հետ բանակ։ Նա սիրով համաձայնեց։ Ցես ուղարկեցի նրան ձիեր բերելու։ Նա վերադարձավ մի սպայի հետ, վորն ինձանից պահանջեց դրավոր հրաման։ Նրա ասիական դիմագծերից դատելով, լես հարկավոր չհամարեցի քրքրել թղթերս և հանեցի դրպանիցս հենց առաջին ձեռքս ընկած թերթիկը։ Սպան փքվելով սկսեց դիտել այն, իսկույն հրամայեց ձիեր բերել նորին բարեծննդութեան համար ըստ հրամանագրի և վերադարձրեց ինձ իմ թուղթը։ Դա մի ձոն եր նվիրված մի կալմիկուհու, վոր լես խզբզել եյի Կովկասյան կալաբաններից մեկում։

Կես ժամ հետո մեկնեցի կարսից, և Արտեմը (այդպես եր կոչվում իմ հալը) արդեն արշավում եր կողքիս թուրքական հովատակի վրա, քրդական ճկուն տեգը ձեռին, դաշույնը գոտին խրած, և զառանցելով թուրքերի ու ճակատամարտերի մասին։

Ցես անցնում եյի մի վայրով, ուր ամենուրեք ցորեն եր ցանած։ Զորս կողմն լերևում եյին գյուղեր, բայց նրանք դատարկ եյին, — բնակիչները փախել եյին։ Ճանապարհը հիանալի լեր և խրուստ տեղերը սալահատակած — առուների վրա շինված եյին քարե կամուրջներ։

Հողը նկատելի կերպով բարձրանում էր — Սողանլուղի լեռնաշղթայի՝ հին Տավրոսի առաջավոր բլուրներն սկսում էին երևալ։ Անցավ մոտ երկու ժամ, ես բարձրացա թեթև զառիվեր մի բարձրավանդակի վրա և հանկարծ տեսա մեր ճամբարը, որ տեղավորված էր Կարսաչայի ափին։ Մի քանի րոպե անց ես արդեն Ռ<այեսկու> վրանում էի։

Գուշակինի կինը
Նատալյա Գոնչարովա

ԲՈՒՔԸ

(Մի հատված «Կապիտանի աղյիկը» վեպից)

Ե ուրջս տարածվում էլին տխուր տափաստանները, տեղ-տեղ բլուրներով ու ձորերով կտրատված։ Ամեն ինչ ձյունով էր ծածկված։ Արևը մալը էր մտնում։ Կիբիտկան ընթանում էր մի նեղ ճանապարհով, կամ ավելի ճիշտ՝ գեղջկական սահնակների թողած հետքով։ Հանկարծ կառապանս սկսեց մի կողմ նայել. նայեց, նայեց և վերջապես գլխարկը հանելով դարձավ ինձ ու ասաց. «Բարին, արդյոք չէք հրամայի վերադառնալ»։

— Ինչո՞ւ վոր։

«Ժամանակը ձախ է. քամին սկսում է կամաց-կամաց ուժեղանալ. տեսնում ես, թե ինչպես է սրբում ձյունափոշին»։

— Ե՛, մեզ ինչ վնաս։

«Բա չես տեսնում, թե ինչ է ենտեղ»։ (Կառապանը մտրակը դեպի արևելք ուղղեց)։

— Բացի ճերմակ տափաստանից և պարզ լերկնքից ուրիշ վոչինչ չեմ տեսնում։

«Ա՛յ, հրեն — հրեն. են փոքրիկ ամպը»։

Իսկապես, լերկնքի լեզրին մի փոքրիկ, սպիտակ ամպ տեսա, վորը սկզբում ինձ թվաց վորպես հեռավոր մի բլրակ։ Կառապանը բացատրեց, վոր այդ ամպը բուք է նախազուշակում։

Ցես լսել էլի այդ կողմերի ձկունախառն փոթորիկների մասին և գիտեյի, որ դեպքեր են լեղել, երբ ամբողջ սալլախմբեր թաղվել են ձյան տակ։ Սավելիչը, համաձայնվելով կառապանի կարծիքին, խորհուրդ տվեց վերադառնալ։ Սակայն քամին ինձ այնքան էլ ուժեղ չերևաց. չես հուշս ունեյի ժամ առաջ հասնել հետևյալ կայարան և հրամայեցի ավելի արագ քշել։

Կառապանը քշեց, բայց միշտ դեպի արևելք եր նայում։ Ձիերը վազում էլին համընթաց։ Այնինչ, քամին ժամ առ ժամ սաստկացավ։ Ամպիկը դարձավ մի ահագին սպիտակ ամպ, որ դանդաղ բարձրանալով մեծացավ և աստիճանաբար բռնեց լերկնքի լերեսը։ Մանր ձյուն լեկավ և հանկարծ՝ թափվեց առատ-առատ փաթիլներով։ Քամին վոռնաց, բուքն ընկավ։ Մի ակնթարթում մութ գիշերը խառնվեց ձյան ծովի հետ։ Ամեն ինչ կորավ։ «Դե, բարին,—գոռաց կառապանը,—բաններս բուրդ ե, բուքբորանն ընկավ»...

Ցես դուրս նայեցի կիբիտկայից — խավար եր և մըրրիկ։ Քամին փչում եր այնպիսի ուժեղ վոռնոցով, որ ասես շնչավոր եակ լիներ. ձյունը ծածկում եր ինձ ու Սավելիչին. ձիերը համրաքայլ առաջ էլին գնում և շուտով կանգ առան։ «Ինչու չես գնում»,—անհամբեր հարցըրի յես կառապանին։ — Վոնց գնամ,—պատասխանեց նա նստած տեղից իջնելով. — հայտնի չե, թե ես ուր լեկանք. ճանապարհ չկա և չորս կողմը թանձր մշուշ ե։ — Սկսեցի նախատել նրան։ Սավելիչը նրա կողմը բռնեց։ «Աստ ինչ խելք եր՝ չլսեցիր նրան,—խոսում եր նա բարկացած.—կվերադառնայիր իջևանատուն, թեյ կխմեյիր, առաքփառաք կքնեյիր մինչև լույս, բուքը կվաղաղվեր՝ կշարունակեյինք ճանապարհը։ Ցեվ ուր եր շտապում ենք. են ելի մի բան եր, թե հարսանիք գնալինք»։ — Սավելիչն

իրավ եր։ Ճար չկար։ Ձյունը գալիս եր, հա գալիս։ Կիբիտկալի մոտ արդեն ձյան ահագին կույտ եր գոյացել։ Ձիերը կանգնել եյին գլուխները խոնարհած և լերբեցին ցնցվում եյին։ Կառապանը պտտվում եր շուրջը, պարապուքյունից լծասարքը կարգի բերելով։ Սավելիչը փընթփընթում եր. լես նայում եյի ամեն կողմ՝ հուսալով բնակատեղի կամ ճանապարհի գոնե մի նշան տեսնել, սակայն՝ բացի բուքի խոլական պտույտներից, վոչինչ չկարողացա զանազանել։ Հանկարծ ինչ վոր սև բան տեսա։ «Ե՛յ, կառապան,— կանչեցի լես.— տես, ինչ ե ալնտեղ սևին տալիս»։ Կառապանն սկսեց ուշի-ուշով դիտել։ — «Ասոված գիտի, բարին,— ասաց նա իր տեղը նստելով.— բեռ ասեմ՝ բեռ չե, ծառ ասեմ՝ ծառ չե. համա կասես շարժվում ե։ Ցերևի — կամ գել ե, կամ՝ մարդ։

Ցես հրամայեցի քշել դեպի անծանոթ առարկան, վոր իսկույն և եթ սկսեց դեպի մեզ շարժվել։ Ցերկու րոպեյից հետո մենք հավասարվեցինք մի մարդու հետ։ «Հե՛յ, բարի մարդ,— ձայն տվեց նրան կառապանը։— Ասա, չգիտես ուր ե ճանապարհը»։

— Ճանապարհը հենց եստեղ ե. լես ամուր գետնի վրա լեմ կանգնած,— պատասխանեց ճամբորդը,— բայց ինչ ոգուտ։

— Լսիր, շինական,— ասացի լես նրան.— դու այս կողմերին ծանոթ ես։ Կհամաձայնես արդյոք ինձ մի ոթեվան հասցնելու։

—Ես տեղերն ինձ ծանոթ են,— պատասխանեց ճամբորդը.— փառք աստծո, ենքան ենք դես ու դեն գնացել վոր։ Համա չես տեսնում, թե ինչ լեղանակ ե. շատ շուտ կծռվես ճանապարհից։ Լավ ե եստեղ ճնանք ու սպասենք։ Կարելի լե թե բուքը հանդարտի և լերկինքը պարզվի. են ժամանակ ճանապարհը աստղերով կգտնենք։

Նրա սառնարյունությունն ինձ սիրտ տվեց։ Ցես արդեն վորոշել եյի ինձ աստծու կամքին հանձնելով գիշերել բաց տափաստանում, յերբ հանկարծ ճամբորդն արագ շարժումով բարձրացավ, նստեց կիբիտկայի առջևի մասում և ասաց կառապանին. «Ե՛, փառք աստծու, բնակատեղը հեռու չի, ձիերի գլուխն աջ շուռ տուր ու քշիր»։— «Իսկ ինչի՞ աջ քշեմ,—հարցրեց կառապանն անբավական։— Եդ վորտեղ ե՞լ դու տեսար ճանապարհը։ Քեզ ինչ կա. վոչ ձին և քոնը, վոչ՝ ձիու սարքը. քեզանից ինչ և դնում — քշի, հա՛ քշի»։ — Ինձ թվաց, վոր կառապանն իրավացի յեր։ «Իսկապես,— ասացի յես. — ինչո՞ւ յես կարծում, վոր բնակատեղը հեռու չի»։ — «Նրա համար, վոր քամին են կողմից փչեց,— պատասխանեց ճամբորդը,— և յես ծխի հոտ առա. ասել և թե գյուղը մոտիկ ե»։ Նրա ուշիմությունն ու նուրբ հոտառությունն ինձ ապշեցրեց։ Կառապանին հրամայեցի քշել։ Ոոր ձյան միջով ձիերը դժվարությամբ եյին քայլում։ Կիբիտկան հանդարտ առաջ եր գնում մերթ բարձրանալով ձյունակուտերի վրա, մերթ՝ փոսերն ընկնելով և մեկ ալս, մեկ այն կողմը շրջելով։ Դա նման եր ալեկոծ ծովում նավի լողալուն։ Սավելիչը ախ ու վախ եր քաշում, ամեն րոպե իմ կողերին բախվելով։ Ցես ցած թողի կիբիտկայի ծածկոցը, փաթաթվեցի քուրքի մեջ և սկսեցի նիհրել՝ փոթորկի յերգի և դաղաղ յերթի որորով։

ՓՈՍՏԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ

Կոլլեգիական ռեգիստրատոր [1]
փոստակայանի դիկտատոր
Իշխան ՎՅԱԶԵՄՍԿԻ [2]

Ո՞վ չի նզովել փոստակայանի վերակացուներին, ո՞վ չի ընդհարվել նրանց հետ։ Ո՞վ, բարկութ֊յան րոպեյին, չի պահանջել նրանցից ճակատագրական գիրքը, վորպեսզի գրի նրա մեջ իր անոգուտ բողոքը, կրած նեղութ֊յուն֊ների, կոպիտ վերաբերմունքի և անկարգութ֊յունների համար։ Ո՞վ չի համարում նրանց մարդկային ցեղի ճիվաղ֊ներ, հավասար հանդուգյալ դատական գրագիրներին [3], կամ առնվազն Մուրոմյան ավազակներին [4]։ Սակայն, արդարա֊ցի լինենք, աշխատենք մտնել նրանց դրութ֊յան մեջ և, կարող ե պատահել, վոր մենք ավելի ներողամիտ կլինենք նրանց նկատմամբ։ Ի՞նչ ե փոստակայանի վերակացուն։

---

[1] *Կոլլեգիական ռեգիստրատոր (ցուցակագրիչ մատենա֊վար)—ստորին քաղաքացիական աստիճան ցարական Ռուսաս֊տանում։*

[2] *Պ. Ա. Վյազեմսկի—(1792—1878)—հայտնի բանաստեղծ, Պուշկինի ժամանակակիցն ու բարեկամը։*

[3] *Դատական գրագիր—հին ռուսական՝ պոդյաչիյ։ Այդ գրա֊գիրները բանասարկուների ու կաշառակերների համբավ եյին վայելում։*

[4] *Մուրոմի անտառները — Ոկա գետի աջ ափին, հին ժա֊մանակ հայտնի եյին իրենց ավազակներով։*

Տասնչորսերորդ կարգի մի կատարյալ նահատակ, որին իր աստիճանը փրկում է միայն ծեծից, և այն էլ վոչ միշտ (դիմում եմ իմ ընթերցողների խղճին)։ Ի՞նչպիսի պաշտոն է այդ դիկտատորի պաշտոնը, ինչպես անվանում է նրան կատակով իշխան Վյազեմսկին։ Արդյոք դա մի իսկական տաժանակիր աշխատանք չի՞։ Վոչ ցերեկը, վոչ էլ դիշերը հանդիստ չունի։ Ձանձրալի ճանապարհորդությանն ժամանակ կուտակված ամբողջ մաղձը ճանապարհորդը թափում է վերակացուի դլխին։ Ցեղանակն անտանելի լե, ճանապարհը վատ է, կառապանը համառ է, ձիերը չեն քաշում — մեղավորը վերակացուն է։ Մտնելով նրա աղքատիկ բնակարանը՝ ճանապարհորդը նայում է նրա վրա, վորպես իր թշնամու։ Լավ է, յեթե նրան հաջողվի շուտ ազատվել անկոչ հյուրից, իսկ յեթե ձիերը չլինեն... Աստված իմ, ինչ հայհոյանքներ, ինչ սպառնալիքներ կըտեղան նրա դլխին։ Անձրևին ու ցեխին ստիպված է նա վազվզել դրսում։ Բուք ու բորանին, սաստիկ սառնամանիքներին դուրս է դալիս նա նախասենյակ, վորպեսզի դեթ մի րոպե հանգստանա վրդովված այցելուի գոռգոռոցից ու հրնդումներից։ Գալիս է մի գեներալ. դողդոջուն վերակացուն տալիս է նրան վերջին յերկու յեռաձին, դրանց թվում և սուրհանդակային ճեպընթացը։ Գեներալը դնում է առանց շնորհակալություն հայտնելու նրան։ Մի հինդ րոպե անց — նորից դնգդնդոց... և ֆելդ-յեգերը[1] սեղանի վրա լե նետում իր ճանապարհի թուղթը[2]... Ըմբրոստնենք մի փոքր այդ բոլորի, և զայրույթի փոխարեն մեր

[1] Ֆելդ-յեգեր — ռազմական սուրհանդակ, վորի միջոցով ուղարկվում են հատուկ կարևորություն ունեցող հանձնարարությունները։

[2] Այդ թղթով նա իրավունք ուներ փոստի ձիեր պահանջելու։

սիրտը կլցվի անկեղծ խղճահարությամբ։ Նորից մի քանի խոսք. քսան տարի շարունակ ես ման եմ լեկել Ռուսաստանում բոլոր ուղղություններով. գրեթե բոլոր փոստային ուղիներն ինձ հայտնի լեն. կառապաններվի մի քանի տերունդ են ինձ ծանոթ. քիչ վերակացուներ կան, որոնց ես չեմ ճանաչում, քչերը կան, որոնց հետ ես գործ չեմ ունեցել. իմ ճամբորդական դիտողությունների հետաքրքիր պաշարը հույս ունեմ հրատարակելու մոտ ժամանակներս. իսկ առայժմ պիտի ասեմ միայն, որ փոստակայանների վերակացուների դասը սխալ կերպով և ներկայացված ընդհանուրի կարծիքին։ Այդ այնքան ամբաստանված վերակացուներն ընդհանրապես խաղաղ մարդիկ են, բնությամբ ծառայական, համակեցության հակում ունեն, համեստ են իրենց պահանջների մեջ դեպի պատիվն ու հարգանքը և այնքան էլ արծաթասեր չեն։ Նրանց գրույցներից (որոնք շատ իզուր արհամարհում են պարոն ճամբորդները) կարելի է շատ հետաքրքիր ու ուսանելի բաներ քաղել. ինչ վերաբերում է ինձ, ապա, խոստովանում եմ, ես գերադասում եմ նրանց գրույցը 6-րդ կարգի որևէ պաշտոնյայի գրույցից, որը ճանապարհորդում է պետական գործերով։

Հեշտությամբ կարելի է գլխի ընկնել, որ ես մեր-րիմ ընկերներ ունեմ վերակացուների հարգելի դասից։ Իսկապես, նրանցից մեկի մասին ունեցածս հիշողությունը թանգ է ինձ համար։ Հանգամանքները մի ժամանակ մոտեցրին մեզ, և հենց նրա մասին է, որ ես ցանկանում եմ հիմա գրուցել սիրելիր ընթերցողների հետ։

*1816 թվին, մայիս ամսին, դեպքը բերավ, որ ես անցնեմ ***յան նահանգի, մի ճանապարհով, որ այժմ չկա։ Ճես փոքր աստիճան ունելի, ճամբորդում ելի փո-*

խակառքերով և ուղեդրամ[1] եկի վճարում լերկու ձիու համար։ Դրա հետևանքով վերակացուներն ինձ վրա ուշք չելին դարձնում և հաճախ լես կռվով եկի վերցնում ալն, ինչ իմ կարծիքով, իրավունք ունելի պահանջելու։ Լինելով լերիտասարդ և տաքարլուն՝ լես զայրանում եկի վերակացուլի ստորութլան և փոքրոգութլան վրա, լերբ ալդ վերջինը ինձ համար պատրաստված ձիերը լծում եր վորևե աստիճանավոր պարոնի կառքին։ Միևնույն կերպ լերկար չելին կարողանում վարժվել և ալն բանին, լերբ խորաբարո ծառան ուշացնում եր իմ բաժինը նահանգապետի ճաշկերույթին։ Ալժմ թե ալդ և թե մլուսը լես գտնում եմ բնական։ Իսկապես, ինչ կլիներ մեզ հետ, լեթե՝ աստիճաներ աստիճաների հարգի ընդհանուրին հարմար կանոնի փոխարեն, գործածութլան մեջ մտներ մի ուրիշը, որինակ՝ խելրը խելրից հարգի կանոնը։ Ինչպիսի վեճեր կծագելին, և ծառաներն ումից կսկսելին բաժիննելրը տալ։ Բալց վերադառնում եմ իմ պատմվածքին։

Շոգ որ եր։ *** կալանից լերեք վերստի վրա սկսեց անձրև մաղել, և մի րոպե անց՝ հորդ անձրևը թրջեց ինձ վոտքից գլուխ։ Հասնելով կալարան՝ իմ առաջին հոգսը լեղավ վորքան կարելի լե շուտ փոխել շորերս, լերկրորդը՝ թել ուղել ինձ համար։ «Ե՛յ, Դունյա, — գոչեց վերակացուն, — ինքնալեռը դիր, և գնա հում սեր բեր»։ Ալդ խոսքերի վրա մի ջինապատի լեհևից դուրս լեկավ տասնըչորս տարեկան մի աղջիկ և վազեց նախասենյակ։ Նրա դեղեցկութլունն ինձ ապշեցրեց։ «Դա քո աղջիկն ե՞»,

---

[1] Փոխակառքերով — պետական ձիերով, վորոնք փոխվում եյին փոստակայաններում։ Ուղեդրամ — շրջագայութլան դրամներ, վորոնք վճարվում եյին յուրաքանչյուր ձիու և վերստի հաշվով։

հարցրի լես վերակացուից։ — «Այո, աղջիկս է,— ասաց նա գոհ ինքնասիրությամբ.— որ իմանաս ինչ խելոք է և ինչ ժիր, հանգուցյալ մայրն է որ կաց։ Այստեղ նա սկսեց արտագրել իմ ճանապարհի թուղթը, իսկ լես սկսեցի դիտել նրա համեստ, մաքուր ոթևանը զարդարող նկարները։ Նրանք պատկերացնում էին անառակ վորդու պատմությունը. առաջին նկարում թասակով և դիշերազգեստով մի պատկառելի ծերունի ճանապարհ է դնում անհանգիստ պատանուն, վորը շտապով ընդունում է նրա որհնությունը և փողերով լի քսակը։ Մյուսում վատ գծերով նկարագրված է լերիտասարդ մարդու անառակ վարքը։ Նա նստել է սեղանի մոտ, շրջապատված կեղծ բարեկամներով և անամոթ կանանցով։ Այնուհետև, անանկացած պատանին, ցնցոտիներով ու լեռանկյունի գլխարկով, խոզ է արածացնում և ճաշակում նրանց հետ միասին։ Նրա դեմքի վրա պատկերված են խորը տխրությունն ու զղջումը։ Վերջապես պատկերացված է նրա վերադարձը իր հոր մոտ։ Բարի ծերունին նույն դիշերազգեստով և թասակով դուրս է վազում նրան դիմավորելու. անառակ վորդին ծունկ է չոքել. հեռվում խոհարարը մի գեր հորթ է մորթում, և ավագ լեղբայրը հարցնում է ծառաներին, թե ինչ է այդ ուրախության պատճառը։ Ցուրաքանչյուր նկարի տակ լես կարդացի դեպքին պատշած գերմանական վոտանավորներ։ Այդ բոլորը մինչև հիմա էլ պահպանվել է իմ հիշողության մեջ, ինչպես և բալզամինով ծաղկամաններն ու խայտաբղետ վարագույրով մահճակալը, և մյուս առարկաները, վոր այն ժամանակ ինձ շրջապատում էին։ Տեսնում եմ, ինչպես հիմա, իրեն՝ տանտիրոջը, հիսուն տարեկան, թարմ, առույգ մի մարդու, և նրա լերկար կանաչ սերթուկն իր խունացած ժապավեններով, վորոնց վրա լերեք մեդալ կար կպցրած։

Հազիվ եւի լես հաշիվ տեսել իմ հին կառապանի հետ, յերբ Դունյան վերադարձավ՝ ինքնաւեռը ձեռքին։ Փոքրիկ կոկետուհին առաջին իսկ հայացքից նկատել եր, թե ինչ տպավորութիւն է թողել ինձ վրա։ Նա խոնարհեց իր խոշոր լերկնագույն աչքերը։ Ցես սկսեցի խոսել նրա հետ, նա պատասխանում եր ինձ առանց քաշվելու, վորպես աշխարհ տեսած մի աղջիկ։ Ցես նրա հորը մի բաժակ փունջ առաջարկեցի։ Դունյային մի գավաթ թեյ տվի և մենք լերեքով սկսեցինք զրուցել, կարծես վաղուցվա ծանոթներ լինելինք։

Ձիերը վաղուց պատրաստ եյին, իսկ լես դեռ ցանկութիւն չունեյի բաժանվելու վերակացուից ու նրա աղջկանից։ Վերջապես լես նրանց հրաժեշտ տվի։ Հայրըն ինձ բարի ճանապարհ մաղթեց, իսկ աղջիկը ճանապարհ դրեց մինչև կառքը։ Նախասենեակում լես կանգ առա և թուլտվութիւն խնդրեցի համբուրելու նրան։ Դունյան համաձայնեց... Շատ համբույրներ եմ տվել լես՝

Այն որվանից, յերբ զրաղվում եմ դրանով,

քայց վոչ մեկն այդքան լերկարատև, այդքան դուրեկան հիշողութիւն չի թողել իմ մեջ։

Անցավ մի քանի տարի և հանգամանքները բերին ինձ նույն ուղու վրա, նույն տեղերը։ Ցես հիշեցի ծերունի վերակացուի աղջկան և ուրախացա, լենթադրելով, վոր նորից կտեսնեմ նրան։ Բայց մոռծում եյի լես — հին վերակացուն, դուցե և, փոխվել է, Դունյան էլ լերևի արդեն մարդու լե դնացել։ Թե մեկի և թե մյուսի մասին միտքը նույնպես անցավ գլխովս, և լես մոտենում եյի*** կայանին տխուր նախազգացումներով։ Ձիերը կանգ առան փոտի տնակի առջև։ Մտնելով սենյակ, լես իսկույն ճանաչեցի անառակ վորդու պատմութիւնը պատկերող նկարները։ Սեղանն ու մահճակալը կանգնած եյին

առաջվա տեղերում։ Բայց լուսամուտներում արդեն ծաղիկներ չկային և շուրջն ամեն բան վկայում էր խարխլության և անտարբերության մասին։ Վերակացուն քընած էր քուրքի տակ։ Իմ գալն արթնացրեց նրան, նա բարձրացավ տեղից... Դա իսկապես Սիմեոն Վիրինն էր։ Բայց ինչպես էր նա ծերացել։ Մինչև նա կպատրաստվեր արտագրելու իմ ճանապարհի թուղթը, ես նայում էի նրա ճերմակ մազերին, վաղուց չածիլված երեսի խոր կնճիռներին, կորացած մեջքին — և զարմանքն ինձ պատել էր, թե երեք կամ չորս տարին ինչպե՞ս կարող էին առույգ մարդուն դարձնել մի թույլ ծերունի։ «Ճանաչո՞ւմ ես, արդյոք, դու ինձ,— հարցրի ես նրան,— մենք վաղուցվա ծանոթներ ենք»։ «Կարող է պատահել,— մըռայլ պատասխանեց նա,— այս ճանապարհը մեծ է, շատ անցվորներ են եղել ինձ մոտ»։— «Առո՞ղջ է, արդյոք, քո Դունյան»,— շարունակեցի ես։— Ծերունին նոթերը կիտեց։ «Ե՛հ, աստված գիտե», պատասխանեց նա։— «Երևում է՝ մարդու յե գնացել», ասացի ես։ Ծերունին ձևացրեց, իբր թե չլսեց իմ հարցը և շարունակեց շշնջալով կարդալ իմ ճանապարհի թուղթը։ Ես դադարեցի հարցեր տալ և պատվիրեցի թեյ պատրաստել։ Հետաքրքրությունն սկսել էր ինձ անհանգստացնել, և ես հույս ունեյի, վոր փունջը կբացի վաղեմի ծանոթիս լեզուն։

Ես չսխալվեցի, ծերունին չհրաժարվեց իմ առաջարկած բաժակից։ Ես նկատեցի, վոր ռոմը ցրեց նրա մռայլությունը։ Երկրորդ բաժակի հետ նրա լեզուն բացվեց՝ հիշեց, կամ ձևացրեց իբր թե հիշեց ինձ և ես նըրանից իմացա յեղելությունը, վորն այն ժամանակ ինձ խիստ հետաքրքրեց ու հուզեց։

«Դուք, ուրեմն, ճանաչո՞ւմ եյիք իմ Դունյային,— սկըսեց նա։— Եվ ո՞վ չեր ճանաչում նրան։ Ախ, Դունյա,

Դունյա, ինչ աղջիկ եր իմ աղջիկը։ Ով վոր անց եր կե-
նում եստեղով, բոլորն էլ գովում էլին, մեկը չկար, վոր
նրա վատն ասեր։ Տիկիննները նվերներ էլին տալիս նը-
րան — վորը մի թաշկինակ, վորն էլ ականջողեր։ Պարոն
ճամբորդները դիտմամբ կանգ էլին առնում, իբր թե
ճաշելու, կամ ընթրելու, բայց իսկապես հենց նրա հա-
մար, վոր մի քիչ լերկար նայեն նրան։ Պատահում եր, վոր
մի պարոն, վորքան էլ բարկացած լիներ, նրա մոտ խա-
ղաղվում եր ու վողորմածաբար խոսում հետս։ Կհավատաք,
արդյոք, պարոն, սուրհանդակները, ֆելդ-լեգերները կես
ժամի չափ խոսում էլին նրա հետ։ Տունը նրանով եր
շեն. հավաքել եր պետք, մի բան պատրաստել եր պետք,
ամեն ինչի հասնում եր։ Իսկ կես էլ, հիմար, ծերուկս նայե-
լով չէլի կշտանում, ուրախությունից չգիտեի ինչ անեմ։
Ինչքան էլի սիրում լես իմ Դունյալին, ինչքան էլի փայփա-
յում իմ զավակին, ինչպես եր ապրում նա ինձ մոտ։ Բայց
չե, փորձանքից պրծում չկա, ինչ լինելու լե, պիտի լինի»։
Այստեղ նա սկսեց մանրամասն պատմել ինձ իր ցավը։

Ցերեկ տարի դրանից առաջ, ձմեռվա մի լերեկո, լերբ
վերակացուն մի նոր գիրք եր գծում, և նրա աղջիկը միջ-
նապատի լեռևում իր համար շոր եր կարում, մի լեռա-
ձի լեկավ, և ճամբորդը չերքեզի գլխարկով, զինվորական
վերարկուով, շալով փաթաթված, սենյակ մտավ, պահան-
ջելով ձիեր։ Բոլոր ձիերը լծել տարել էլին։ Այդ լուրն
ստանալով ճամբորդն ուզեց մի ձայնը և մտրակը բաձ-
րացնել։ Բայց Դունյան, սովոր լինելով նման տեսա-
րաններին, դուրս վազեց միջնապատի լեռևից ու սիրալիր
դիմեց անցորդին հարց տալով՝ չի՞ բարեհաճի արդյոք նա
մի բան ուտել։ Դունյալի լերևալն իր սովորական ներ-
գործությունն ունեցավ։ Անցորդի բարկությունն անցավ։
Նա համաձայնեց սպասել ձիերին և ընթրիք պատվիրեց

իր համար։ Հանելով թաց, բրդոտ գդակը, արձակելով շալն ու գցելով վրայից վերարկուն, անցորդը ներկայացավ իբրև լերիտասարդ, բարեկազմ, սև բեխիկներով մի հուսար։ Նա տեղավորվեց վերակացուչի մոտ, սկսեց ուրախ զրուցել նրա և աղջկա հետ։ Ընթրիքը բերին։ Մինչ այդ ձիերը լեկան և, վերակացուն հրամայեց, որ իսկույն, առանց կերակրելու, լծեն անցորդի կառքին։ Բայց, ներս մտնելով, նա տեսավ, որ լերիտասարդը գրեթե ուշքը կորցրած պառկել է նստարանին. նա իրեն վատ էր զգում, գլուխը ցավում էր, հնաը չկար գնալու... ինչ աներ։ Վերակացուն զիջեց նրան իր մահճակալը, և այսպես վորոշեցին, որ լեթե հիվանդը չլավանար, մյուս որն առավոտյան մարդ պիտի ուղարկելին Ս*** քաղաքը բժշկի լեռեվից։

Մյուս որը հուսարն իրեն ավելի վատ էր զգում։ Նրա ծառայողը ձիով գնաց քաղաք՝ բժշկին բերելու։ Դունյան կապեց հուսարի գլուխը քացախի մեջ թրջած թաշկինակով ու կարը ձեռին նստեց նրա մահճակալի մոտ։ Հիվանդը վերակացուչի ներկայությամբ տնքտնքում էր ու գրեթե վոչ մի խոսք չէր ասում, սակայն և լերկու գավաթ սուրճ խմեց, ու տնքտնքալով իրեն ճաշ պատվիրեց։ Դունյան նրանից չէր հեռանում։ Նա անընդհատ խմել էր ուզում և Դունյան գավաթով տալիս էր նրան իր պատրաստած ոշարակից։ Հիվանդը թրջում էր շրթունքները, և ամեն անգամ, վերադարձնելով գավաթը, ի նշան շնորհակալության իր թուլլ ձեռքով սղմում էր Դունյաշկալի ձեռքը։ Ճաշին լեկավ բժիշկը։ Նա շոշափեց հիվանդի զարկերակը, խոսեց նրա հետ գերմաներեն լեզվով ու ռուսերեն լեզվով հայտնեց, վոր նրան միայն հանգստություն և հարկավոր և վոր մի լերկու որից հետո նա կարող է արդեն ճանապարհ ընկնել։ Հուսարը նրան քսանը-

հինգ ռուբլի տվեց այցելութեան համար, հրավիրեց նրան ճաշի։ Բժիշկը համաձայնեց։ Ցերկուսով էլ ուտում էին մեծ ախորժակով, խմեցին մի շիշ գինի և բաժանվեցին իրարից շատ դոհ։

Անցավ էլի մի որ, և հուսարը բոլորովին աշխուժացավ։ Նա չափազանց ուրախ էր, անդադար կատակ էր անում մեկ Դունյաշի, մեկ վերակացուհի հետ։ Ցերգեր էր շշվացնում, խոսակցում էր անցորդների հետ, գրում էր նրանց ուղեգրերը փոստալին գրքում և բարի վերակացուն այնպես սիրեց նրան, վոր յերրորդ առավոտյան արդեն նրա համար դժվար էր բաժանվել իր սիրելիր կենվորից։ Որը կիրակի յեր։ Դունյան պատրաստվում էր յեկեղեցի գնալ։ Հուսարի կառքը պատրաստ էր։ Նա ճնաս բարով ասաց վերակացուհին, առատ վարձատրելով նրան այդտեղ կենալու։ և հյուրասիրութեան համար. ճնաս բարև ասաց նաև Դունյաշին ու առաջարկեց հասցնել նրան յեկեղեցի, վորը գտնվում էր գյուղի ծայրին։ Դունյան կանգնած էր տարակուսանքի մեջ... «Ել ինչ ես վախենում,—ասաց նրան հայրը,—դե հո նորին բարձր բարեծննդութիւնը գալ չի, չի ուտի քեզ, գնա մինչև յեկեղեցին»։ Դունյան կառք նստեց՝ հուսարի կողքին, ծառան բռնեց իր տեղը, կառապանը սուլեց ու ձիերը վազեցին։

Խեղճ վերակացուն չէր հասկանում, թե ինչպես կարող էր նա ինքը թույլ տալ Դունյաշին գնալ հուսարի հետ, ինչպես էր նա կուրացել և ուր էր նրա խելքն այն ժամանակ։ Զանցավ մի կես ժամ, յերբ նրա սիրտն սկսեց նվալ, նվալ ու անհանգստութիւնը պատեց նրան այն աստիճանի, վոր նա էլ չկարողացավ սպասել ու ինքը գնաց յեկեղեցի։ Մոտենալով յեկեղեցուն, նա տեսավ, վոր ժողովուրդն արդեն տուն է գնում, իսկ Դունյան վոչ յե-

կեղեցու բակումն էր, վոչ էլ դռանը։ Նա շտապով մտավ եկեղեցի՝ քահանան իջնում էր սեղանից։ Տիրացուն մոմերն էր հանգցնում, երկու պառավ դեռ աղոթում էին անկյունում։ Բայց Դունյան եկեղեցում չէր։ Խեղճ ծերունին հազիվ սիրտ արեց հարցնել տիրացուին, լեղել և արդյոք իր աղջիկը ժամերգությանը։ Տիրացուն պատասխանեց, վոր չի լեղել։ Վերակացուն գնաց տուն վոչ մեռած և վոչ կենդանի։ Մի հույս էր մնացել նրանում՝ Դունյան չահելությունն անելով գուցե ուղեկցել և գնալ մինչև հետևյալ կայանը, վորտեղ ապրում էր նրա կընքամայրը։ Տանջալից հուզմունքով սպասում էր նա լուսաձիու վերադառնալուն, վորով գնացել էր աղջիկը։ Կառապանը չէր վերադառնում։ Վերջապես լերկոյան դեմ նա լեկավ մենակ և հարբած, բերելով մի սպանիչ լուր՝ «Դունյան մյուս կայանից շարունակեց ճանապարհը հուսարի հետ»։

Ծերունին չկարողացավ տանել իր դժբախտությունը։ Նա խկուն և լեթ պառկեց նույն անկողնում, վորտեղ նախորդ որը պառկել էր լերիտասարդ խաբեբան։ Հիմա վերակացուն ծանր ու թեթև անելով բոլոր հանգամանքները, գլխի լեր ընկնում, վոր հիվանդությունը շինծու լեր։ Խեղճն ընկավ սաստիկ տենդի մեջ։ Նրան տարան Ս***, իսկ նրա տեղը ժամանակավորապես նշանակեցին մի ուրիշին։ Նույն բժիշկը, վոր լեկել էր հուսարի մոտ, բժշկում էր և նրան։ Նա հավատացրեց վերակացուին, վոր լերիտասարդը բոլորովին առողջ էր, և վոր դեռ այն ժամանակ գլխի լեր ընկնում նրա չարամիտ մտադրության մասին, բայց բան չասաց, վախենալով նրա մտրակից։ Ճիշտ էր ասում գերմանացին, թե ուզում էր միայն հպարտանալ իր հեռատեսությամբ, բայց դրանով նա բոլորովին չափսիեց խեղճ հիվանդին։ Հազիվ

եր վերակացուն լավացել հիվանդությունից, լերը Ս***-ի փոստապետից արձակուրդ վերցրեց լերկու ամսով և, առանց մեկին մի խոսք ասելու իր մտադրության մասին, վոտքով ճանապարհ ընկավ իր աղջկա հետևից։ Ուղեգրից նա դիտեր, վոր ռոտմիստր Մինսկին գնում եր Սոմոլինսկից Պետերբուրգ։ Նրան տանող կառապանը պատմում եր, վոր վողջ ճանապարհին Դունյան լաց եր լինում, չնայած թվում եր, թե գնում եր իր ցանկությամբ։ «Գուցե, — մտածում եր վերակացուն, — տուն կբերեմ լես իմ մոլորված դառնուկին»։ Այդ մտքով լեկավ նա Պետերբուրգ, կանգ առավ Իզմայլիլովյան գնդում, մի պաշտոնաթող լենթասպալի[1], իր հին ծառայակցի մոտ, և սկսեց իր վորոնումները։ Շուտով նա իմացավ, վոր ռոտմիստր Մինսկին Պետերբուրգումն ե և ապրում ե Դեմուտյան պանդոկում[2]։ Վերակացուն վորոշեց ներկայանալ նրան։

Առավոտյան վաղ լեկավ նա նրա նախասենյակը և խնդրեց զեկուցել նորին բարձր բարեծննդությանը, վոր մի հին զինվոր ուզում ե տեսնվել նրա հետ։ Զինվորականն սպասավորը, մաքրելով կաղապարի վրա հագցրած կոշիկը, հայտարարեց, վոր պարոնը ննջում ե և ժամը տասնմեկից շուտ վոչ վոքի չի ընդունում։ Վերակացուն գնաց և վերադարձավ վորոշված ժամին։ Մինսկին ինքը դուրս լեկավ նրա առաջ խալաթով, գլխին կարմիր սկուֆյա[3] դրած։ «Ի՛նչ ե, ախպերս, քեզ հարկավոր», հարցրեց նա։ Մերունու սիրտը տակն ու վրա լեղավ, աչքերին

---

[1] Ցենթասպա — ունտեր-ոֆիցեր — ավագ ստորին աստիճան (զինվորական)։ (Մ. Թ.)

[2] Դեմուտյան պանդոկ — այն ժամանակի հայտնի հյուրանոցը Պետերբուրգում։ Դեմուտյան պանդոկում միշտ կանգ եր առնում նաև ինքը Պուշկինը։

[3] Սկուֆյա, սկուֆեյկա — կլոր փոքրիկ տնային գդակիկ։

արտասուքները լերևացին, և նա դողդողուն ձայնով արտասանեց միայն՝ «Ձերդ բարձր բարեծննդություն... ենպես մի աստվածային վողորմություն արեք...» Մինսկին նայեց նրան արագ, բռնկեց, բռնեց նրա ձեռքից, տարավ առանձնասենյակ ու փակեց դուռն իր յետևից։ «Ձերդ բարեծննդություն,— շարունակեց ծերունին,— բեռից ընկածը,— կորած ե, յետ տվեք ինձ դոնե իմ խեղճ Դունյայկին։ Ձե վոր, դուք զվարճացել եք նրանով ձեր ուզածի պես, դե գոնե կորստի մի մատնեք նրան դուր տեղը»։— «Ինչ յեղել ե, յեղել ե, — ասաց յերիտասարդը խիստ շփոթության մեջ,— մեղավոր եմ քո առաջ և ուրախ եմ քեզանից ներողություն խնդրելու, բայց մի կարծիր, վոր յես կարող եմ Դունյայկին թողնել. նա բախտավոր կլինի, ազնիվ խոսք եմ տալիս քեզ։ Ինչից ե պետք նա։ Նա ինձ սիրում ե։ Նա արդեն ձեռ ե քաշել իր առաջվա դրությունից։ Վոչ դու, վոչ ել նա—ել չեք մոռանա այն, ինչ վոր պատահել ե»։ Հետո, ինչ վոր բան կոխելով նրա թևքի մեջ, նա բացեց դուռը, և վերակացուն, ինքն ել չիմանալով թե ինչպես, իրեն տեսավ փողոցում։

Ցերկար կանգնած եր նա անշարժ, վերջապես տեսավ իր թևքի ծալվածքի մեջ մի փաթեթ թուղթ։ Նա հանեց այդ թղթերն ու բացեց մի քանի հինգ և տասը ռուբլիանոց ճմռած թղթադրամներ։ Նորից արտասուքները յերևացին նրա աչքերին, զայրույթի արտասուքներ։ Նա թըղթերը ձեռքի մեջ գնդեց, գցեց գետին, տրորեց կրունկով ու գնաց... Անցնելով մի քանի քայլ, նա կանգ առավ, միտք արեց... և վերադարձավ... բայց թղթադրամներն արդեն չկային։ Լավ հագնված մի յերիտասարդ, տեսնելով նրան, մոտ վազեց մի կառքի, նստեց շտապով ու բղավեց՝ «Ռշի»... Վերակացուն չհետապնդեց նրան։ Նա վորոշեց գնալ տուն, դեպի իր կայանը, բայց սկզբում

ուզում եր գոնե մի անգամ ել տեսնել իր խեղճ Դունյայինն։ Դրա համար մի յերկու որից հետո վերադարձավ նա Մինսկու մոտ։ Բայց զինվորական սպասավորը ասաց նրան խըստությամբ, որ պարոնը վոչ վոքի չի ընդունում, կուրծքը դեմ անելով դուրս հանեց նրան նախասենյակից ու դուռը շրխկացրեց նրա քթի տակ։

Այդ նույն որը յերեկոյան գնում եր նա Լիտեյնի փողոցով, բոլոր վշտացյալների լեկեղեցում մաղթանքն անելուց հետո։ Հանկարծ նրա առջևով սլացավ մի շքեղ լեռանդակ և վերակացուն ճանաչեց Մինսկուն։ Ցեռանդակը կանգնեց մի լեռահարկ տան առաջ, ուղիղ մուտքի դեմ և հուսարը վազեց դեպի պատշգամբը։ Մի բախտավոր միտք ծագեց վերակացուի գլխում։ Նա լետ դարձավ ու հավասարվելով կառապանին՝ «Ես ում ձին ե, ախպերս,— հարցրեց,—Մինսկուն չի՞, արդյոք»։—«Ճիշտ եդպես,— պատասխանեց կառապանը,—իսկ քո ինչի՞ն ե պետք»։—«Ա՛յ, թե ինչ՝ քո պարոնը պատվիրել ե ինձ մի գրություն տանել իր Դունյայինն, իսկ լես ել մոռացել եմ, վորտեղ ե ապրում նրա Դունյան»։—«Ա՛յ, հենց եստեղ, լերկրորդ հարկում։ Ուշացել ես դու, ախպեր ջան, քո դրությունով։ Հիմա արդեն ինքը նրա մոտն ե»։ «Վնաս չկա,—առարկեց վերակացուն սրտի անբացատրելի հուզմունքով,—շնորհակալ եմ, վոր գլխի գցեցիր ինձ, իսկ լես ինչ հարկն ե կանեմ»։ Ցեվ գնաց նա սանդուխքներով վեր բարձրացավ։

Դուռը փակ եր։ Նա զանգահարեց, անցավ մի քանի վայրկյան՝ նրա համար ծանր սպասողական դրություն մեջ։ Բանալին զրնգաց, դուռը բաց արին։ «Այստեղ ե կենում Ավդոտյա Սեմյոնովնան»,—հարցրեց նա։ «Եստեղ,—պատասխանեց յերիտասարդ աղախինը,—ինչի՞ ե հարկավոր նա»։ Վերակացուն առանց պատասխանելու մտավ դահ-

վիճը։ «Ձի՛ կարելի, չի՛ կարելի,— գոչեց նրա յետևից աղախինը.— Ավդոտյա Սեմյոնովնայի մոտ հյուր կա»։ Բայց վերակացուն առանց ուշք դարձնելու գնում եր առաջ։ Ցերկու առաջին սենյակները մութ եյին, լերդորդում լույս կար։ Նա մոտեցավ բաց արած դռանն ու կանգ առավ։ Հիանալի կահավորված սենյակում նստած եր Մինսկին մոքի մեջ ընկած։ Դունյան մոդալի ամբողջ շռայլությամբ հագնված՝ նստած եր նրա բազկաթոռի արմունկին, վորպես մի ձիավորուհի իր անգլիական թամբի վրա։ Նա քնքշաբար նայում եր Մինսկուն նրա սև խոպոպները փաթաթելով իր պսպղուն մատներին։ Խեղճ վերակացու։ Ցերբեք իր աղջիկը նրան այդքան գեղեցիկ չեր թվացել։ Նա ակամա տարվեց նրա տեսքով։ «Ո՞վ կա ենտեղ», հարցրեց աղջիկը, առանց գլուխը բարձրացնելու։ Նա լուռ եր։ Պատասխան չստանալով, Դունյան բարձրացրեց գլուխը... և ճչալով ընկավ գորգի վրա։ Վախեցած Մինսկին նետվեց նրան բարձրացնելու և, հանկարծ, տեսնելով դռների մեջ ծեր վերակացուին, թողեց Դունյային և մոտեցավ նրան, բարկությունից դողալով։ «Ի՞նչ ես ուզում,— ասաց նա վերակացուին, առաջները սեղմած,— ինչ ես ամեն տեղ հետևում ինձ ավազակի պես։ Չլինի, ուզում ես մորթել ինձ։ Կորի՛ր այստեղից» — և ուժեղ ձեռքով ծերունու ոճիքից բռնած, հրեց նրան դեպի սանդուխքը։

Ծերունին լեկավ իր բնակարանը։ Նրա բարեկամը խորհուրդ է տալիս գանգատվելու։ Բայց վերակացուն մտածեց, ձեռը թափ տվեց ու վորոշեց ձեռ քաշել։ Ցերկու որից հետո Պետերբուրգից ուղևորվեց նա յետ դեպի իր կալանը և նորից անցավ իր ծառայությանը։ Ահա արդեն լերդորդ տարին է,— վերջացրեց նա,— վոր ապրում եմ յես առանց Դունյայի, և վոր նրանից վոչ մի լուր չունեմ։ Կենդանի լե արդյոք, թե վոչ, ասված գիտե։

Ամեն բան պատահում է։ Նա վոչ առաջինն է, և վոչ էլ վերջինը, վորին հանել է խելքից անցորդ ստահակի մեկը, պահել է մի քիչ ու դեն գցել։ Եղպիսիները շատ կան Պետերբուրգում,— չահել, խելառ աղջկերք — եսոր խաս ու դումաշ են հագնում, վաղն էլ, տեսար, փողոցն են ավլում փողոցալիննների հետ։ Մեկ մեկ վոր միաք չեմ անում, թե Դունյան էլ, կարող է պատահել, հենց եդտեղ քաշ է գալիս ու ձեռից գնում, կամքիս հակառակ լես նրան գերեզման եմ ցանկանում...»

Այդպես եր իմ բարեկամի, ծեր վերակացուլի պատմածը, վոր շարունակ ընդհատվում եր արտասուքներով, վոր հետաքրքիր կերպով սրբում եր նա իր փեշով, ինչպես փութաջան Տերենտիչը Դմիտրևի [1] չքնաղ բալլադում։ Այդ արտասուքները մասամբ առաջանում եյին փունջից, վորից նա մի հինգ բաժակ կոնծեց իր պատմության ընթացքում։ Բայց ինչ էլ վոր լիններ, այդ արտասուքները շատ հուզեցին ինձ։ Նրանից բաժանվելով, լերկար չեյի կարողանում մոռանալ ծերունի վերակացուլին, լերկար մտածում եյի լես խեղճ Դունյալի մասին...

Վաղուց չեր, վոր, Նորից*** ավանով անցնելիս հիշեցի իմ բարեկամին։ Ցես իմացա, վոր այն կայանը, վորի պետն եր նա, արդեն վոչնչացված է։ Իմ հարցին՝ «կենդանի լե արդյոք ծեր վերակացուն» վոչ վոք չկարողացավ բավարար պատասխան տալ։ Ցես վորոշեցի այցելել ծանոթ տեղերը, վերցրի ազատ ձիեր ու ճամբա ընկա դեպի Ն. գյուղը։

Դա պատահեց աշնանը։ Գորշ ամպերը ծածկում եյին

---

[1] «Պաշտոնաթող վախմիստը» Ի. Ի. Դմիտրև, (1760–1837) բանաստեղծ, ռուսական սենտիմենտալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։

յերկինքը։ Ծուրտ քամին փչում եր հնձված արտերից, տանելով իր հետ հանդիպած ծառերից պոկված կարմիր ու դեղին տերևները։ Ցես գյուղ հասա արևը մայր մտնելու ժամանակ և կանգ առա փոստի տնակի առաջ։

Նախասենյակ (վորտեղ մի ժամանակ համբուրել եր ինձ խեղճ Դունյան) դուրս յեկավ մի հաստ կին, և իմ հարցերին պատասխանեց, վոր ծեր վերակացուն մի տարի յե ինչ մեռել ե, վոր նրա տանը բնակվում ե գարեջրի մի վարպետ, և վոր ինքն այդ մարդու կինն ե։ Ցես ափսոսացի իմ զուր ճանապարհորդությանն և զուր ծախսած յոթ ռուբլու համար։

«Իսկ ինչից մեռավ նա», հարցրի յես գարեջրի վարպետի կնոջը։—«Հարբեցողությունից, յեղբայր ջան», պատասխանեց նա։—«Իսկ վորտեղ են թաղել նրան»։ «Գյուղից դուրս, իր հանգուցյալ կնոջ մոտ»։—«Ձեք կարող ինձ մի ճանապարհը ցույց տալ դեպի նրա գերեզմանը»։—«Ինչի չե վոր։ Ելի, Վանկա, հերիք կատվի հետ քաշ գաս։ Հապա մի պարոնին տար գերեզմանատուն ու ցույց տուր նրան վերակացուչի գերեզմանը»։

Այս խոսքերի վրա, զզգված շորերով, շիկահեր ու մի աչքը կուլը տղա դուրս վազեց անմիջապես, տարավ ինձ դեպի գյուղի ծայրը։

— Ճանաչում եյիր դու հանգուցյալին,— հարցրի նրան ճանապարհին։

— Վոնց չեյի ճանաչում։ Նա յե սովորցրել ինձ շշվիներ շինել։ Լինում եր (ողորմի նրա հոգուն), վոր գինետնից գալիս մենք յեռևից կանչում եյինք՝ «Պապի, պապի, պնդուկ տաս»— և նա մեզ պնդուկ եր բաժանում։ Ինքն եր խաղում մեզ հետ։

— Իսկ անցորդներն իսկի հիշում են նրան։

— Դե, հիմի անցորդները քիչ կան։ Մեկ մեկ գուցե

ատենակալը լերևա եստեղերքը. դե նա էլ ինչ ունի մեռելների հետ։ Ալ, ամառն եստեղից անցնում եր մի տիկին. նա հարցրեց ծեր վերակացուչի մասին ու գերեզմանն էլ գնաց տեսնելու։

— Ի՞նչ տիկին, — հարցրի չես հետաքրքրությամբ։

— Մի շատ սիրուն տիկին, — պատասխանեց տղան, — լեկել եր նա կառետով, կառետին էլ վեց հատ ձի լեր լծված, լերեք հատ փոքրիկ պարոնիկներ կալին իրենց ծծմոր հետ, մեկ էլ մի սև շնիկ կար։ Ցեվ վոր չասացին նրան, թե ծեր վերակացուն մեռել է, ճնպես լաց լեղավ ու լերեխաներին ասաց. «խելոք նստեք, իսկ չես կգնամ գերեզմանատուն»։ Իսկ չես մեջ ընկա, վոր ճանապարհը յուլյ տամ նրան։ Բայց տիկինն ասաց՝ «Ցես ինքս ճանապարհը գիտեմ»։ Ցեվ ինձ արծաթ հինգ կոպեկանոց տվեց, — ճնպես մի բարի տիկին եր։

Մենք լեկանք գերեզմանատուն, մի մերկ տեղ, առանց ցանկապատի, փայտյա խաչերով ծածկված, վորտեղ վոչ մի ծառի ստվեր անդամ չեր լերևում։ Կյանքիս մեջ չես մի այսպիսի տխուր գերեզմանատուն չելի տեսել։

— Հրես ծեր վերակացուչի գերեզմանը, — ասաց ինձ տղան, ցատկելով ավազի մի կույտի վրա, վորի մեջ ցրցված եր մի սև խաչ պղնձյա սրբապատկերով։

— Ցեվ տիկինը լեկավ եստեղ — հարցրի չես։

— Ցեկավ, — պատասխանեց Վանկան, — չես նայում էլի նրան հեռվից։ Նա պառկեց եստեղ ու լերկար պառկած եր։ Հետո էլ տիկինը գնաց գյուղ ու կանչեց տերտերին, վոր տվեց նրան ու գնաց, ինձ էլ մի արծաթ հինգ կոպեկանոց տվեց — ճնպես մի լավ տիկին եր։

Ցես էլ տվի տղային մի հինգ կոպեկանոց և արդեն չելի ափսոսում վոչ ճանապարհորդուհյանս, վոչ էլ իմ ծախսած լոթ ռուբլին։

ԴԱԳԱՂԱԳՈՐԾԸ

Չե՞ք տեսնում, արդյոք, ամեն որ դագաղներ.
Ջառամող տիեզերքի ճերմակող մազեր։

ԴԵՐԺԱՎԻՆ [1]

Դագաղագործ Ադրիան Պրոխորովի վերջին իրեղենները բարձվեցին հուղարկավորման կառքին և վտիտ ձիերի զույգը չորրորդ անգամ քաշ չեկավ Բասմաննայա փողոցից դեպի Նիկիտսկայա [2] փողոցը, ուր տեղափոխվում եր դագաղագործն իր ամբողջ տնով։ Կոպեկով խանութը, նա մի հայտարարություն փակցրեց դարբասին, թե՝ տունը վաճառվում է ու վարձով տրվում, և վոտքով ուղևորվեց դեպի իր նոր բնակարանը։ Մոտենալով դեղին տնակին, վորը վաղուց արդեն գայթակղեցնում եր նրա յերևակայությունը և վերջապես գնված եր բավական խոշոր մի գումարով, ծեր դագաղագործն ըզգում եր զարմանքով, վոր իր սիրտն ուրախ չի։ Անցնելով անծանոթ շեմքը և իր նոր բնակարանում հանդիպելով իրարանցման, նա հոգոց հանեց այն խարխուլ հյուղի համար, վորտեղ տասնութ տարվա ընթացքում

---

[1] Գ. Ռ. Դերժավին (*1743 — 1816*)—հռչակավոր ռուս բանաստեղծ, XVIII դարի։ Բնաբանը Պուշկինը վերցրել է նրա «Ջրվեժ» ներբողից։

[2] Բասմաննայա, Նիկիտսկայա — փողոցներ հին Մոսկվայում, իրարից շատ հեռու ընկած։

Պուշկինն և Դանտեսի մենամարտը (Լուսանկար Նատմովի յուղանկարի նկարից)։

ամեն բան խիստ կարգի լեր գցված։ Սկսեց կռվել իր լերկու աղջկերքի և աղախնի հետ նրանց դանդաղկոտության համար և ինքն սկսեց ոգնել նրանց։ Շուտով կարգը հաստատվեց։ Տապանակը սրբապատկերներով, պահարանն ամանեղեններով, սեղանը, բազմոցն ու մահճակալը բռնեցին իրենց համար վորոշված անկյունները լետեվի սենյակում։ Ննհանոցում և ընդունարանում տեղավորվեցին տանտիրոջ շինվածքները՝ դագաղներ — ամեն գույնի և ամեն չափսի, նաև պահարանները — սգո գըլխարկներով, մանտիաներով ու չահերով։ Դարբասի վրա հաստատվեց մի ցուցանակ, վորի վրա պատկերված եր մի մարմնեղ Ամուր շուռ տված չահը ձեռքին [1] և գրված եր՝ «այստեղ վաճառվում ու չերեսպատվում են դագաղները — հասարակ և ներկված, նաև տրվում են վարձով և նորոգվում են հները»։

Լուսավորված ընթերցողը գիտե, վոր Շեկսպիրն ու Վալտեր Սկոտը [2] լերկսով էլ պատկերացրել են իրենց գերեզմանափորներին իբրև ուրախ և կատակաբան մարդկանց, վորպեսզի այս հակադրությամբ ավելի ուժգին խոցեն մեր լերևակայությունը։ Հարգելով ճշմարտությունը, մենք չենք կարող հետևել նրանց որինակին ու ստիպված ենք խոստովանել, վոր մեր դագաղագործի բնավորությունը միանգամայն համապատասխանում եր նրա մռայլ արհեստին։ Ադրիան Պրոխորովիչ ըստ սովորականին մռայլ եր ու մտազբաղ։ Նա խախտում եր լռությունը գուցե միայն նրա համար, վոր իր աղջիկներին կըշ-

---

[1] Ամուր — սիրո աստված։ Շուռ տված չահը Ամուրի ձեռքում — մահվան նշանաբանն է։

[2] Շեկսպիր (1564—1616) — հռչակավոր անգլիական դրամատուրգ։ Վալտեր Սկոտ (1771—1832) — հռչակավոր անգլիական գրող, պատմական ռոմանի նախահայրը։

տամբի, լերը տեսնում եր նրանց անգործ, անցորդնեբին նայելիս, կամ վոր իր ապրանքի համար ուղցրած դին պահանջի այն մարդկանցից, վորոնք դժբախտութլուն են ունեցել (իսկ լերբեմն և բավականութլուն) այդ ապրանքի կարիքն ունենալու։ Այդպես ուրեմն, Աղբիանը լուսամուտի տակ նստած և խմելով թեյի յոթերորդ բաժակը, ըստ իր սովորութլան ընկղմվել եր տրխուր մտքերի մեջ։ Նա մտածում եր այն ուժգին անձրևի մասին, վորը մի շաբաթ դրանից առաջ հանդիպել եր ուղեփակի մոտ մի պաշտոնաթող բրիգադիրի [1] հուղարկավորութլանը։ Շատ մանտիաներ [2] դրանից նեղ դարձան, շատ դլխարկներ ծռմռվեցին։ Նա նախատեսում եր անխուսափելի ծախքերը, վորովհետև նրա դագաղալին արդուզարդի վաղուցվա պաշարն ընկնում եր խղճուկ վիճակի մեջ։ Նա հույս ուներ ձյասը հանել պառավ վաճառականուհի Տրյուխինայից, վորն արդեն մոտ մի տարի լեր, վոր մահիճերձ եր։ Բայց Տրյուխինան մեռնում եր Ռազդուլյայում [3], և Պրոխորովը վախենում եր, վոր նրա ժառանդները, չնայած իրենց խոստմանը, կծուլանան ուղարկել նրա յետևից այդքան հեռու և համաձայնութլան կգան մուրիկ կապալառուի հետ։

Այս մտածմունքներն ընդհատվեցին հանկարծակի յերեք ֆրան-մասոնական [4] հարվածներով դռանը։ «Ո՞վ

---

[1] Բրիգադիր — ռազմական աստիճան հին ցարական բանակում — դնդապետի և գեներալի միջև ընկած։

[2] Մանտիա — հուղարկավորման ծառայողի թիկնոց։

[3] Ռազդուլյայ — Մոսկվայի մի վայրը, բասմաննայա փողոցին մոտիկ, վորտեղ առաջ ապրում եր Պրոխորովը։

[4] Ֆրան-մասոնական հարվածներ — հատուկ պայմանական նշաններ, վորոնցով ճանաչում եյին իրար գաղտնի մասոնական ընկերութլյան անդամները։

եւ, հարցրեց դազաղագործը։ Դուռը բացվեց ու սենյակ մտավ մի մարդ, վորի մեջ առաջին իսկ հայացքից կարելի լեր ճանաչել գերմանացի արհեստավորի, և ուրախ դեմքով մոտեցավ դազաղագործին։ «Ներեցեք, սիրելի հարևան,— ասաց նա ռուսական այն բարբառով, վորը մենք մինչև հիմա էլ առանց ծիծաղի լսել չենք կարողանում,— ներեցեք, վոր ձեզ խանգարեցի... ես ուզում ելի շուտափույթ կերպով ծանոթանալ ձեզ հետ։ Ես կոշկակար եմ, իմ անունը Գոտլիբ Շուլց է, և ապրում եմ ձեր փողոցի մյուս կողմում, այն տնակում, վորը գտնվում է ձեր լուսամուտների դիմաց։— Վաղը տոնում եմ իմ արծաթյա[1] հարսանիքը, և ես խնդրում եմ ձեզ ու ձեր աղջիկներին՝ ընկերաբար գալ մեզ մոտ ճաշի»։ — Հրավերը բարեհաճ կերպով ընդունվեց։ Դագաղագործը խնդրեց կոշկակարին նստել ու մի բաժակ թեյ խմել և, շնորհիվ Գոտլիբ Շուլցի սրտաբաց բնավորության, շուտով նրանք սկսեցին բարեկամաբար զրուցել իրար հետ։ «Ինչպես է ձերդ վողորմածության առևտուրը,— հարցրեց Ադրիանը»։— «Եհ-եհ-ե՛, — պատասխանեց Շուլցը, — եսպես էլ, ենպես էլ։ Գանգատվել չեմ կարող։ Ընդհակառակը, ի հարկե, իմ ապրանքն են չի, ինչ վոր քոնը՝ կենդանի մարդն առանց կոշիկի էլ յոլա կգնա, իսկ մեռելն առանց դագաղի չի ապրում»։ — «Իսկական ճշմարտություն է, — նկատեց Ադրիանը, — սակայն, եթե կենդանի մարդը միջոցներ չունի կոշիկի համար, ապա, չնեղանաս, նա բոբիկ էլ է մեն գալիս, իսկ աղքատ մեռելը ձրի էլ է ձեռք բերում դագաղն իր համար»։ Այդ ձևով նրանց խոսակցությունն էլի մի վորոշ ժամանակ շարունակվեց։ Վերջապես կոշկակարը վեր կացավ ու հրաժեշտ տվեց դագաղագործին, կրկնելով իր հրավերը։

[1] Ամուսնական կյանքի քսանհինգամյակը։

Մյուս որը, ուղիղ ժամը տասնվերկուսին, դագաղադործն ու իր աղջիկները դուրս լեկան նոր գնված տան բակի դռնակով և ուղղվեցին դեպի հարևանի տունը։ Չեմ նկարագրի վոչ Ադրիան Պրոխորովի ռուսական բաճկոնը, վոչ Ակուլինալի ու Դարյալի լեվրոպական հագուստը՝ այս մի դեպքում չհետևելով այն սովորությանը, վոր ընդունված է արդի ռոմանիստների կողմից։ Ավելորդ չեմ դոնում, սակայն և, նկատել, վոր լերկու որիորդները դրին դեղին գլխարկներ ու հագան կարմիր կոշիկներ, վոր ընդունված եր նրանց մոտ միայն հանդիսավոր դեպքերում։

Կոշկակարի նեղլիկ բնակարանը լիքն եր հյուրերով՝ մեծ մասամբ գերմանացի արհեստավորներով՝ իրենց կանանց ու աշկերտների հետ։ Ռուս պաշտոնյաներից միայն մի վոստիկանական պահակ կար, չուխոն Ցուրկոն, վորը, չնայած իր համեստ կոչմանը, կարողացել եր ձեռք բերել տան տիրոջ բարեհաճ վերաբերմունքը։ Բանհինդ տարի լեր ինչ ծառայում եր նա այդ պաշտոնում ամենայն հավատարմությամբ, վորպես Պոգորիլսկու[1] փոստատար։ Տասներկուերորդ թվականի հրդեհը, վոչնչացնելով առաջին մայրաքաղաքը, ջնջեց նաև նրա դեղին տնակը։ Բայց իսկույն և լեթ թշնամուն արտաքսելուց հետո, նրա տեղում հայտնվեց մի նորը, գորշ դույնի, դորիական որդեկի[2] սպիտակ սյուներկներով, և Ցուրկոն սկսեց նորից գնալ դալ այդ տնակի առջև «տա-

---

[1] Պոգորիլսկի — գրող Ա. Ա. Պերովսկու (1787—1836) գրական մականունը։ Փոստատարը — նրա պատմվածքներից մեկի հերոսը «Լաֆերտի կակաչաբլիթ վաճառողուհին»։

[2] Դորիական որդեն — հին հունական հատուկ մի վոճ, վոր աչքի յեր ընկնում գծերի պարզությամբ ու վորոշակիությամբ։

պարով ու սերմյագալին զրահով»[1]։ Նա ծանոթ եր Նիկիտակի դարբասների մոտ ապրող գերմանացիների մեծամասնությանն հետ։ Նրանցից լինում եյին այնպիսիները, վոր նույն իսկ գիշերում եյին Ցուրկոյի մոտ կիրակի որվա լուսո յերկուշաբթու գիշերը։ Աղրիանն իսկույն ծանոթացավ նրա հետ, վորպես մի մարդու, վորին նա վաղ թե ուշ կարող ե կարիք ունենալ, և յերբ հյուրերը մոտենում եյին սեղանին, նրանք նստեցին իրար մոտ։ Պարոն և տիկին Շուլցերը և նրանց աղջիկը տասնյոթ տարեկան Լոտխենը, հյուրերի հետ մասնակցելով ճաշին, հյուրասիրում եյին ու ոգնում աղախնին ծառայելու։ Գարեջուրը հոսում եր։ Ցուրկոն ուտում եր չորս հոգու չափ։ Աղրիանը նրանից յետ չեր ճնում։ Նրա աղջիկներն իրենց պահում եյին քաղաքավարի։ Խոսակցությունը գերմաներեն լեզվով ժամ-առ-ժամ աղմկալի յեր դառնում։ Հանկարծ տանտերը պահանջեց ուշադրություն և, բացելով ձյութով բռնված շիշը, բարձր ձայնով արտասանեց ռուսերեն՝ «Իմ բարի Լուիզալի կենացը»։ Կիսաշամպանյան գինին փրփրաց։ Տանտերը քնքշորեն համբուրեց իր քառասունամյա ընկերուհու թարմ յերեսը, և հյուրերը աղմկելով խմեցին բարի Լուիզալի կենացը։ «Իմ թանգագին հյուրերի կենացը», հայտարարեց տանտերը բացելով յերկրորդ շիշը—և հյուրերը շնորհակալություն եյին հայտնում նրան, նորից պարպելով իրենց բաժակները։ Այդտեղ կենացներն սկսեցին հետևել մեկը մյուսին. խմում եյին յուրաքանչյուր հյուրի կենացն ա-

[1] Տապար — հին զենք կացնի նման։ Զրահ — ռազմական մետաղյա հագուստ։ Սերմյագա — կոշտ մահուդից ռուս գյուղացու հագուստ։ «Տապարով ու սերմյագային զրահով» — բանաստեղծ ու առակախոս Ա. Ֆե. Իզմայլովի (1779 — 1831) «Էիմար Պախոմոշկան» վոտանավորից։

ռանձին, խմեցին Մոսկվայի ու մի ամբողջ դյուժին գերմանական քաղաքների կենացը, խմեցին բոլոր ցեխերի կենացն ընդհանրապես և յուրաքանչյուրինն առանձին, խմեցին վարպետների և նրանց աշկերտների կենացը։ Ադրիանը խմում էր ժրաջանորեն և քեֆն այնքան լավացավ, որ ինքը մի ծիծաղելի կենաց առաջարկեց։ Հանկարծ հյուրերից մեկը, մի հաստ բուլկեզործ, բարձրացրեց բաժակն ու բացականչեց. «Մեծենք այն մարդկանց կենացը, որոնց համար մենք աշխատում ենք, unserer Kundleute»[1]։ Առաջարկությունը, ինչպես և բոլոր առաջարկություններն՝ ընդունվեց ուրախությամբ և միաբերան։ Հյուրերն սկսեցին գլուխ տալ իրար՝ դերձակը — կոշկակարին, կոշկակարը դերձակին, բուլկեզործը նրանց երկուսին, և այդպես շարունակ։ Ծուրկոն այդ փոխադարձ վողջույնների մեջ բղավեց, դառնալով իր հարեվանին՝ «Հ՛ը, ախպեր ջան, դե խմիր քո մեռելների կենացը»։ Բոլորը քահ-քահ ծիծաղեցին, բայց դազաղադործն իրեն վիրավորված համարեց ու նոթերը կիտեց։ Վոչ վոք չնկատեց այդ, հյուրերը շարունակեցին խմել, և արդեն յերեկոյան զանգերը խփել էլին, յերբ հյուրերը վեր կացան սեղանի մոտից։

Հյուրերը ուշ ցրվեցին և մեծ մասամբ հարբած։ Հաստ բուլկեզործն ու կազմարարը, վորի յերեսը կարծես կարմիր սաֆյանի կազմի մեջ լիներ, Ծուրկոյի թեվերը մտած, տարան նրան իր տնակը, պահպանելով այս դեպքում ժողովրդական առածը՝ «պարտքը տալով մեղքը լալով»։ Դազաղադործը տուն յեկավ հարբած ու բարկացած։ «Ես ինչ բան ե, իսկապես, — դառում եր նա բարձր ձայնով, — ինչով ե իմ արհեստը մյուսներից անազնիվ։ Մի թե դազաղադործն նույնն ե, ինչ վոր դահիճը։

[1] Մեր կլիենտների (պատվողների, գնորդների)։

Ինչի՞ վրա չեն ծիծաղում անհավատները։ Միթե դադաղագործը Ջրորհնեքի գայեր[1] ե։ Շատ կուզեի կանչել նրանց իմ նոր բնակարանը շնորհավորելու, մի լավ խնջույք սարքել նրանց համար։ Բայց չէ՛, չեմ կանչի։ Այլ կկանչեմ յես նրանց, վորոնց համար աշխատում եմ՝ ուղղափառ մեռելներին»։ — «Ի՞նչ ես լսել, յեղբայր», — ասաց սպասուհին, վորն այդ ժամանակ նրա վոտքերն եր հանում, — ի՞նչ ես դուրս տալիս։ Մի խաչ հան յերեսդ։ Մեռելներին հրավիրել նոր բնակարանը շնորհավորելո՜ւ։ Ես ի՜նչ տեսիլք ե»։ — «Են աստվածը, կկանչեմ, — շարունակեց Ադրիանը, — և հենց եգուց։ Խնդրե՛մ, համեցեք, իմ բարերարներս, եգուց յերեկոյան ինձ մոտ խընջույքի, կհյուրասիրեմ ինչով, վոր աստված տվել ե»։ Այդ խոսքերով դագաղագործը պառկեց մահճակալին և շուտով խռմփացրեց։

Դեռ մութ եր դրսում, յերբ Ադրիանին արթնացրին։ Վաճառականուհի Տրյուխինան վախճանվել եր հենց այդ գիշերը և նրա գործակատարը ձիով մարդ եր ուղարկել այդ լուրը հաղորդելու։ Դագաղագործը դրա համար նվիրեց նրան տաս կոպեկ, շտապ հագնվեց, կառք վարձեց ու գնաց դեպի Ռազգուլյայ։ Հանգուցյալի դարբասների առջև արդեն կանգնած եր վոստիկանությունը, և ման եյին գալիս վաճառականները, ինչպես ագռավներ, զգալով մեռած մարմնի հոտը։ Հանգուցյալը պառկած եր սեղանի վրա, դեղին, ինչպես մոմը, բայց դեռ փտումից չայլանդակված։ Նրա մոտ խռնվում եյին ազգականները, հարևաններն ու տնեցիները։ Բոլոր լուսամուտները բաց

[1] Ջրորհնեքի գայեր (святочный гаер) — բալագանային խեղկատակ, վոր բեմ եր դուրս գալիս ժողովրդական զբոսանքներում Ջրորհնեքի տոներին։

ելին։ Մոմերը վառվում ելին։ Քահանաները աղոթք ելին կարդում։ — Աղբիանը մոտեցավ Տլուխինալի լեղբորորդուն, մի լերիտասարդ վաճառականի մոդալական սերթուվով, հալտնելով նրան, վոր դադաղը, մոմերը, ծածկուլթը և հուդարկավորման մյուս պարագաներն խնկուն և լեթ լրիվ տեղ կհասցնի։

Ժառանդը ցրված շնորհակալուԹյուն եր հալտնում նրան, ասելով, վոր դնի համար նա չի սակարկում, այլ ամեն ինչ թողնում ե նրա խղճին։ Դագաղագործն, ըստ իր սովորուԹյան, լերդվեց, վոր ավել փող չի վերցնի։ Գործակատարի հետ նշանակալից հալացքներ փոխանակեցին և նա գնաց իր գործին։ Ամբողջ որն անց ու դարձ եր անում Ռազդուլյալից դեպի Նիկիտսկի դարբասները և հակառակը։ Ցերեկոյան դեմ ամեն բան կարգի գցեց ու գնաց տուն վոտքով, բայ թողնելով իր կառքը։ Լուսնյակ դիշեր եր։ Դագաղագործը բարեհաջող կերպով հասավ Նիկիտսկի դարբասներին։ Վոզնեսենսկայի[1] մոտ նրան ձայն տվեց նրա ծանոթ Ցուրկոն և, ճանաչելով դագաղագործին, բարի դիշեր մաղթեց նրան։ Ուշ լերեկո լեր։ Դագաղագործն արդեն մոտենում եր իր տանը, լերբ հանկարծ թվաց նրան, վոր ինչ վոր մեկը մոտեցավ նրա դարբասին, բացվեց դռնակն ու անհայտացավ ներսում։ «Ես ինչ կարող ե լինել, — մտածեց Աղբիանը. — ելի ով իմ կարիքն ունի։ Չլինի գող ե մտել իմ տունը։ Չլինի սիրեկաններ են գալիս իմ հիմար աղջիկների մոտ։ Ա՛յ, թե բան կլինի. հա՛»։ Ցեվ դագաղագործը քիչ եր ճնում, վոր ոգնուԹյան կանչի իր բարեկամ Ցուրկոյին։ Այդ րոպեին ինչ վոր մեկն ել մոտեցավ դռնակին և ուզում եր ներս մտնել, բայց տեսնելով տանտիրոջը, կանգ առավ

[1] Նախկին յեկեղեցի Նիկիտսկի դարբասների մոտ։

ու հանեց յեռանկյունի գլխարկը։ Ադրիանին նրա դեմքը ծանոթ թվաց, բայց շտապ-շտապ ժամանակ չունեցավ կանոնավոր ճանաչել նրան՝ «դուք շնորհ եք բերել ինձ մոտ,— ասաց հեվալով Ադրիանը,— ներս մտեք, համեցեք»։—

«Չե, ախպեր Ջան,—պատասխանեց նա խուլ ձայնով,—անցիր առաջ, ճանապարհ ցույց տուր հյուրերին»։ Ադրիանը ժամանակ էլ չուներ կանգ առնելու։ Դռնակը բաց էր, նա անցավ սանդուխքների վրա, յեկողն էլ նրա յետևից։ Ադրիանին թվաց, վոր իր սենյակում մարդիկ են ման գալիս։ «Ես ինչ սատանայական բան է»—մտածեց նա և շտապեց ներս մտնել... այստեղ նրա վոտքերը թուլացան։ Սենյակը լիքն էր մեռելներով։ Լուսինը լուսամուտներով լուսավորում էր նրանց դեղին ու կապտած յերեսները, ներս ընկած բերանները, պղտոր, կիսախուփ աչքերն ու դուրս ցցված քթերը... Ադրիանը սարսափած ճանաչեց այն մարդկանց, վորոնք թաղված էլին նրա ջանքերով, և իր հետ ներս մտած հյուրն էլ այն բրիգադիրն էր, վորին նա թաղել էր վարար անձրևի ժամանակ։ Դրանք բոլորը, կանայք և տղամարդիկ, շրջապատեցին դագաղագործին, վողջունելով և գլուխ տալով նրան, բացի մի աղքատ մարդուց, վորը մոտ որերս ձրիաբար թաղված էր և վորը, քաշվելով ու ամաչելով իր ցնցոտիներից, չէր մոտենում ու համեստորեն կանգնած էր անկյունում։ Մնացած բոլորը հագնված էլին վալելուչ կերպով՝ հանդուցյալ կանայք գլխանոցներով և ժապավեններով, աստիճանավոր մեռելները համազգեստներով, բայց չածիլած մորուքներով, վաճառականները տոնական բաճկոններով։ «Դիտես ինչ, Պրոխորով,—ասաց բրիգադիրը վողջ ազնիվ հասարակութիան անունից։—Մենք բոլորս տեղներիցս յելանք քո հրավերով, տանը ճնացին միայն

նրանք, վորոնք արդեն հնարք չունեն, վորոնք արդեն քալքալվել են, և մեկ էլ նրանք, վորոնց վոսկորներն են միացել առանց կաշվի, բայց դրանցից էլ մեկը չհամբերեց — ասկսես եր. նա ուզում լինել քեզ մոտ...»: Այդ րոպեին մի վոքրիկ կմախք, ամբոխը ճեղքելով, մոտեցավ Ադրիանին: Նրա կառափն ուրախ ժպտում եր դագաղագործին: Բայց-կանաչ և կարմիր մահուդի ու հնամաշ կրտավի ծվենները տեղ-տեղ կախվել ելին նրա վրայից, ինչպես ձողից, իսկ վոտքերի վոսկորները ծեծկվում ելին մեծ բոտֆորաներում[1] մեջ, ինչպես սանդկոթերը սանդերի մեջ: «Դու ինձ չճանաչեցիր, Պրոխորով, — ասաց կմախքը — Հիշում ես արդյոք զվարդիայի պաշտոնաթող սերժանտին[2] — Պյոտր Պետրովիչ Կուբրիկինին, այն, վորին դու 1799 թվին ծախեցիր քո առաջին դագաղը — և են էլ սոճուց շինածը կաղնյա դագաղի տեղ»: Այս խոսքերով մեռելը բացեց նրա առաջ իր վոսկորե դիրկը — բայց Ադրիանը, հավաքելով ամբողջ ուժերը, բղավեց ու հրեց նրան: Պյոտր Պետրովիչը լերկրացավ, ընկավ և ամբողջովին ցրիվ լեկավ: Մեռելների միջև գայրուկթի մրմունջ բարձրացավ: Բոլորն սկսեցին պաշտպանել իրենց ընկերոջ պատիվը ու նեղել Ադրիանին, հայհոյելով և սպառնալիքներ տալով, և խեղճ տանտերը, խլացած նրանց կանչ ու աղաղակից և դրեթե խեղդվելով, կորցրեց վոգու արիութլունը, ինքն էլ ընկավ պաշտոնաթող սերժանտի վոսկորների վրա և ուշքը գնաց:

Արևը վաղուց արդեն լուսավորում եր այն անկողինը, վորի վրա պառկել եր դագաղագործը: Վերջապես նա աչքերը բացեց և տեսավ իր առաջ սպասուհուն, վորը ինք-

---

[1] *Բոտֆորտ — լերկարաճիտք (ծնկերից բարձր) կոշիկներ:* (Ծ. Թ.):

[2] *Սերժանտ — զինվորական աստիճան, վոր անմիջապես նախորդում եր սպայական աստիճանին:*

նալեան եր վչում։ Սարսափած հիշեց Ադրիանն այն ամենը, ինչ կատարվեց յերեկ։ Տրյուխինան, բրիգադիրը և սերժանտ Կուրիլկինը աղոտ կերպով պատկերացան նրա յերևակայությանը։ Նա լուռ սպասում եր, վորպեսզի սպասուհին խոսակցություն սկսի իր հետ և հայտնի գիշերային արկածների հետևանքների մասին։

— Ես ինչ շատ քնեցիր, յեղբայր Ադրիան Պրոխորովիչ,— ասաց Ակսինյան, տալով նրան խալաթը։— Քեզ մոտ եր յեկել հարևան դերձակը, մեկ էլ եստեղի բուլկեդործը յեկավ ու հայտնեց, վոր Մանկապետի[1] անվանակոչության տոնն է, դե դու էլ, վոր քնած էիր, մենք չուզեցինք քեզ արթնացնել։

— Իսկ հանդուցյալ Տրյուխինայից յեկող յեղել է ինձ մոտ։

— Հանդուցյալ։ Մի թե նա մեռել է։

— Ալ քեզ հիմարի գլուխ։ Բա դու չգիտիր, վոր յերեկ ոգնում էիր ինձ գլուխ բերելու նրա թաղումը։

— Ես ի՞նչ է, յեղբայրս, խելքդ հո չի ցնդել, թե յերեկվանից դեռ քեֆդ չի թողել։ Ի՞նչ թաղում կար յերեկ։ Դու ամբողջ որը քեֆ ես արել դերմանացու մոտ, տուն յեկար հարբած, ընկար տեղիդ մեջ, ու մինչև հիմա էլ քնած էիր, ցերեկվա ժամի զանգերն էլ, ես է, վոր տվին։

— Ճի՞շտ եղպես է,— ասաց ուրախացած դպաղաղործը։

— Բա էլ ինչպե՞ս պիտի լիներ,— պատասխանեց սպասուհին։

— Դե, վոր՝ եղպես է, շուտ արա թեյը տուր, ու կանչիր աղջիկներին։

---

[1] Մանկապետ — չաստնի պրիստավ, քաղաքամասի վոստիկանական պետի կոչումը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պուշկինը—լիցեյական

ՀԵՔՅԱԹՆԵՐ

Ֆոլկլորի[1] *մի շարք այլ տեսակների (յերգ, առակ և այլն) հետ, Պուշկինի ուշադրությունը գրավել են նաև անդրագետ դյուղացիների ու գեղջկուհիների պատմած հեքյաթները — հրաշապատում արկածներով, անիրական գործող անձնավորու-*

1 *Ֆոլկլոր բառն տակ հասկացվում է՝ մեծ մասամբ անդրագետ, ժողովրդական յերդիչների ու ասացողների հորինած յերգերը, հեքյաթները և այլն։ Նույն իմաստով մեզ մոտ հաճախ գործ են ածվում և ժող. բանահյուսություն կամ ժող. ստեղծագործություն։*

թյուններով (մարդ, թե գազան), առարկաներով ու դիպվածներով լի ժողովրդական պատմվածքները։

Վերջիններս Պուշկինին արժեքավոր են թվացել՝ իրենց կենդանի ու պատկերավոր լեզվի, պարզ ու անպաճուճ բանաստեղծության և ֆանտաստիկական բանաստեղծության համար։ Ահա թե ինչպես է արտահայտվել նա այդ առթիվ.

«Ի՜նչ աքանչելիք են այդ հեքյաթները, յուրաքանչյուրը մի պոեմ»,— գրում է Պուշկինը մի տեղ։

«Հեքյաթը — հեքյաթ, իսկ մեր լեզուն ել ջոկ, և սրան է, վոր վոչ մի տեղ չի կարելի տալ ռուսական այն ազատությունը, վոր կա հեքյաթում»,— գրում է նա մի այլ տեղ։

«Ռուսական հրաշապատում հեքյաթները վոչնչով չեն զիջում ֆանտաստիկական պոեզիայի մեջ՝ իրլանդական և գերմանական ավանդություններին»,— գրում է նա մի յերրորդ տեղ։

Ժողովրդական հեքյաթներով Պուշկինն սկսել է հետաքրքրքրվել իր գրական գործունեության առաջին իսկ տարիներից։ Բայց հեքյաթների բուն ակունքներին նա մոտենում է միայն 1824—26 թ. թ., իր հայրենի Միխայլովսկ գյուղում (Պսկովի նահանգ), ուր իբրև աքսորական[1] անց է կացնում ուղիղ յերկու տարի։ Այստեղ է, վոր մեծ բանաստեղծն առաջին անգամ, ֆոլկլորի մի քանի այլ տեսակների հետ, լսում, հիանում ու գրի յե առնում նաև ժողովրդական հետաքրքիր հեքյաթները։

Պուշկինին ամենից ավելի հեքյաթներ մատակարարել է նրա դայակը՝ Լենինգրադից մոտ վաթսուն վերստ հեռու գտնվող Գորբին գյուղացի, պառավ Արինա Ռոդիոնովնան, մի հասարակ, անգրագետ ճորտ գեղջկուհի, վորին իբրև «բաժինք» այլ «տնային ծառայողների» հետ, իր ծնողներից ստացել եր Պուշկինի մայրը։

Արինա Ռոդիոնովնան Պուշկինին հեքյաթներ է պատմել գեռ նրա մանկական հասակում՝ գիշերները, քնելուց առաջ։

Սակայն, այն ժամանակ, ինչպես հետագայում (Լիցեյում սովորելիս) հիշում է Պուշկինը, հեքյաթներն իրենց հրաշապատ-

[1] Պուշկինին աքսորել եր Ալեքսանդր I-ը, նրա ազատասիրական հոգով գրած վոտանավորների ու անհնազանդ բնավորության համար։

տում արկածներով և անիրական, անռելի մարդկանցով ու գազաններով, շոյելով իր մանկական երևակայությունը, միաժամանակ ահ ու սարսափ են պատճառել նրան։

Այժմ Արինա Ռոդիոնովնայի հեքիաթները բոլորովին այլ տպավորություն էին գործում արդեն չափահաս, գրող Պուշկինի վրա։ Նրանց մեջ մեծ բանաստեղծը շատ նոր բան էր գտնում իր համար։ Նա լսում էր այդ հեքիաթները շատ ավելի ուշադրությամբ, քան մանուկ հասակում։ Արինա Ռոդիոնովնայի պատմած հեքիաթների միջոցով Պուշկինի առաջ բացվում էր ժողովրդական երևակայության մի ամբողջ աշխարհ։ Նա տեղեկանում էր, թե ինչ է մտածում ու զգում ռուս գյուղացին և սովորում գյուղական բարբառի կենդանի ու պատկերավոր դարձվածքները։ Հեքիաթները Պուշկինին տալիս էին այն, ինչ պակասում էր նրա ֆրանսիական, գրքային — սխոլաստիկ դաստիարակության մեջ։ Ահա թե ինչ է գրում նա այդ առթիվ իր եղբորը. «Գիտե՞ս արդյոք իմ պարապմունքների մասին. մինչև ճաշ գրություններ եմ գրում, ճաշում եմ, ուշ. ճաշից հետո զբոսնում եմ ձիով. երեկոները՝ հեքիաթներ լսում — և դրանով հատուցում իմ անիծյալ դաստիարակության պակասները»։

Արինա Ռոդիոնովնայի պատմած հեքիաթներից և երգած երգերից Պուշկինը սովորում էր, թե ինչպես պետք է գրել։ Ստուգելու համար իր գործը, նա նույնիսկ կարդում էր իր գրվածքները պառավ Ռոդիոնովնային։ Եթե նա հասկանար ու հավաներ, նշանակում է լավ էր. մտածված ու ասված իսկական ռուսերեն լեզվով։ Իսկ եթե չհավաներ, նշանակում է՝ պետք էր էլի մշակել։

Սակայն Պուշկինը չի սահմանափակվել միայն իր դայակի իմացածով։ Ժամանակակիցների վկայությամբ՝ նա սովորություն է ունեցել՝ շրջելու գյուղական տոնավաճառները, շուկաները և ուխտատեղերը, և վերջիններիս մշտական հաճախորդ թափառական երգիչ-ասացողներից և շրջիկ կույր աղքատներից՝ լսել ու գրի առնել նրանց պատմած հեքիաթներն ու զրույցները։

Բանավոր աղբյուրներին զուգընթաց Պուշկինն իր հեքիաթային պաշարը հարստացրել է և գրավոր աղբյուրներից կար-

դալով ռուսական, գերմանական և այլ ժողովուրդների հեքյաթների ժողովածուները։

Իր լսած, գրի առած ու կարդացած բազմաթիվ ժողովրդական հեքյաթները Պուշկինը չի թողնում առանց ոգտագործելու։ Նա լրջորեն սկսում է զբաղվել վերջիններիս գրական — գեղարվեստական վերամշակման գործով, 1831—1834 թ.թ. իբար հետևից լույս ընծայելով իր ինքնուրույն հեքյաթները՝ «Մալթան թագավորի», «Ցերտերի և իր Բալդի ծառայի», «Վոսկի ձկնիկի», «Վոսկի աքլորիկի» և այլնի մասին։

Մշակելով ժողովրդական հեքյաթները, Պուշկինը, ինչպես ճիշտ նկատել է Ա. Մ. Գորկին, իր տաղանդի փայլով զարդարել է վերջիններս, բայց անփոփոխ է թողել նրանց վողջ խմաստն ու ուժը, չի թագցրել, այլ ընդհակառակը, առավել ցայտուն է ընդգծել ժողովրդի ծաղրական, բացասական վերաբերմունքը դեպի թագավորներն ու տերտերները։

Վոտ ու ձեռով կաշկանդված լինելով ցարական պետության և ցարական գրաքննության կողմից, Պուշկինը հեքյաթի մեջ գտնում է մի շատ հարմար ձև, վորով նա կարող եր քողարկված արտահայտել իր քննադատական վերաբերմունքը տիրող կարգերի և իր ատելությունը ռուսական ցարերի նկատմամբ։

Այսպես որինակ, իր «Վոսկե աքլորիկ» հեքյաթում, հանձին Դադոն թագավորի, Պուշկինն իր քաղաքական հաշիվները է մաքրել ռուսաց թագավորի հետ, քաղաքական սատիրան քողարկելով հեքյաթի ֆանտաստիկական բովանդակությամբ և կես-կատակալին վոճով։ Այստեղ նա պատկերացրել է միաժամանակ յերկու ռուս թագավորների —«կողքի վրա պառկած թագավորող» Ալեքսանդր I-ին և բութ ու կռվասեր Նիկոլայ I-ին, վորի որով «զորքերը շարժվում են որ ու գիշեր»։

«Ցերտերն ու Բալդի ծառան» հեքյաթում Պուշկինը ծաղրել է գյուղական քահանալի ագահությունն ու տխմարությունը, անցնելով խելոք ու ճարպիկ աշխատավոր գյուղացու (Բալդի ծառայի) կողմը։

«Զկնորսի ու ձկնիկի» հայտնի հեքյաթում, հանձին աշխատասեր ծերուկ ձկնորսի, Պուշկինը պատկերել է ընչազուրկ աշխատավոր գյուղացիությանը, իսկ հանձին նրա ագահ, ինքնիշ-

խան պատավ կնոջ՝ դյուղացիուհյանը ճնշող ուժերն — կալվածատիրուհյունն ու ինքնակալուհյունը։

Ուշադրավ սոցիալական մոտիվներ կան նաև կենդանիների կյանքից վերցրած Պուշկինի մի անավարտ հեքյաթում («Արջուհին»)։ Իր հեքյաթի դործող անձնավորուհյուն — կենդանիներին Պուշկինը մարդկանց նման բաժանում է առանձին դասերի ու դասակարդերի։ Կուղբը նրա մոտ «առևտրական հյուր է», վորովհետև ունի փարթամ ու խիտ մորթի և ճարպոտ պոչ։ Աղջը՝ խոշոր աղնվական է, վորովհետև ունի լավ մուշտակ։ Գայլը՝ «աղնվական է», վորովհետև ունի «վծան ատամներ» ու «նախանձոտ աչքեր»։ Իսկ նապաստակը՝ «ռամիկ» է, հասարակ դյուղացի, վորին համակրում և վորի մասին խղճահարուհյամբ է խոսում Պուշկինը։

Հիմնականում հարազատ մնալով իր ձեռքի տակ յեղած ռուսական և յեվրոպական հեքյաթներին, Պուշկինը վերամշակել և վերջիններիս բովանդակուհյունը։ Նա ազատորեն վերաստավորել և իր աղբյուրների առանձին միջադեպերը, խառնել տարբեր հեքյաթներն իրար հետ, շատ բան ավելացրել իրենից, ստեղծելով քողարկված քաղաքական ակնարկներով ու հեգնանքով հագեցած իր նոր, ֆանտաստիկական հեքյաթ-պոեմները։

Նույն կերպ է վարվել նա և իր ձեռքի տակ յեղած հեքյաթների լեզուն, վոճը և վոտանավորը մշակելիս։ Ըստ ամենայնի հարազատ մնալով վերջիններիս, Պուշկինն իր հեքյաթների մեջ մտցրել է իր բանաստեղծական փորձի վողջ պաշարը, լեզվական դիտելիքները և նկարագրելու ու պատմելու շնորհքը։

Հետևելով ժողովրդական հեքյաթների բարբառային հարուստ լեզվին և առածներով ու ասացվածքներով համեմված կենդանի ու պատկերավոր վոճին, և տեղին ոգտագործելով այն, Պուշկինը ստեղծել է սեփական խոսքերն ու դարձվածքները, նույնքան կենդանի ու պատկերավոր, վորքան և բուն ժողովրդական բառն ու բանը։

Ավելի աղատ է վարվել նա ժողովրդական հեքյաթների տաղաչափական կառուցվածքի վերաբերմամբ։

Հաճախ ձգձգված և միջնակյալ պատմվածքներով ծանրաբեռնված, մեծ մասամբ արձակ ժողովրդական հեքյաթներին Պուշկինը տվել է միաձույլ, կուռ կառուցվածք (դուրս ձգելով վեր-

չիններիս շատ մասերը և նրանց տեղը նորերն ավելացնելով) և վերածել կանոնավոր չափածո վոտանավորի։ Սակայն, այստեղ ևս Պուշկինը բոլորովին չի հեռացել ժողովրդական ստեղծագործության ակունքներից։ Իր ընտրած տաղաչափական ձևերի մեջ նա ոգտագործել է տարբեր տեսակի ժողովրդական վոտանավորներ։ Այսպես որինակ, իր «Տերտերն ու Բալդի ծառան» հեքիաթը Պուշկինը գրել է մաքուր շեշտական վոտանավորով, նման ժողովրդական վիպերգների մեծ մասամբ յեռաշեշտ վոտանավորին։ «Զկնորսի և ձկնիկի» հեքիաթը՝ յեռաշեշտ վոտանավորով, մի չափ, վորով հորինված եյին 16—17-րդ դարերում ռուսական բլինաները (ժող. վիպական յերգեր) և այլն։

Իր հեքիաթների հանգավորման մեջ ևս, հեռանալով ժողովրդական հեքիաթներից, Պուշկինը չի դավաճանել ընդհանրապես ժողովրդական ստեղծագործությանը։ Նրա «Տերտերն ու Բալդի ծառան» հեքիաթում, որինակ, իշխում են ներքին նմանահնչյունությունները՝ զուգորդված կանոնավոր հանգերի ու նմանահնչյունությունների հետ, վորոնք գտնում ենք ռուս ժող. վեպի ու առակների մեջ։ Իր ներդաշնակ կրկնություններով, նմանահնչյունություններով և կանոնավոր ու հարուստ հանգերով Պուշկինի ակունքներից հեռու չե և Պուշկինի «Զկնորսի ու ձկնիկի» հայտնի հեքիաթը և մյուս հեքիաթները։

ՊՈՒՇԿԻՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Պուշկինի մյուս գրվածքների (պոեմներ, բանաստեղծություններ և այլն) հետ, մեր գրողները տարբեր ժամանակներում թարգմանել կամ փոխադրել են նաև նրա հեքիաթները։

Այդ թարգմանություն-փոխադրությունների մեջ ժամանակագրական կարգով առաջին տեղն են գրավում ռուս մեծ բանաստեղծի „Сказка о рыбаке и рыбке“ վերնագրով հայտնի հեքիաթի՝ Հ. Բաղդասարյանցի, անանուն թարգմանչի Ղ. Աղայանի, Գամառ-Քաթիպայի և Կամսար Տեր-Դավթյանի թարգմանություն-փոխադրությունները[1]։

---

[1] *Առաջինը (Հ. Բաղդասարյանց), «Ձուկն ու ձկնորս» վերնագրի տակ լույս է տեսել 1858 թ. Թիֆլիսում՝ «Մեղու Հայաստանի» որագրի 4-րդ տարվա, ապրիլի 19-ի № 16-ում։*

Յերկրորդը (անանուն թարգմանչի), «Ձկնորսի ձկնիկը» վերնագրի տակ լույս է տեսել 1863 թ. Թիֆլիսում՝ նույն «Մեղու Հայաստանի»-ի 2-րդ տարվա մայիսի 11-ի № 18-ում։

Յերրորդը՝ (Ղ. Աղայան), «Վոսկի ձկնիկ» վերնագրի տակ լույս է տեսել 1884 թ. Թիֆլիսում, «Աղբյուր» մանկական ամսագրի հրատարակությամբ (№ 4)։

Չորրորդը (Դամառ-Բաթիպա), նույն վերնագրի տակ, լույս է տեսել նույն թվին, Թիֆլիսում հրատարակվող «Վարժարան» մանկավարժական ամսագրի №№ 7, 8, 9 և 10-ում, և ապա արտատպվել առանձին գրքույկով (Թիֆլիս, 1884 թ.)։

Հինգերորդը (Կամսար Տեր Դավթյան), միևնույն վերնագրի տակ, լույս է տեսել 1903 թ. Թիֆլիսում, հեղինակի «Բանաստեղծություններ» փոքրիկ ժողովածույում (էջ 38-48), և առանձին գրքույկով (յերկու տեղում էլ պատկերազարդ)։

„Сказка о рыбаке и рыбке“-ի վերևում թված յերեք թարգմանություն-փոխադրություններին հաջորդում է Պուշկինի „Сказка о царе Салтане о сыне его славном и могучем богатыре князе Гвидоне Салтаниче и о прекрасной царевне лебеди“ *հեքյաթի՝ Հար. Թումանյանի թարգմանությունը, վորը լույս է տեսել 1906 թվին, Թիֆլիսում, Ս. Մանդինյանի «Ռուսերեն հատընտիր հատվածներ հայերի համար» դասագրքում (Ա. գրքույկ, էջ 38-105)։*

Բացի այս, հայտնի յեն նաև Պուշկինի „Сказка о попе и о работнике его Балде“, „Сказка о мертвой царевне и о семи богатырях“ *յերկու հեքյաթների Ա.Թաբեզ Խնկոյանի (Ընկո-ապոր) թարգմանություն-փոխադրություններըւ*

Առաջինը՝ «Տերտերն ու իր Բալդի ծառան» վերնագրի տակ, լույս է տեսել 1908 թ. Թիֆլիսում, «Հասկեր» մանկական ամսագրի նոյեմբեր ամսվա № 11-ում։

Յերկրորդը՝ «Բնած դշխուհին և յոթը քաջերը» վերնագրի տակ լույս է տեսել 1911 թ. Թիֆլիսում, նույն «Հասկեր» մանկական ամսագրի հրատարակությամբ, առանձին գրքույկով։

Պուշկինի հեքյաթների թարգմանիչ հայ գրողներից, իրենց թարգմանություններն բարձր վորակով աչքի յեն ընկնում մեր անվանի մանկական գրողներ — հեքյաթագիր ու առակախոս Ղ. Աղայանն ու Ա.Թ. Խնկոյանը (Խնկո-Ապեր)։ Վերջիններիս թարգմանություն-փոխադրությունները՝ նախ և առաջ գնահատելի յեն իրենց սահուն լեզվով և կենդանի վոճով։ Հետևելով Պուշկինին, թե Աղայանը և թե Խնկոյանն իրենց թարգմանու-

թյուն-փոխադրություններըը կատարել են հայերեն մաքուր գրական լեզվով, միաժամանակ գործածելով մի շարք հաջող ու պատկերավոր ժողովրդական բառեր ու ասացվածքներ։

Այսպես որինակ, իր «Վոսկի ձկնիկ»-ի մեջ Աղայանը գործ է ածել հետևյալ հաջող ու պատկերավոր ժողովրդական վոճերն ու արտահայտություններըը. կաս-կարմիր, արմաղ-շարմաղ, խա-նում-խաթուն, այդ քեզ խրատ, եվ չը ցանես մանր կտավհատ և այլն։

Իսկ Ենկոյանն իր «Ցերտերն ու Բալդի ծառան» և «Հնած դշխուհին ու յոթ քաջերը» հեքյաթներում գործ է ածել հետևյալ նույնքան հաջող ու պատկերավոր ժողովրդական բառերն ու վոճերը. Ջահել-Ջիվան, աղի-արցունք, կարմրախեռ, արտամաշ, մուրազ, ճլորել, քուրիկ, կոնծել, չքոտ և այլն։

Պակաս ուշագրավ չե նաև Աղայանի ու Ենկոյանի թարգմանություն-փոխադրությունների վոտանավորը։ Մեր վարպետ թարգմանիչներն այստեղ ևս հարազատ են մնացել Պուշկինին, պահպանելով նրա հեքյաթների չափածո ձևը և վերարտադրելով նրանց կանոնավոր տաղաչափությունը։ Այսպես որինակ, թարգմանելով Պուշկինի 10 վանկանի յեռաշեղտ վոտանավորով գրված „Сказка о рыбаке и рыбке“ հեքյաթը, Աղայանն իր թարգմանության մեջ պահել է նույն 10 վանկանի կանոնավոր յեռաշեղտ վոտանավորը։ Իսկ Ենկոյանը թարգմանելով Պուշկինի մաքուր շեշտական վոտանավորով գրված „Сказка о попе и оработнике его Балде“ և 7 կամ 8 վանկանի յեռաշեղտ կամ քառաշեղտ վոտանավորով գրված՝ „Сказка о мертвой царевне и о семи богатырях“՝ հեքյաթները, յերկու դեպքում ել հարազատ է մնացել Պուշկինի գործածած տաղաչափությանը։

Իրենց թարգմանություն-փոխադրությունների հանգավորման մեջ ևս Աղայանն ու Ենկոյանը մոտիկ են մնացել Պուշկինի հեքյաթներին, վերջիններիս ներդաշնակ կրկնություններին և կանոնավոր ու հարուստ հանգերին։ Այս բանում, ինչպես և լեզվի ու վոճի խնդրում, նրանց ոգնել է մեր ժողովրդական բանահյուսությունն իր յերաժշտական նմանահնչյունություններով ու հանգերով։

Այլ պատկեր են ներկայացնում իրենցից Պուշկինի հեքյաթների՝ Հար. Թումանյանի, Համասր Տեր Դավթյանի և Գամառ-

Քաթիպայի թարգմանություն-փոխադրությունները։ Վերջիններս նախ և առաջ աչքի յեն ընկնում իրենց գավառական (հաճախ շատ կոպիտ), գրաբար (խրթին) և աշխարհաբար բառերի աններդաշնակ խառնուրդից կազմված վոչ սահուն լեզվով։

Այսպես օրինակ, Պուշկինի „Сказка о царе Салтане“ իր թարգմանության մեջ՝ Հար. Թումանյանը — փանջարա, յարաղ, ղուրթ, զոռ, ղայթան և այլն և գավառական կոպիտ բառերի կողքին՝ գործ է ածում՝ դժնդակ, ուղեփակ, դիվային և այլն մաքուր աշխարհաբար բառերը, իսկ այս վերջինների կողքին՝ սնուցանեմ, հարուցանեմ, մատուցանեմ և այլն գրաբար ձևերը։

Նույն կերպ են վարվել իրենց թարգմանությունների մեջ և Գամառ-Քաթիպան ու Կամսար Տեր Դավթյանը։

Պուշկինի «Сказка о рыбаке и рыбке“ հեքյաթի իր թարգմանության մեջ, առաջինը՝ ինձի, ըսկսավ, քու, կուտամ և այլն բարբառային բառերի ու ձևերի կողքին գործ է ածել՝ սոսկ, արտաքս հանել, ավագորյար, կամավ և այլն գրաբար բառերն ու ձևերը, իսկ՝ յերկրորդը՝ նույն հեքյաթի իր մի այլ թարգմանության մեջ՝ կնիկ, ինձի, խոմ բառերի կողքին՝ դշխո, տապար, իսպառ և այլն բառերը։

Հար. Թումանյանը, Կ. Տեր Դավթյանը և Գամառ Քաթիպան չեն հաջողել նաև իրենց թարգմանություն-փոխադրությունների հանգավորման մեջ։ Պուշկինի հարուստ հանգերի և խորը նմանահնչյունությունների փոխարեն, նրանք տվել են աղքատ հանգեր և թույլ նմանահնչյունություններ։ Համեմատաբար հարազատորեն են նրանք վերարտադրել Պուշկինի հեքյաթների տաղաչափական կառուցվածքը, պահպանելով վերջիններիս չափածո ձևն ու վոտանավորի տարբեր տեսակները։

Պուշկինի հեքյաթների մեր հիշած հայերեն թարգմանություն-փոխադրությունների մեջ առանձնակի տեղ են գրավում՝ Հ. Բաղդասարյանցի և անանուն թարգմանչի „Сказка о рыбаке и рыбке“ հեքյաթի թարգմանություն-փոխադրությունները։

Առաջինը՝ արձակ ազատ թարգմանություն է, վորի մեջ բավական սահուն աշխարհաբար գրական լեզվով հաղորդված է Պուշկինի հեքյաթի բովանդակությունը։

Յերկրորդը՝ Թիֆլիսի բարբառով գրված, վոչ կանոնավոր

չափածո վոտանավոր է (մեծ ու փոքր տողերով և խառն վանկերով)։

Հիշյալ լեզուս թարգմանություններն էլ զուրկ են վորևե գեղարվեստական արժեքից, և ուշագրավ են միայն վորպես ռուս մեծ բանաստեղծի հեքյաթների ամենահին թարգմանություններ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Ս. Պուշկինի դերը յեզակի յե ռուսական պոեզիայի պատմության մեջ։ Մինչև Պուշկինի հանդես գալը տիրապետող եյին ներքողական, գովասանական կամ հոգևոր-կրոնական բանաստեղծությունները, վորոնք, գլխավորապես, գրվում եյին հանդեսների, տոների առթիվ և նվիրված եյին լինում թագավորին, նրա գեներալներին և ուրիշ «բարձրաստիճան» մարդկանց։ Բանաստեղծությանն, ինչպես առհասարակ գրականության վրա, հսկում եր ցարական մինիստրությունն ու վոստիկանությունը, վոր չլինի թե հակացարական, հակապետական վորևե բան գրվեր կամ տպագրվեր։

Պուշկինը ռուս գրականության, և մասնավորապես բանաստեղծության մեջ մտցրեց ռեալիզմ, իրական կյանքի ու բնության պատկերներ տվեց, ռուս ժողովրդական լեզվի թարմություն ու գունազեղություն բերեց, ազատասիրական խոսք հնչեցրեց և բողոքեց ցարիզմի ու ճորտատիրության դեմ։

Պուշկինը բանաստեղծություններ գրել է շատ փոքր հասակից։ Դեռևս ութ տարեկան նա ֆրանսերեն բանաստեղծություններ եր գրում։

Պուշկինի առաջին բանաստեղծությունը («Քաղաք») տպագրվել է 1814 թվին։ 1815 թվին լիցեյում գրում է «Հիշողություններ Ցարսկոյե Սելոյի մասին» բանաստեղծությունը, վոր կարդում է նույն թվի հունվարի 8-ին, դպրոցական հանդեսի ժամանակ։ Հանդեսին ներկա յեր XVIII դարի ռուս նշանավոր բանաստեղծ, բայց արդեն ծերացած Դերժավինը։ Նա մեծ հիացմունքով լսում է Պուշկինին, ապա պատանի բանաստեղծին գրկելով, ասում է.

— Ահա թե ով պիտի փոխարինի Դերժավինին։ Լիցեյում, աշակերտական նստարանի վրա, Պուշկինն սկսում է գրել իր

առաջին նշանավոր պոեմը՝ «Ռուսլան ու Լյուդմիլա», որն ավարտում է 1820 թվին։ Այդ պոեմի նյութը վերցրած է ռուս ժողովրդական հեքիաթներից։ Գրված է պարզ, պատկերավոր լեզվով, ժողովրդական ընտիր վոճերով ու դարձվածքներով։ Դրանով Պուշկինը ռուս գրականության մեջ էր մտցնում ժողովրդական վոգին։ «Ռուսլան ու Լյուդմիլան» թեև հակառակորդներ ու «քննադատներ» ունեցավ, բայց հիացողներն ու գնահատողներն էլ շատ էին, և շատ շուտով Պուշկինի հռչակը տարածվեց։

Պոեմի համառոտ բովանդակությունն այս է. իշխան Վլադիմիրն իր աղջկան — Լյուդմիլային — ամուսնացնում է իշխանազն Ռուսլանի հետ։ Գիշերը, յերբ Ռուսլանն ու Լյուդմիլան քնած են լինում, կախարդ թզուկ Չերնոմորը փախցնում է Լյուդմիլային։ Ռուսլանը վճռում է, ինչ գնով ուզում է լինի, գտնել իր հարսնացուին — գեղեցիկ Լյուդմիլային։ Բազմաթիվ արգելքների հաղթելով, Ռուսլանը Լյուդմիլային ազատում է Չերնոմորի կախարդանքից, և նորից միասին ապրում են յերջանիկ կյանքով։

Այս ժողովածվում զետեղված հատվածը («Ուսյալ կատուն») «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմի նախերգանքն է, վոր Պուշկինը գրել է հետո, 1828 թվին։ Աթ. Խնկոյանի թարգմանության առաջին վեց տողը նախապես տպագրվել է «Հասկեր» մանկական ամսագրում և ապա «Հոկտեմբերիկ»-ում։

1819 թվին Պուշկինը գրում է իր գեղեցիկ բանաստեղծություններից մեկը՝ «Գյուղ»-ը (այս ժողովածվում տպագրվում է Հ. Մազմանյանի թարգմանությամբ)։ Պետերբուրգի պարահանդեսներից ու խնջույքներից հոգնած, Պուշկինը գյուղ է գնում անդորրություն գտնելու, բայց այստեղ էլ տեսնում է ճորտատիրական դաժան բռնություն գյուղացիների նկատմամբ։ Բանաստեղծը յերազում է «գեղեցիկ արշալույսը» — ճորտատիրական կարգերի անկումը։ Յերկար ժամանակ «Գյուղ» բանաստեղծության ձեռագրերը ձեռից ձեռ էր անցնում։ Տպագրվեց միայն 1870 թվին։ «Գյուղ»-ը Պուշկինի այն բանաստեղծություններից է, վոր ագիտացիոն նպատակով օգտագործում էին դեկաբրիստները։ (Դեկաբրիստները հեղափոխական գաղտնի մի ընկերության անդամներն էին—գերազանցապես զինվորականներ,

— վորոնք 1825 թվի դեկտեմբերի 14-ին ապստամբությունը բարձրացրին։ Նրանց նպատակն էր ճորտատիրության վերացումը։ Դեկաբրիստների ապստամբությունը թեև ճնշվեց, բայց այն նշանակություն ունեցավ, վոր նպաստեց Ռուսաստանի հեղափոխական շարժման հետագա զարգացմանը)։

Պուշկինը ջերմորեն համակրում էր դեկաբրիստների գաղափարները. նրանց հետ անձնական ծանոթություն ուներ։ Ձերբակալված դեկաբրիստների մոտ գտնվեցին Պուշկինի ազատասիրական — հակացարական բանաստեղծությունները։ Շատ բնորոշ է հետևյալ փաստը.

Դեկաբրիստների ապստամբությունը ճնշվելուց հետո, 1826 թվի սեպտեմբերի 8-ին Նիկոլայ I ցարը կանչել է տալիս Պուշկինին և հարցնում.

— Պուշկին, դեկտեմբերի 14-ին յեթե Պետերբուրգում լինեիր, կմասնակցեիր ապստամբությանը։

Պուշկինն առանց շփոթվելու պատասխանում է.

— Անպայման, թագավոր։ Իմ բոլոր ընկերները դավադրությանը մասնակից էին, յես չեյի կարող չմասնակցել։ Միայն իմ բացակայությունը փրկեց ինձ։

Դեկաբրիստների նկատմամբ Պուշկինի ունեցած ջերմ համակրանքը ցայտուն կերպով յերևում է նրա «Ախտարյալ դեկաբրիստներին» վոգեշունչ բանաստեղծությունից։ Այդ բանաստեղծությունը գրված է 1827 թվի հունվարին։ Պուշկինի կենդանության որոք չի տպագրվել։ Պուշկինին պատասխանեց դեկաբրիստ Ալեքսանդր Ոդոևսկին՝ նույնպես վոգեշունչ մի բանաստեղծությամբ.

Դուշակող լուրերի հնչյուններն հրավառ
Հասան մեր ականջին ղողանջով քաղցրաբառ,
Դեպի սուբ շարժվեցին մեր ձեռքերն շտապով,
Բայց նրանք քերծվեցին շղթայի յերկաթով։
Սակայն մի հուզվիր դու, ով գուսան վոգելից,
Շղթայով—մեր բախտով—հպարտ ենք այստեղ մենք,
Ծավարտչին մեր բանտի փականքի յեռանից
Մեր հոգում ծաղրում ենք ցարերին չարանենգ։
Չի կորչի ապարդյուն մեր ջանքը տանջալից,

Կալծերից հրդեհներ կժայթքեն լուսարձակ,
Ու համայն ժողովուրդ լուսավոր, դիտակից
Մի մեծ որ կխմբվի արնավառ դրոշի տակ։
Մեր ամուր շղթայից մենք սրեր կձուլենք
Ցեվ կրկին կվառենք ջահը մեր փրկութեան,
Նա ահեղ կթնդա ցարերի գլխներին,
Ու ազատ կշնչե ժողովուրդը համայն։

(Թարգմ. Դ. Եմիրճյանի)

«Աքսորյալ դեկաբրիստներին» բանաստեղծության շարքին են պատկանում նաև «Զաադաևին», «Ազատություն», «Դաշույն» բանաստեղծությունները, որոնց մեջ յերևում է Պուշկինի բողոքող, ըմբոստ, ազատասեր վոգին։

Պուշկինն աքսորավայրում գրած բանաստեղծությունների մեջ յերգում է ազատությունը։ Այդ բանաստեղծություններից են այս ժողովածուում զետեղված «Կալանավորը» յեվ «Թռչնիկը»։ Առաջինը գրված է Քեշինևում (Բեսարաբիա) 1822 թվին։ Աքսորականի իր վիճակը Պուշկինը նմանեցրել է դերի արծվի վիճակին։ Ցարական անվերջ հալածանքներից զզված, Պուշկինն ազատություն էր տենչում։ Ազատասիրական նույն զգացմունքն է արտահայտված նաև «Թռչնիկ» բանաստեղծության մեջ, որը գրված է 1823 թվին Ոդեսայում։ Բանաստեղծությունը տպագրվում է նույն թվի ողոստոսին «գրական թերթիկներ»-ում։ Խմբագրերը, հետագայում, ցարական գրող Բուլգարինը մի ծանոթագրությամբ աշխատում է քողարկել, ծածկել Պուշկինի բանաստեղծության ազատասիրական վոգին, որով մեծ բանաստեղծը բողոքում էր իր անազատ, աքսորականի վիճակի դեմ։

Թե «Կալանավորը», թե «Թռչնիկը» հայերեն առաջին անգամ թարգմանել է Ալեքսանդր Ծատուրյանը («Ռուս բանաստեղծներ», առաջին դրքույկ, 1905, եջ 25 և 26)։

Պուշկինն առանձնապես սիրել է Կովկասի փարթամ, գեղեցիկ բնությունը, լեռները, բարձր ու կապուտակ յերկինքը, խռովահույզ ջրվեժներն ու արագահոս գետերը, շառաչող անտառները։ Կովկասի կյանքն ու բնությունը Պուշկինը պատկերել է իր մի շարք ստեղծագործությունների մեջ—«Կովկասի գերին» պոեմում, «Կովկաս», «Դեղիբաշ», «Նժույգ» և այլ բանաս-

տեղծություններում։ Հիշյալ չերեք բանաստեղծություններն էլ գրված են 1829 թվին, չերբ չեկել եր Կովկաս։

Կովկասյան շարքի պոեմների և բանաստեղծությունների մեջ Պուշկինն արտահայտում է մեծ սեր դեպի բնությունը, ազատասիրության բուռն տենչ։ Պարզ, դուռնեղ պատկերները, թեթև ու դինամիկ հանգերը հատուկ են նաև այդ բանաստեղծություններին։

Սիրելով ժողովրդական կյանքն ու ժողովրդական բանաստեղծությունը, Պուշկինն իր չերգերի, պոեմների ու հեքյաթների համար հաճախ նյութ եր ընտրում ժողովրդական այս կամ այն հեքյաթը, ավանդությունը։

«Ոլեգի չերգ»-ի նյութը Կարամզինի «Ռուս կայսրության պատմություն» գրքի առաջին գլխի մեջ չեղած պատմական ավանդություն է։ «Ոլեգի չերգը» Պուշկինը գրել է 1822 թվին։

Ժողովրդական բանահյուսությունից նյութ վերցնելով, Պուշկինը 1828 թվին գրեց իր մի ուրիշ գեղեցիկ ավանդությունը՝ «Ջրահեղձը»։

«Ճմեռվա իրիկունը» բանաստեղծության մեջ Պուշկինը պատկերել է ռուսական գյուղի ճմռան չերեկոն։— Ձյան բուք, հին, մութ ու տխուր խրճիթում լսվում է պառավի իլիկի միալար բզզոցը. կարիքի ծանր բեռի տակ կքած գյուղացին դարպից ողի չե խմում։

«Ճմեռվա իրիկունը» գրված է Պուշկինի հայրենական Միխայլովսկոյե գյուղում, 1825 թվին։ Բանաստեղծության պատավը Պուշկինի դայակն է՝ Արինա Ռոդիոնովնան։

«Ոլեգի չերգը», «Ջրահեղձը, և «Ճմեռվա իրիկունը» թարգմանել է Հովհ. Թումանյանը։ Նա իր թարգմանությունների մեջ հարազատ է մնացել Պուշկինի ստեղծագործությանը, նրա վրդունն Հովհ. Թումանյանը հայ ընթերցողին հաղորդակից է արել Պուշկինի թե զգացմունքներին, թե դունագեղ պատկերներին և թե ընդվի վճիտ պարզությանը։

Պուշկինն առանձին սիրով ու մտերմությամբ է կապված չեղել իր դայակի՝ Արինա Ռոդիոնովնայի հետ։ Պուշկինի մանկության և պատանեկության որերին, ինչպես նաև հետո, չերբ Պուշկինը գյուղ եր դնում, դայակը նրան հեքյաթներ ու լեգենդներ եր պատմում, վոր Պուշկինը մեծ հաճույքով եր լսում։ Նա իր ամ-

ողջ կյանքում միշտ սիրով և հիշել իր դայակին։ Դեպի դայակն ունեցած իր ջերմ զգացմունքները մեծ բանաստեղծն արտահայտել է ինչպես «Ջմեռվա իրիկունը», նույնպես և, հատկապես դայակին նվիրած մի բանաստեղծության մեջ («Դայակին»)։ Իր նամակներից մեկում Պուշկինը դայակի մասին գրում է. «Դայակս Տատյանայի («Եվգենի Ոնեգին» պոեմի հերոսուհին) դայակի որիգինալն է. նա իմ միակ բարեկամուհին և միայն նրա հետ կես չեմ ձանձրանում»։

«Եվգենի Ոնեգինը» Պուշկինի պոեմներից ամենամեծն է և համարվում է նրա գլուխ գործոցը։ Պուշկինն ինքը շատ է սիրում իր այդ պոեմը։

«Եվգենի Ոնեգինը» Պուշկինն սկսել է գրել 1823 թվի մայիսի 28-ին Քիշինևում և ավարտել է 1831 թվի հոկտեմբերի 3-ին Ցարսկոյե Սելոյում։

«Եվգենի Ոնեգին» պոեմում Պուշկինը մեծ վարպետությամբ նկարագրում է ռուս արիստոկրատիայի կյանքը XIX դարի առաջին քառորդում։

Պոեմի համառոտ բովանդակությունն այս է. «Ծերիտասարդ կալվածատեր Ոնեգինը սիրահարվում է հարևան կալվածատիրոջ աղջկան՝ Տատյանային և ջերմորեն սիրվում է նրանից։ Ոնեգինի ընկերը, երիտասարդ պոետ Լենսկին սիրում է Տատյանայի քրոջը՝ Ոլգային։ Մի անգամ, պարահանդեսի ժամանակ, Ոնեգինն ամբողջ երեկոն Ոլգայի հետ է անցկացնում։ Այս բանը Լենսկու մեջ կասկած է առաջացնում՝ չլինի, թե Ոնեգինն ուզում է Ոլգային իրենից խլել։ Խանդից կուրացած, նա Ոնեգինին մենամարտի է հրավիրում։ Մենամարտում սպանվում է Լենսկին։ Ոլգան ուրիշի հետ է ամուսնանում։ Ոնեգինն իր սառը վերաբերմունքով հեռու է վանում Տատյանային։ Վերջինս ամուսնանում է մի գեներալի հետ, չնայած սրտի խորքում սիրում էր Ոնեգինին։ Ծերկար անջատումից հետո մի հանդիպումից հետո Ոնեգինը կրկին տեսնում է Տատյանային. հին սերն արթնանում է նրա մեջ։ Սկսում է հետապնդել Տատյանային, նրան նամակներ է գրում։ Սակայն Տատյանան հավատարիմ մնալով իր ամուսնությանը, մերժում է Ոնեգինին։

Այս ժողովածվում զետեղված հատվածները բերված են «Եվգենի Ոնեգինի» չորրորդ, հինգերորդ և վեցերորդ գլուխներ-

րից։ Այդ գլուխները Պուշկինը գրել է Միխայլովսկոյե գյուղում՝ 1825, 1826 և 1827 թվերին։

«Ցեվգենի Ոնեգինի» նշանակությունը շատ մեծ է ռուս գրականության համար։ Այդտեղ ռեալիստական վարպետ գրչով տրված է ռուս արիստոկրատիայի կյանքը-կենցաղը։ Հանճարեղ ռուս քննադատ Բելինսկին իրավամբ «Ցեվգենի Ոնեգին»-ն անվանել է «ռուսական կյանքի հանրագիտարանը»։

ԱՐՁԱԿ ԵՋԵՐ

Պուշկինի ստեղծագործության մեջ նշանակալից տեղ է բռնում նրա գեղարվեստական արձակը։ Պուշկինն հիմք էր դրել ռուսական ռեալիստական վիպագրությանը, որն ամենառաջնակարգ տեղն է բռնում ընդհանուր գրականության մեջ։

Պուշկինի գեղարվեստական արձակը մեծ ազդեցություն է գործել ռուս խոշոր գրողների՝ Տուրգենևի, Դոստոևսկու, Տոլստոյի վրա։ Ռուս վիպագրության այդ յերեք վարպետներն էլ հիացմունքով են խոսել Պուշկինի արձակի մասին։

Պուշկինի գեղարվեստական արձակի առաջին լուրջ փորձը «Պետրոս Մեծի Արապն» է, որն անավարտ մնաց։

1829 թվին Կովկասում Պուշկինն սկսում է գրել իր ճանապարհորդական տպավորությունները՝ «Ճանապարհորդություն դեպի Արզրում» վերնագրով, որն ավարտում է 1835 թվին։

Ներկա ժողովածուում զետեղված է «Ճանապարհորդություն դեպի Արզրում»-ի II գլխի մի մասը, որի մեջ տրված է Թիֆլիսից — Ղարս ընկած վայրերի ու պատահած դեպքերի նկարագրությունը։ Այդ գլխի մեջ Պուշկինը պատկերում է իր հանդիպումը դրամատուրգ Գրիբոյեդովի դիակին։

1830 թվին և հետագա տարիներին, մինչև իր մահը, Պուշկինը գրել է իր արձակ գործերի մեծագույն մասը — «Հանդուցյալ Իվան Պետրովիչ Բելկինի պատմվածքները» (1830), «Դուբրովսկի» (1832—1833), «Կիրջալի» (1834), «Եգիպտական գիշերները» (1835), «Կապիտանի աղջիկը» (1833—1836)։

Այս ժողովածուում զետեղված «Փոստակայանի վերակացուն»

պատմվածքը Պուշկինի «Հանգուցյալ Իվան Պետրովիչ Բելկինի պատմվածքները» շարքի հինգ պատմվածքներից մեկն է (Պուշկինն այդ պատմվածքները պատմում է այնպես, իբր հեղինակը Բելկինը լինի։ Դա վիպագրական մի ձև է)։

«Փոստակայանի վերակացուն» հայերեն լեզվով տպվում է առաջին անգամ այս ժողովածվում։

«Կապիտանի աղջիկը» վիպակը, որի II գլխից մի հատված բերվում է այստեղ, Պուշկինի գլուխ գործոցներից մեկն է։

Այստեղ ևս, ինչպես «Բելկինի պատմվածքներում», հեղինակը պատմում է մի ուրիշի բերանով։ Պատմողը Գրինյովն է, վիպակի հերոսներից մեկը։ Համառոտ բովանդակությունն այս է.

Գրինյովը,— մի կալվածատերի տղա,— իր դաստիարակ և սպասավոր Սավելիչի ուղեկցությամբ գնում է զինվորական ծառայության Բելոգորսկայա ամրոցը։ Այստեղ նա սիրահարվում է հիշյալ ամրոցի կամենդանտ կապիտան Միրոնովի աղջկան՝ Մարիա Իվանովնա Միրոնովային։ Ականատես է լինում Պուգաչովյան ապստամբությանը։ Բելոգորսկայա ամրոցը գրավելու ժամանակ Պուգաչովը ազատում է Գրինյովին այն բանի համար, որ Գրինյովը նրան եր նվիրել իր մուշտակը։ Հետագայում Գրինյովը կառավարության կողմից ձերբակալվում է՝ մեղադրվելով Պուգաչովի հետ կապ ունենալու, նրան ոգնելու մեջ։ Կապիտանի աղջիկը, Գրինյովի հարսնացուն՝ Մարիան դիմում է Եկատերինա II կայսրուհուն։ Գրինյովը ազատվում է և ամուսնանում կապիտանի աղջկա՝ Մարիա Իվանովնա Միրոնովայի հետ։

«Կապիտանի աղջիկը» վիպակում Պուշկինը հանճարեղ վարպետությամբ պատկերել է Եկատերինա II կայսրուհու տիրապետության և Պուգաչովյան ժամանակաշրջանի Ռուսաստանի կյանքը։

«Կապիտանի աղջիկը» գրելու համար Պուշկինը երկար ժամանակ ուսումնասիրել է պատմական աղբյուրները, նյութեր և հավաքել, ճանապարհորդել է։ Մինչև անգամ գրել է «Պուգաչովի պատմությունը» պատմական ուսումնասիրությունը։

Այս ժողովածվում տրված հատվածը «Կապիտանի աղջիկը» վիպակի յերկրորդ՝ «Առաջնորդը» գլխից է, որտեղ նկարագրված է, թե ինչպես Գրինյովն ու իր դաստիարակ Սավելիչը հանդիպում են Պուգաչովին։

Ցեթե չհաշվենք Կարամզինի գեղարվեստական տեսակետից թույլ արձակը, ապա կարելի յե ասել, որ պրոզայի մեջ Պուշկինը նախորդները չուներ։ 1820 ական թվականների սկզբին Պուշկինը գրում է.

«Մեր պրոզան այնքան քիչ է մշակված, որ հասարակ թղթակցության մեջ ամենասովորական հասկացողությունները բացատրելու համար ստիպված ենք բանաձևեր ստեղծելը։

Այսպիսով Պուշկինը հանդիսանում է նաև ռուս գեղարվեստական արձակի հիմնադիրը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՀԵՔՅԱԹՆԵՐ

Եջ

Հեքյաթ Սալթան արքայի, նրա որդի, փառապանծ և հզոր դյուցազն իշխան Գվիդոն Սալթանիչի և գեղեցկուհի արքայադուստր Կարապի մասին. Թարգմ. Հռ. Պողոսյան . . . 5
Տերտերն ու իր Բալդի ծառան. Թարգմ. Ար. Խնկոյան . . . 41
Ոսկի ձկնիկ. Թարգմ. Ղազ. Աղայան . . . 53
Քնած դշխուհին և յոթ քաջերը. Թարգմ. Ար. Խնկոյան . . . 67
Հեքյաթ ոսկի աքլորիկի մասին. Թարգմ. Հռ. Պողոսյան . . . 89

II ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չաադայևին. Թարգմ. Ալ. Ծատուրյան . . . 101
Գյուղ. Թարգմ. Հ. Մազմանյան . . . 102
Ոլեգի յերգը. Թարգմ. Հովհ. Թումանյան . . . 106
Թռչնիկ. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 110
Ձմեռվա իրիկուն. Թարգմ. Հովհ. Թումանյան . . . 111
Ձմռան ճամփա. Թարգմ. Հ. Տ. Ավագյան . . . 113
«Եվգենի Ոնեգին»ից. Թարգմ. Հռ. Պողոսյան . . . 115
«Եվգենի Ոնեգին»ից. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 117
«Եվգենի Ոնեգին»ից. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 118
Աքսորյալ դեկաբրիստներին. Թարգմ. Դեր. Դեմիրճյան . . . 120
Ջրահեղձը. Թարգմ. Հովհ. Թումանյան . . . 121
«Ռուսլան և Լյուդմիլա»-ից. Թարգմ. Ար. Խնկոյան . . . 124
Ձի. Թարգմ. Գրաչի . . . 126
Դելիբաշ. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 128
Կովկաս. Թարգմ. Ալ. Ծատուրյան . . . 131
Դոն. Թարգմ. Գրաչի . . . 132
Սատանաները. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 135
Նժույգը. Թարգմ. Հռ. Պողոսյան . . . 136
Ամպ. Թարգմ. Սող. Տարոնցի . . . 137
Դայակին. Թարգմ. Գեղամ Սարյան . . . 138
Հուշարձան. Թարգմ. Նայիրի Զարյան . . . 139

III ԱՐՁԱԿ ԵԶԵՐ

Մի հատված «Ճանապ. դէպի Արզրում» գրքից. Թարգմ. Մ. Գեվորգյան . 141
Բուքը «Հայափառնի աղջիկը» վեպից. Թարգմ. Ս. Սուխատյան . . . 156
Փոստակայանի վերակացուն Թարգմ. Հ. Տ. Ավագյան 160
Դատաղատրծը. Թարգմ. Հ. Տ. Ավագյան 178

IV ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեքյաթներ. Ա. Ղանալանյան 193
Գուշկինի հեքյաթները հայ գրողների թարգմանությամբ. Ա. Ղանալանյան 198
Բանաստեղծություններ. Ա. Իճճիկյան 202
Արձակ էջեր. Ա. Իճճիկյան 208

Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Պոլիգրաֆիական հսկողությունը՝ Մ. Եփրիկի
Սրբագրիչներ՝ Հ. Դոլուխանյան, Հ. Մանուկյան

Գիրքը շարված, տպագրված և կազմված է Պետհրատի տպարանում, Երևան, II Կնունյանցի, 4
Գրքի և եռագույն նկարների տպագրությունը կատարվել է Ա. Բաբայանի ղեկավարությամբ։ Շարվածքը ղեկավարել է Ռ. Նշանյանը։ Եռագույն կլիշե-ները պատրաստել են ցինկոգրաֆ Հ. Մինասյանի ղեկավարությամբ։ Լիտոգ-րաֆիական նկարիչ Ն. Դանչ։ Կազմի աշխատանքները ղեկավարել են Ս. Լա-թոյան և Գր. Քանքանյան։

Պատվեր 52, Հրատարակչ. 3971, Գլավլիտի լիազոր Կ—4510, Տիրաժ 6000



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0015127

ЦЕНА
11037